

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

հ — — — — —

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ Է



Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՈՒՐՎԱԳԻԾ)

Պրակ Ա.

V—XVIII դարեր

A⁷
35410





Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ


**ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

(ՈՒՐՎԱԳԻԾ)

Պրակ Ա.

V—XVIII դարեր

A $\frac{7}{35410}$



Խմբագիր՝ պրոֆ. դոկ. Ա. Գ. Աբրահամյան

**Государственная республиканская библиотека
Арм. ССР им. Ал. Мясникяна**

Р. ИШХАНИЯН

История армянской библиографии

(Очерк)

Вып. I.

**Редактор: проф. док. А. Г. Абрамян
Ереван, 1964**

Մ Ո Ւ Տ Ք

Ձափազանց հետաքրքիր է և ուսանելի հայկական մատենագիտության պատմությունը, որ հայ մշակույթի պատմության մի կարևոր մասն է: Հեռավոր դարերից է գալիս հայկական մատենագիտությունը. նրա տարբեր դրսևորումներին հանդիպում ենք հայ ժողովրդի պատմության պայծառ ու մթամած, խաղաղ ու արյունոտ գրեթե բոլոր քառուղիներում:

Ներկա աշխատանքով նպատակ ենք դրել անդրադառնալ հայ մատենագիտության անցած ուղուն, խոսել նրա ակունքների և զարգացման կարևոր շրջանների մասին, փորձել գնահատական տալ հայ նշանավոր մատենագետների աշխատանքին:

Բայց նախքան այդ հարկ է երկու խոսք ասել ընդհանրապես մատենագիտություն առարկայի մասին: Բանն այն է, որ մեր օրերում թեև մատենագիտությունը հաստատորեն թափանցել է գիտության անխտիր բոլոր բնագավառները, այնուամենայնիվ դեռ քիչ չեն տարակարծություններն ու վեճերը այդ առարկայի սահմանների, մանավանդ հայերեն մատենագիտություն անվանման և ըմբռնման շուրջը:

Այս բառը, որ անցյալ դարի 80-ական թվականներից հայերենում հաստատվեց և սկսեց օգտագործվել հունական ծագում ունեցող բիբլիոգրաֆիայի (bibliographie, библиография) դիմաց, մի ժամանակ ասպարեզից հանվեց և միայն վերջերս նորից շրջանառության մեջ մտավ:

Մատենագիտության տակ այսօր հիմնականում շարունակում է հասկացվել բիբլիոգրաֆիան իր բոլոր առումներով,

Խմբագիր՝ պրոֆ. դոկ. Ա. Գ. Աբրահամյան

**Государственная республиканская библиотека
Арм. ССР им. Ал. Мясникяна**

Р. ИШХАНИЯН

История армянской библиографии

(Очерк)

Вып. 1.

**Редактор: проф. док. А. Г. Абрамян
Ереван, 1964**

Մ Ո Ւ Տ Ք

Չափազանց հետաքրքիր է և ուսանելի հայկական մատենագիտության պատմությունը, որ հայ մշակույթի պատմության մի կարևոր մասն է: Հեռավոր դարերից է գալիս հայկական մատենագիտությունը. նրա տարբեր դրսևորումներին հանդիպում ենք հայ ժողովրդի պատմության պայծառ ու մթամած, խաղաղ ու արյունոտ գրեթե բոլոր քառուղիներում:

Ներկա աշխատանքով նպատակ ենք դրել անդրադառնալ հայ մատենագիտության անցած ուղուն, խոսել նրա լակունքների և զարգացման կարևոր շրջանների մասին, փորձել գնահատական տալ հայ նշանավոր մատենագետների աշխատանքին:

Բայց նախքան այդ հարկ է երկու խոսք ասել ընդհանրապես մատենագիտություն առարկայի մասին: Բանն այն է, որ մեր օրերում թեև մատենագիտությունը հաստատորեն թափանցել է գիտության անխտիր բոլոր բնագավառները, այնուամենայնիվ դեռ քիչ չեն տարակարծություններն ու վեճերը այդ առարկայի սահմանների, մանավանդ հայերեն մատենագիտություն անվանման և ըմբռնման շուրջը:

Այս բառը, որ անցյալ դարի 80-ական թվականներից հայերենում հաստատվեց և սկսեց օգտագործվել հունական ծագում ունեցող բիբլիոգրաֆիայի (bibliographie, библиография) դիմաց, մի ժամանակ ասպարեզից հանվեց և միայն վերջերս նորից շրջանառության մեջ մտավ:

Մատենագիտության տակ այսօր հիմնականում շարունակում է հասկացվել բիբլիոգրաֆիան իր բոլոր առումներով:

Սակայն հայերեն մատենագիտություն¹ անվանումը փոքր-ինչ ավելի լայն ըմբռնում ունի, քան որոշ լեզուներում տարածում գտած բիրլիոգրաֆիա-ն:

Հինգերորդ դարում այն գործածված է մատենագետ ձեվով, որ նշանակել է «գիտակ մատենից և դպրութեանց» (սնոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837): Ահա այսօր էլ հայերեն մատենագիտություն-ը և մատենագետ-ը ինչ-որ չափով շարունակում են պահպանել նաև այդ նախնական իմաստը, այսինքն՝ գիրք իմանալը, ճանաչելը², որ չեղարկած չէ բիրլիոգրաֆիա և բիրլիոգրաֆ անվանումների մեջ:

Ասենք նաև, որ բիրլիոգրաֆիա անվանման ընդգրկումը տարբեր ժամանակ տարբեր մարդկանց կողմից միատեսակ չի ըմբռնվել: Նույնիսկ մի տասը տարի առաջ որոշ քննադատներ (օրինակ պրոֆ. Բ. Կոզմինը) մեղադրում էին ուսուցիչ-նավոր մատենագետ Ն. Զդորնովին, որ նա իր «История русской библиографии» աշխատության մեջ շատ լայն է ըմբռնում «библиография»-ն, մյուս կողմից ուրիշները (ինչպես՝ պրոֆ. Պ. Բերկովը) պաշտպանում էին և հիմնավորում Զդորնովի այդ ըմբռնումը³:

1 Ժամանակին բիրլիոգրաֆիա բառի դիմաց փորձել են գործածել մատենախոսություն, մատենագրություն և այլ բառեր, բայց ամենահարմարը եղել է մատենագիտություն-ը: Ոմանք մինչև այժմ էլ առարկում են այս անվանման դեմ, գերադասելով բիրլիոգրաֆիայի բառացի թարգմանություն մատենագրություն-ը՝ մոռանալով, որ մատենագրություն բառը հայերենում վաղուց ի վեր նշանակում է գրականություն, (այժմ՝ հին գրականություն): Այդ մարդիկ մոռանում են նաև, որ բիրլիոգրաֆիա բառն էլ, որը բառացի նշանակում է գիրք գրել պայմանական անվանում է իր ներկայացրած առարկայի համար (որ գիրք գրել չէ): Մատենագիտություն անվանումը հայերենում հրաշալի կատարել է և շարունակում է կատարել իր դերը: (Այս անվանման մասին տե՛ս «Մատենագիտություն հայկական մատենագիտության» Եր., 1963, էջ 27—31):

2 Այս գեպում բառի երկրորդ «գիտություն» բաղադրիչը «իմացություն» նշանակությունն է ունենում:

3 Այդ հարցերի մասին տե՛ս «Известия АН СССР», отд. лит. и языка, 1948, т. 7, вып. 4, էջ 351—358, «Советская книга», 1948, № 7, էջ 102—106:

Վերջերս հայերեն մասնագիտական գրականության մեջ մատենագիտություն առարկայի մի քանի բնորոշումներ տրվեցին և բոլոր դեպքերում՝ ճիշտ, Համառոտակի ամփոփենք, թե ինչ ենք հասկանում այսօր այդ անվանման տակ:

Մատենագիտություն ասելով ամենից առաջ հասկանում ենք գրքերի, պարբերականների, հոդվածների և այլ բնույթի տպագիր կամ ձեռագիր նյութերի մասին տարբեր կարգի տեղեկություններ տվող ձեռնարկներ, գլխավորապես ցուցակներ, ցանկեր կամ ցուցակային բնույթ ունեցող ուղեցույցներ և տեսություններ (օճօրս): Կարող են դրանք լինել զուտ արձանագրական գրացանկեր, կարող են մանրամասն ծանոթագրված լինել, կարող են ունենալ այբբենական, ժամանակագրական, ըստ բովանդակության և հնարավոր այլ կառուցվածք և այլն: Բազմաթիվ են ու բազմազան մատենագիտական տեղեկատվության տեսակները, բայց էությունը մեկ է՝ տեղեկանք տալ գրքի, հոդվածի, պարբերականի և գրական այլ նյութերի մասին:

Այս իմաստով, երբեմն մատենագիտական արժեք են ստանում այնպիսի երկեր, որոնք նախապես՝ տեղեկատվության նպատակով չեն գրվել, բայց տալիս են վերոհիշյալ բնույթի տեղեկանքներ: Այդպիսիք են ձեռագիր կամ տպագիր գրքի և մամուլի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները, ինչպես ասենք Լեոյի «Հայկական տպագրություններ», Գ. Զարբանալյանի «Պատմություն հայկական տպագրությանը», Ա. Նրիցյանի, Թեոդիկի, Գ. Լևոնյանի, Գ. Գալմբյարյանի, Գ. Հովսեփյանի և շատ ուրիշների այդ բնույթի աշխատությունները:

Պետք է նկատի ունենալ, որ առհասարակ ամեն մի գիտական ուսումնասիրություն սկսում է մատենագիտությամբ: Մատենագիտությունը սկիզբն է և հիմքը ամեն մի գիտական աշխատանքի: Այսօր կա՞ արդյոք մի լուրջ պատմաբան կամ ֆիզիկոս, գրականագետ կամ մաթեմատիկոս և կամ որևէ այլ մասնագիտության գիտնական, որը իրեն զրադեցնող հարցի ուսումնասիրությունից առաջ, նախապես տեղեկություններ չի հավաքում այդ հարցի մասին արդեն եղած գրա-

կանության վերաբերյալ: Անշուշտ, այդպիսի գիտնական և այդպիսի գիտություն չի լինում: Այստեղից եզրակացություն, որ մատենագիտական աշխատանքով առավել կամ պակաս զբաղվում է ամեն մի լուրջ ուսումնասիրող:

Սակայն որևէ աշխատություն մատենագիտական արժեք ստանում է այն ժամանակ միայն, երբ բացի իր հիմնական դերից մատենագիտական տեղեկատվի լուրջ դեր էլ է կարողանում կատարել, երբ այդպիսի աշխատությանը մարդիկ դիմում են նաև իբրև զրբերի կամ այլ գրական երկերի մասին տեղեկություններ տվող աղբյուրի:

Այսպես լայնանալով մատենագիտության նշանակությունը ավելի ու ավելի է մոտենում այդ անվանման նախնական իմաստին, որը գիրք իմանալն է, գիրք գլխեկալը:

Հայ իրականության մեջ անցյալում մասնագետ մատենագետներ շատ չեն եղել, բայց մի՞թե բառի ամենախոր իմաստով մատենագետներ չեն եղել մեր շատ նշանավոր բանասերները՝ խոշորագույն հայ լեզվաբանները, գրականագետները, պատմաբանները, որոնց երկասիրությունները կարգալիս դժվար չէ նկատել, թե ինչպիսի հսկայական քանակությամբ գրականություն են նրանք օգտագործել, որքան մեծ է եղել նրանց մատենագիտական պաշարը: Այդ գիտություններից շատերը հատկապես զբաղվել են նաև մատենագիտություն կազմելու աշխատանքով, ստեղծել են մատենագիտական առաջնակարգ աշխատություններ, մասնավորապես՝ ձեռագրա-ցուցակներ:

Այնուհետև, մատենագիտության տակ այժմ հասկացվում է նաև մատենագիտական բանավոր կամ գրավոր տեղեկանքներ տալը: Մատենագիտությունը միայն գրավոր չի լինում, այն լինում է նաև բանավոր: Ներկայիս գրադարանների, գրապալատների պարտականությունների մեջ է մտնում նաև քնթերցողների մատենագիտական բանավոր սպասարկումը, որի համար խոշոր գրադարաններում օտեղծվում են հատուկ տեղեկատու բաժիններ՝ իրենց առձեռն տեղեկատու գրականությամբ:

Մատենագիտության տակ ներկայումս հասկացվում է նաև գրախոսություն, որ նույնպես, փոքր վերապահումով, հիմնավոր է: Մատենագիտության ոլորտի մեջ մտնում է ինչպես գրական երկերի նկարագրումը (հեղինակ, վերնագիր, հրատարակման տվյալներ և այլն), այնպես էլ գրքի բովանդակության մասին տեղեկություններ հաղորդելը և գրքի գնահատական տալը: Այս կարգի տեղեկանքները կարող են տրվել համառոտ կամ ընդարձակ ցուցակներում ու տեսություններում, ինչպես նաև մեկ կամ մի քանի նոր հրատարակված երկի մասին որևէ պարբերականի էջերում, իբրև գրախոսություն: Եվ այստեղ էլ մատենագիտությունը շփվում, իր մի մասով ձուլվում է գրաքննադատության հետ:

Ի վերջո, մատենագիտություն ասելով այժմ հասկանում ենք նաև մատենագիտական աշխատանքի տեսությունը, այս-ինքն՝ տեսություն այն մասին, թե ինչպիսի մատենագիտական ցանկեր են լինում, ինչպես են կազմվում դրանք, նրանցում ինչպես պետք է նկարագրել ու բնութագրել գրական երկերը, ինչպես է կազմակերպվում ընթերցողների մատենագիտական սպասարկումը և այլն:

Ահա մի ժողովրդի մատենագիտության պատմությունը պետք է ընդգրկի այս կարգի բոլոր հարցերը:

Ի՞նչ ենք հասկանում հայ կամ հայկական մատենագիտությունը ասելով: Դրա տակ կարելի է հասկանալ և տարբեր մարդիկ հասկանում են. ա) Հայաստանում ստեղծված մատենագիտություն (որևէ լեզվով), բ) Հայաստանում հրատարակված գրականության (տարբեր լեզուներով) մատենագիտություն, գ) հայերի ու Հայաստանի մասին եղած (տարբեր լեզուներով) գրականության (հայագիտական) մատենագիտություն, դ) հայերեն լեզվով կազմված, բայց այլ լեզուներով նյութեր ընդգրկող մատենագիտություն, ե) հայերեն լեզվով եղած գրականության մատենագիտություն և զ) այս բոլորը միասին:

Մենք հայկական մատենագիտության տակ ամենից առաջ հասկանում ենք հայերեն լեզվով եղած (ինքնուրույն և

թարգմանակամ) գրականություն մատենագիտությունը, մատենագիտությունը, թվում է, պայմանով կարելի է կոչել այդ անունով:

Գիտության բազմազան ու նորանոր ճյուղերի զարգացումը մեր նրկրում առաջադրում է մատենագիտական աշխատանքի ճիշտ ու նպատակասլույս կազմակերպում: Այդ ուղղությամբ նշանակալի աշխատանք կատարված է: Ավելի ու ավելի մեծ ուղղություն է արժանանում մատենագիտություն առարկան, լուրջ հետաքրքրություն է առաջ բերում նաև մատենագիտության անցյալը: Գրվել ու գրվում են խորհրդային Միության տարբեր ժողովուրդների մատենագիտության պատմություններ:

Այժմ աշխարհի շատ ժողովուրդներ ունեն իրենց մատենագիտության պատմություններ նվիրված աշխատություններ, հաճախ բավական ստվարածավալ:

Ասել, թե հայ մատենագիտության պատմությանը ուսումնասիրություններ չեն նվիրվել, ճիշտ չի լինի, թեև հատկապես այս անունով անանձին աշխատություն մեզ հայտնի չէ:

Հայ գրավոր մշակույթի հարցերով զբաղվող ամեն մի բանասեր պետք է առնչվեր մեր անցյալի մատենագիտությանը: Այդ իմաստով հայ ժողովրդի անցյալ կյանքին (այդ թվում անցյալի հայ գրականությանը, փիլիսոփայությանը, մանկավարժությանը և այլն) նվիրված աշխատություններում քիչ չեն ակնարկներ, հատվածներ, էջեր, որոնք մեր անցյալի մատենագիտության պատմությանն են վերաբերում: Որոշ հեղինակների մոտ ավելի ծանրակշիռ և մեծ ծավալով է տրված հայ մատենագիտության պատմության այս կամ այն դրվագը: Կարելի է հիշել, օրինակ, Ղ. Ալիշանի, Գ. Զարբհալյանի, Հ. Տաշյանի, Լեոյի, Գ. Գալեմբյարյանի, Կ. Տեր-Մկրտչյանի, Գ. Հովսեփյանի, Թեոդիկի, Մ. Տեր-Մովսիսյանի, Ն. Ալինյանի, Հ. Ոսկյանի աշխատությունները (տե՛ս օգտագործված գրականության ցանկը), որոնցում բազմաթիվ կարևոր հարցեր են արծարծված: Հայ մատենագիտության պատմությունը:

թվականը (ինչպես և հետագային՝ սիյուդում), իսկ Գ-
խորհրդային հայ մատենագիտության պատմությունը:

Առիթն օգտագործելով ուզում ենք ջերմագին շնորհակա-
լություն հայտնել Ալ. Մ'յասնիկյանի անվան հանրապետակա-
գրադարանի ղեկավարությանը մեր այս աշխատանքի Ա պրա-
կը հրապարակելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ V—VIII ԴԱՐԵՐՈՒՄ

ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

Մատենագիտություն կարող է լինել այնտեղ, ուր կա գիր, գրականություն, գրադարան, քանի որ մատենագիտությունը գրականության ուղեցույց է, տեղեկատու:

Հայաստանում հայտնի հնագույն գիրը բևեռագիրն է (այսպես կոչված, ուրարտական գիրը), ինչպես և գաղափարագիրը (հիերոգլիֆ): Հայաստանի հողում դեռևս չի հայտնաբերվել բևեռագրերի գրադարան, թեև այդպիսի գրադարանի կամ գրադարանների գոյությունը միանգամայն հավանական է: Գուցե մի օր գտնվի նման մի բան, այնպես, ինչպես լույս աշխարհ եկավ Նինվեի գրադարանը (մ.թ.ա. VII դարից) իր ավելի քան 1000 սեպագիր աղյուսե-գրքերով ու մանավանդ գրացուցակի մնացորդներով, գրացուցակ, որ հնագույն շրջանի մատենագիտական աշխատանքի արգասիք է:

Անհիշելի ժամանակներից հայկական բարձրամակարդակում ապրող հայ (այսինքն, հայախոս) ցեղախմբերը, ապա հայ ժողովուրդը (ինչպես և ամեն մի ժողովուրդ) միշտ էլ ունեցել է մշակութային կյանք: Միայն դեռևս այնքան էլ շատ չեն հայտնաբերվել հայկական այդ հնագույն մշակույթը ներկայացնող իրային փաստերը: Բացի այդ, հայերի դարավոր բնակավայրի՝ Հայաստանի հողում հայտնաբերված մի շարք իրային վկաներ, այդ թվում արձանագրություններ, դեռևս անհրաժեշտ խորությամբ ու լայնախոհությամբ չեն մեկնա-

բանվել, երբեմն նրանք առանց բավարար հիմքի դիտվել են իբրև ուրիշ մշակույթի արգասիք¹։

Իսկ ինչպիսի՞ գրավոր մշակույթ է եղել Հայաստանում հտրեհագրային (նաև հազարամյա պատմագրային) շրջանում մինչև մեսրոպյան դպրության սկզբնավորումը, այսինքն, շուրջ 9—10 հարյուրամյակ ընդգրկող մի ժամանակաշրջանում։ Ցավոք, քիչ են նաև այս հարցի պատասխանին վերաբերող նյութերը. կան մի քանի հանրածանոթ հիշատակումներ մեր մատենագրության մեջ այն մասին, որ Հայաստանում եղել է հունարեն, ասորերեն, պարսկերեն գիր ու գրականություն, հայ մեհյանական գրականության վերաբերյալ ակնարկներ և ուղղակի վկայություններ այն մասին, որ նախքան Մեսրոպի գյուտը պահպանված են եղել հայկական հին նշանագրեր։

Բայց հրապարակի վրա չկան ծանրակշիռ նյութական փաստեր. մինչև այսօր Հայաստանում գտնված նախամեսրոպյան շրջանի որևէ արձանագրություն, որևէ գիր դեռևս չի ընթերցվել հայերեն, այդպիսի ընթերցման մեկ-երկու փորձերը ընդունակություն չեն գտել։ Դժվար է, իհարկե, ասել թե առհասարակ չի գտնվել նախամեսրոպյան շրջանում որևէ գրով հայերեն բառերով գրված արձանագրություն, քանի որ նշած գրությունների բոլոր ընթերցումները չէ, որ լիակատար վստահություն են ներշնչում։ Իսկ մտածել, թե առհասարակ դարերի ընթացքում մինչև 5-րդ դարը որևէ գրով հայերը իրենց մայրենի լեզվով թեկուզ մի նախադասություն էլ չեն գրել, անհնար է, անհեթեթություն։

Գիտնականները վիճել են և այսօր էլ շարունակում են վիճել, թե արդյոք Մեսրոպից առաջ հայերը գիր ունեցե՞լ են, թե ոչ²։ Երկու կողմերն էլ բավական ծանրակշիռ դատողու-

¹ Օրինակ, անհամոզիչ է Սևանի ավազանում հայտնաբերված իրերը առանց որևէ հիմքի, անպայման ոչ հայկական մշակույթի արդյունք համարելը։ Զարմանալի է նաև երբեմն արտահայտվող այն անիմաստ համառությունը, որը մերժում է Հայաստանի բնութագիր արձանագրությունները հայերեն վերծանելու ամեն մի փորձ։

² Վերջին վիճաբանություններն սյդ մասին տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1962, № 4, էջ 153—170, 1963, № 4, էջ 131—158։

թյուններ են առաջ բերում իրենց տեսակետը հիմնավորելու համար: Մեզ թվում է, որ, այնուամենայնիվ, փաստերը ավելի շատ են կուտակվում նախամեսրոպյան հայ գիր լինելու օգտին ժանրացող նժարի վրա¹: Անհնար է, որ, ասենք, Սողոմոնի առակների հայերին թարգմանություն բարձրարվեստ ոճերը, արտահայտությունները, ընտիր բառերը առաջին անգամ այդ թարգմանության ժամանակ գրի առնված լինեն: Հայերեն գրավոր խոսք պետք է եղած լինի Մեսրոպից առաջ, ավելի ճիշտ, Հայաստանում քրիստոնեության սլաշտոնական ընդունումից առաջ: Զուտ հայկական որևէ գրով է եղել այդ գրավոր խոսքը, թե՛ հունական, արամեական կամ բեռազիր նշաններով, այդ այլ հարց է, բայց այդպիսի գրավոր խոսք պետք է որ եղած լինի. և պետք է որ գտնվի՝ նախամեսրոպյան շրջանում գրված հայերեն խոսքի վկայագիր²:

Երբ լուծվի այս առեղծվածը, այն ժամանակ հայկական ին պատմագրության մի շարք փաստեր նոր բովանդակություն կստանան, և հնարավոր կլինի որոշակի խոսք ասել նաև նախամեսրոպյան շրջանի հայ մատենագիտության մասին:

Զպետք է աչքաթող անենք, որ հայ պատմիչները, մասնավորապես Մուսես Խորենացին, լուրջ ակնարկներ ունեն ոչ միայն Հայաստանում եղած նախամեսրոպյան շրջանի գրականության, այլև գրադարանների մասին: Որոշակի խոսք կա նաև IV դարում Հայաստանի մեջ քրիստոնեական գրականու-

¹ Միանգամայն հավանական է թվում պրոֆ. Ա. Արրահամյանի այն տեսակետը, որ Դանիել Ասորու մոտ եղած գրերը հենց հին հայկական գրերի են եղել, մի բան, որ վկայում են նաև հինգերորդ դարի հայ պատմիչները (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 131—143):

² Հետաքրքիր է, որ Լ. Խաչիկյանը իր շատ բովանդակալից մի հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145—158) փորձում է հիմնավորել նախամեսրոպյան գիր գոյություն չունենալու մասին եղած կարծիքը, սակայն պնդելով, որ եղել է նախամեսրոպյան հայ նմայազիր, ըստ էության, հիմնավորում է հակառակ տեսակետը, այսինքն, որ նախամեսրոպյան հայկական գիր եղել է, քանի որ հմայագիրն էլ գիր է:

թյան ոչնչացման վերաբերյալ, Հիշենք թեկուզ Մեհրու-
ժան Արծրունու մասին արված ակնարկը. «Եւ զորս միանգամ
գիրս գտանէր, այրէր»¹:

Ինչ վերաբերում է զուտ մատենագիտական աշխատանքին, ապա ավելի ուշ շրջանից մի քանի մատենագիտական ցանկեր (հատկապես Աստվածաշնչի կանոնին վերաբերող), որոնց մասին դեռ խոսք կլինի, թվում են նախամեսրոպյան շրջանի, ադնվազն՝ IV դարի:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

Առայժմ հայոց մեջ մատենագիտական աշխատանքի իրական սկիզբը պետք է որոնել Մեսրոպ Մաշտոցի հրաշագործ գյուտին հաջորդող ժամանակաշրջանում:

Մեսրոպյան տառերի ստեղծմանը անմիջապես հաջորդել է հայ թարգմանական գրականության սուղծումը: Անշուշտ, այստեղ էլ մատենագիտական որոշ գիտելիքներ ու հակումներ պետք էին որոշելու համար, թե այն ժամանակ հրապարակում եղած եկեղեցական գրքերից որոնք պետք է առաջ թարգմանվեին, որոնք՝ ավելի ուշ և կամ առհասարակ այդ գրքերից որոնք էին ընդունելի հայոց համար, ուստի և ենթակա թարգմանության և որոնք՝ մերժելի: Այսինքն՝ ծագում էր նախ Հին և Նոր կտակարանների կանոնական և պարականոն կամ անվավեր (մերժվող) գրքերի հարցը, որ շատ կողմերով մատենագիտական հարց է:

Այստեղ պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ IV դարից արդեն հայ մշակութային կյանքի մեջ նշանակալից էր դարձել հայոց եկեղեցու դերը: 387 թվականի ճակատագրական բաժան-բաժանից և V դարի սկզբում (428 թ.) հայկական կենտրոնական պատկանության վերացումից հետո Հայաստանում եկեղեցին ստանձնում է հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի միավորիչի ու ղեկավարի դերը: Դրան մեծապես նպաստում էր մեսրոպյան նորաստեղծ դպրությունը, որ սկզբնավորվել էր հայոց

1 Մովսես Խորենացի Պատմութիւն Հայոց: Տփղիս, 1913, էջ 301:

եկեղեցու նախաձեռնությամբ և զարգանում էր նրա հսկողության ներքո:

Վաղ միջնադարում և հետո քրիստոնեություն ընդունած թուրք ժողովուրդների համար մշակութային կարևոր երևույթ էր «Աստվածաշնչի» գրքերի, ինչպես և քրիստոնյա նշանավոր մատենագիրների՝ Աթանաս Ալեքսանդրիացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նալիանզացու, Հովհան Ոսկեբերանի, Նվազր Պոնտացու և ուրիշների կարևորագույն երկերի թարգմանությունն ու ուսումնասիրումը:

Եկեղեցու կողմից ընդունված, վավերական ճանաչված այս մեծածավալ գրականության ճանաչումը, թարգմանությունը, ինչպես և «Աստվածաշնչի» գրքերի հերթական դասավորումն արդեն հսկայական մատենագիտական աշխատանք էին պահանջում:

Պետք է ասել, որ «Աստվածաշնչի» նկատմամբ կատարված մատենագիտական աշխատանքը միջնադարում առհասարակ շատ ծավալուն ու բազմակողմանի է եղել: Ստեղծվել էր «Աստվածաշնչի» կանոնի մատենագիտություն, ուր թվարկում էին Հին ու Նոր կտակարանների այն գրքերը, որոնք եկեղեցու գլխավոր ժողովների կողմից վավերական էին համարվել: Սրանք այսպես կոչված ճայտնի, ընդունելի գրքերն էին, որոնք հետո կոչվեցին նաև էյանունական:

Հայտնի գրքերի հակառակ կային ծածուկ կամ գաղտնի գրքեր (հունարեն՝ ապոկրիֆ), որոնք հետո կոչվեցին պաւակաունդ կամ անվավեր: Սրանք քրիստոնեական կամ քրիստոնեության հետ առնչվող այն գրքերն էին, որոնք եկեղեցական համընդհանուր ժողովների կողմից կամ այլ որոշմամբ ընդունելի գրքերի մեջ չէին մտցվել, այսինքն՝ չէին ընդունվել: Այդ գրքերը եկեղեցին մերժում էր և չէր հանձնարարում կարդալ կամ օգտագործել:

Այնուհետև, Աստվածաշնչի նկատմամբ կատարված մատենագիտական հսկայական աշխատանքի մի տեսակն էլ Հին և Նոր կտակարանների տնատումն էր, համարակալումը և նման կամ նույն նկարագրությունների ու մտքերի միջև քաղմաթիվ հղումների ստեղծումը, որ, իհարկե, հայերը հիմ-

նականում վերցրել են ուրիշներից, լսելով իրենք էլ ավանդ են մուծել այդ գործում հայերեն թարգմանությունների մեջ:

Երբ V դարում Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը ու նրանց աշակերտները սկսեցին թարգմանել «Աստվածաշունչը», արդեն գոյություն ունեւ Հին և Նոր կտակարանների մեջ մտնող գրքերի կանոն, ընդունված քրիստոնեական եկեղեցու տիկզբրական ժողովներում: Սակայն, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, հայերը այս հարցում էլ ինքնուրույնություն են ցուցաբերել¹: Տարբեր դարերից մեզ հասած հայկական կանոնական գրքերի ցուցակները տարբերություններ ունեն, իսկ երբեմն՝ զգալի տարբերություններ հույն, ասորի կամ լատին կանոններից:

«Աստվածաշնչի» գրքերի մինչմեսրոպյան հայկական կանոնի մասին մեզ այժմ ստույգ քիչ բան է հայտնի, թեև այդպիսին անշուշտ եղել է: Ինչ վերաբերում է կանոնական դրքերի մեսրոպագիր առաջին մատենագիտությանը, ապա այն գտնում ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» մեջ:

Հարցի լավագույն գիտակ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը առաջինն է նշել, որ այդպիսի կանոնի աբժեք ունեն Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքում տրված համասլատասխան տեղեկությունները: «Հնագույն կանոնը Կորյունի մոտ է գտնվում,— գրում է Մ. Տեր-Մովսիսյանը,— այնտեղ, ուր նա առաջաբանում խոսում է Հ. և Ն. կտակարանների բովանդակության մասին կամ երբ հաղորդում է, թե առաջինը ինչ գրքեր են թարգմանվել»²:

Խոսքը վերաբերում է Կորյունի գրքի հետևյալ հոտվածներին. ա) ուր Կորյունը (նախաբանում) բազմաթիվ քաղվածքներ է բերում Հին և Նոր կտակարաններից ապացուցելու համար, որ թույլատրելի է Մաշտոցի կենսագրությունը գրել³: Կորյունի գրքի այս մասի հիշումների ու քաղվածքների

1 См. Месроп Тер-Мовсисян История перевода Библии на армянский язык. СПб. 1902, т. 2, 228, прим. 1. Ակինյան Մատենագրական հեռագրություններ, Հտ. Ա. Վիեննա, 1922, էջ 30—32:

2 Մ. Տեր-Մովսիսյանը Նույն տեղում, էջ 227:

3 Կորյուն Պատմութիւն վարդապ. Մաշտոցի: Հրատ. Ն. Ակինյանի Վիեննա, 1952, էջ 2—11:

հավաքածուի տեսք ունի, Բ) երբ Կորյուոնն սկսում է այլարանորեն թվարկել առաջին թարգմանված գրքերի անունները¹ և գ) երբ գրքի վերջում դարձյալ «Աստվածաշնչից» բազմաթիվ քաղվածքներ են բերվում Մաշտոցին մեծարելու համար²:

Անշուշտ, այստեղ գործ չունենք խստորեն կազմված ցուցակ-մատենագիտության հետ, բայց հիշյալ հատվածների մատենագիտական արժեքը, որով նրանք նկատելի տարբերվում են գրքի մյուս մասերից, ակնառու է:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ Հին և Նոր կտակարանների գրքերից Կորյուոնը քաղվածքներ անում է հայերեն, որոնք, անշուշտ, արդեն թարգմանված գրքերից էին բերվում (հազիվ թե Կորյուոնը իրեն իրավունք վերապահեր Աստվածաշնչի դեռևս չթարգմանված որևէ գրքից առարեր հատվածներ ինքնուրույն թարգմանելու ու վկայակոչելու), իսկ դա նշանակում է, որ Կորյուոնի ներկայացրած կանոնի մատենագիտությունը հայերեն գրքերի մատենագիտություն է: Կորյուոնն իր գիրքը գրել է 443—450 թվականների մեջ: Ուրեմն այդ ժամանակի գործ է մեզ ծանոթ հայերեն ինքնուրույն մատենագիտական ամենահին աշխատությունը:

Կարելի է չկասկածել, որ V դարում հայկական կանոնը եղել է նաև իսկական ցուցակի ձևով: Կորյուոնից հետո տարբեր դարերում հանդիպում ենք Հին և Նոր կտակարանների հայկական կանոնին վերաբերող այլևայլ մատենագիտական ցանկերի (Անանիա Շիրակացու, Սիոն կաթողիկոսի, Հովհաննես Սարկավազի, Գրիգոր Աբասի որդու, Գրիգոր Տաթևացու մոտ և այլն), որոնց դեռ կանդրադառնանք:

Ինչ վերաբերում է պարականոն գրքերի մատենագիտությանը, ապա դժվար է պնդել, թե V դարում հայոց մեջ արդեն եղել է այդպիսին, թեև նրա գոյությունը շատ հավանական է, մինչդեռ VI դարի վերաբերյալ կան հավաստի վկայություններ:

Հայկական հին մատենագիտության մի տեսակն էլ շարականների (հին հոգևոր երգերի) հեղինակների ցուցակներն:

1 Նույն տեղում, էջ 25—27, նաև 21:

2 Նույն տեղում, էջ 49—55:

են։ Մեզ հասել են ուշ շրջանի այդպիսի ցուցակներ, բայց քանի որ շարականները սկսել են ստեղծվել տառերի գյուտից անմիջապես հետո, նաև հինգերորդ դարի հեղինակների կողմից, ուստի հիմքեր կան ենթադրելու, որ հինգերորդ դարում շարականոցներին կից արդեն եղել է շարական հորինողների անվանացանկ։

Հինգերորդ դարի մասին խոսելիս պետք է ուշադրության առնել նաև այն, որ այդ ժամանակ սկիզբ առավ հայկական մատենագիտության նաև մի ուրիշ շատ կարևոր ճյուղը՝ պատմիչների մատենագիտությունը։

Միջնադարից մեզ են հասել մի շարք ցուցակներ, որոնցում ժամանակագրական կարգով (երբեմն՝ որոշ խախտումներով) թվարկվում են հայ պատմագիրները, երբեմն առհասարակ հայ հեղինակները, հաճախ նրանց աշխատությունների նշումով։

Պատմագիրը, տարեգիրը սկսելով իր աշխատությունը հաճախ պարտք էլ համարում հիշել, թե իրենից առաջ ինչպատմիչներ են եղել։ Ահա այս սովորությունը սկիզբ է առնում հինգերորդ դարից, հայ առաջին խոշոր պատմիչներից՝ Ղազար Փարպեցուց և Մովսես Խորենացուց։ Հատկապես ուշագրավ է Փարպեցու աշխատությունը, որ սկսվում է հենց մատենագիտական տեսություններ։

Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմության» առաջաբանում գրում է, որ իրենից առաջ երկու հայ պատմագիրներ են եղել՝ Ագաթանգեղոս և Փավստոս Բուզանդ¹։ Համառոտակի տալիս է նրանց ընդգրկած նյութը, ապա արժեքավորում յուրաքանչյուրին, ըստ որում, Ագաթանգեղոսի պատմությանը բարձր գնահատական է տալիս, նրա հեղինակին անվանում է բանիբուն գիտությամբ, ճշմարտախոս, վայելուչ շարադրող², իսկ Փավստոսի աշխատությունը քննադատում է որպես ոչ ճշգրիտ, ոչ գիտական³, լսողության համար տհաճ

1 Ղազար Փարպեցի Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան։ Թիֆլիս, 1907, էջ 5—12։

2 Նույն տեղում, էջ 7։

3 Նույն տեղում, էջ 11։

ու սուտ պատմություն: Փարպեցին, այդպիսով, իրեն նախորդող պատմագիրների կրավորական թվարկումով չի սահմանափակվում, նրա առաջաբանը, կարելի է ասել, քննադատական մատենագիտության հնագույն նմուշներից է:

Մովսես խորենացու «Պատմագիրք հայոց»-ի մեջ առանձին մատենագիտական հատված չկա, ողջ աշխատության մեջ է հեղինակը խոսում իր օգտագործած շուրջ 40 աղբյուրների մասին ու տալիս նրանց գնահատականը: Խորենացին հիշատակում է տարբեր ազգերի պատմիչներ, որոնք գրել են Հայաստանի կամ հայերի մասին, թեկուզ և շատ քիչ: Նրա հիշատակած օտարազգի հեղինակներից են, օրինակ, Մար Աբաս Կատինան, Բյուռոս Քաղդեացին, Լաբուրնան, Կեփալիոնը, Եպիփան Կիպրիացին, Աբյուղենոսը, Բարդաժան Եդեսիացին, Ուիմախանդորոսը, Բազմավեպը, Հերոդոտը, Ափրիկանոս Ժամանակագիրը, Ուղյապ Քուրմը, Մանթեոսը, Պոլիկրատեսը, Հովսեփիոս Փլաբիոսը, հայ հեղինակներից՝ Ադաթանգեղոսը՝ և այլն: Հիշատակվող հեղինակների նկատմամբ քննադատական վերաբերմունք ցուցաբերում է նաև խորենացին, որն իր օգտագործած աղբյուրների դնահատման մեծ կարողություն է ունեցել:

Հինգերորդ դարի հայ ինքնուրույն գրականության մի առանձնահատկությունն էլ այն է, որ մեծ մասամբ այն խստորեն տարբերակված չէր ըստ առանձին բնագավառների: Սովորաբար այն շրջանում իբրև պատմություն գրված երկերը ներկայացնում են նաև ժամանակի հայ գեղարվեստական, փիլիսոփայական, գրականագիտական, լեզվաբանական, իրավաբանական և այլ բնագավառների գրականությունը: Օրինակ, ասենք Եղիշեի գիրքը, սլատմական սկզբընաղբյուր լինելով՝ միաժամանակ գեղարվեստական մեծ արժեք ունի, ինչպես և փիլիսոփայական հատկանիշներ: Փավստոս Բուզանդի պատմությունը պատմական աշխատություն է, բայց ուժեղ է այնտեղ վիպագրական կողմը: Պատմագրականը, գեղարվեստականը, կրոնականն ու փիլիսոփայականը միահյուսված են V ու մոտակա դարերի նաև մի շարք ուրիշ հեղինակների երկերում: Դա նշանակում է, թե այդ

շրջանում բնագավառների, մասնագիտությունների խիստ տարբերակում չի եղել: Հետագա դարերում թեև գիտելիքների ու վրադմունքների բնագավառները որոշ դեպքերում ավելի են տարբերակվում, ասենք, հանդես են գալիս բժիշկներ, տաղերգուներ և այլն, սակայն նախկին վիճակը շատ կողմերով պահպանվում է:

Այդպիսի պայմաններում էլ ավելի անհնար էր մատենագիտության, իրրև առանձին բնագավառի գոյությունը: Հասկանալի է, որ այն ժամանակներում չէին կարող լինել մարդիկ, որ միայն մատենագիտությամբ զբաղվեին, միայն մատենագետ լինեին: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նույնիսկ XIX դարում և հետո, երբ արդեն գիտությունների հստակ տարբերակում կար, վարձյալ հայոց մեջ միայն մատենագիտությամբ զբաղվող մարդիկ չկային: Հայ մատենագիտության նոր շրջանի մի կարևոր առանձնահատկությունը հենց այն եղավ, որ թեև մատենագիտությունն առանձնացավ իրրև գիտելիքների առանձին ճյուղ, բայց միայն (կամ հիմնականում) մատենագիտությամբ զբաղվող անձինք, այսինքն՝ մասնագետ մատենագետներ դարձյալ չերևացին հայոց մեջ (ինչպես այդ եղավ ուրիշ ժողովուրդների մոտ):

Ուրեմն, հատկապես մատենագիտությամբ զբաղվող մարդիկ չեն եղել և չէին կարող լինել հայոց մեջ հին ժամանակներում: Եվ այժմ, մեծ մասամբ այսօրվա աչքերով ենք հայ հին հեղինակների որոշ կարգի աշխատանքը անվանում մատենագիտական աշխատանք, այնպես, ինչպես այսօրվա գրականագետը անցյալի պատմագրական գրքերում գտնում է գեղարվեստական գրականություն, մանկավարժը՝ մանկավարժություն, իսկ մաթեմատիկոսը տոմարագիտական գրքերում գտնում է մաթեմատիկա, աստղաբաշխություն, փիլիսոփան դավանաբանական գրքերում՝ փիլիսոփայություն և այլն:

Պետք է ասել, որ այս տեսակետից անցյալի հեղինակների մատենագիտական աշխատանքը շատ ավելի հստակ է առանձնանում, շատ ավելի որոշակի են նրա սահմանները:

Միանգամայն ակնառու է այն, որ սկսած Սահակ Պարթևի

ու Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների թարգմանչական աշխատանքի օրերից (հավանաբար դեռ ավելի վաղ շրջանից) հայ մտավորականության մեջ մատենագիտական գիտելիքների իմացությունը շատ կարևոր է դիտվել։ Մատենագիտական պաշարի ինչ-որ նվազագույն չափից զուրկ վարդապետը չէր կարող հարգանք վայելել, նա չէր կարող թարգմանիչ կամ հեղինակ, իսկ երբեմն նույնիսկ ընդօրինակող գրիչ դառնալ։

Հետաքրքիր է Ղազար Փարպեցու մի արտահայտությունը վահան Մամիկոնյանին (մարզպան 486—500-ական թվ. սկիզբ) գրած հայտնի նամակի մեջ։ Փարպեցին բացահայտելով իրեն բամբասող աբեղաների նախանձ ու տգետ էությունը՝ ավելացնում է նաև. «Իսկ այժմ լիրբ նախանձողներից շատերը եկեղեցական կանոնական գրքերի անուններն ու բանի հատ լինելն անգամ հազիվ կարողանան իմանալ»¹։ Այսինքն իրեն՝ Փարպեցուն բամբասողները հաղիվ ունենան ժամանակի մատենագիտական նվազագույն գիտելիքները։ Իսկ այն ժամանակ եղած եկեղեցական բոլոր գրքերն իմանալը, ըստ էության, փոքր մատենագիտական պաշար չէր, թեև դա Փարպեցին փոքր բան է համարում։ Ուստի կարելի է եզրակացնել, որ V դարում հայոց մեջ մատենագիտական գիտելիքների ընդհանուր մակարդակը բավական բարձր է եղել։

Ուշագրություն է պահանջում նաև V դարում Հայաստանի մեջ եղած գրադարանների վիճակի հարցը։ Ղազար Փարպեցու մի այլ արտահայտությունն էլ բանասերներին այդ ուղղությամբ է մտածել տվել։ Փարպեցին վահան Մամիկոնյանին գրում է իր հակառակորդների մասին. «...մինչև անգամ ինձ չտվին իմ հունարեն գրքերը, որոնք թափված են այդտեղ (էջմիածնում—Բ. Ի.) ցեցի կերակուր լինելու համար։ Բայց արդյոք այդտեղի բնակիչները կարդալով դրանք լուսավորվելո՞ւ են և կամ ուրիշին լուսավորելո՞ւ են»²։

։ Ղազար Փարպեցի նույն տեղում, էջ 435։ Այս և հաջորդ հատվածը տալիս ենք աշխարհաբարի վերածված մեր կողմից։

Նույն տեղում, էջ 425։

Այստեղից հիմնավոր եզրակացություն է արվում, որ էջմիածնից հեռանալու ժամանակ Փարպեցու այն գրքերը, որոնք նրան չեն հանձնել, դրվել են այնտեղ եղած գրադարանում: Այս ենթադրությունը ավելի հիմնավոր կթվա, եթե հաշվի առնենք էջմիածնի իր հակառակորդներին Փարպեցու տված որակումների որոշ միտումնավորությունը, որ սնանարկելի է:

Մյուս կողմից, Փարպեցու այս նամակի ժամանակ V դարի երկրորդ կես) դեռևս մեսրոպատառ գրքերը այնպիսի քանակ չէին կարող կազմել, որ նրանցից ստեղծվեին մեծ ու հարուստ գրադարաններ, որպիսիք Հայաստանում եղան հետագայում: Եվ պատահական չէ, որ Փարպեցին միայն իր հունարեն գրքերի մասին է խոսում:

Այս ժամանակաշրջանում հայկական գրադարանները կամ եղած գրադարանների մեսրոպատառ գրականությունը նոր էր կուտակվում ու ձևավորվում: Եղած հայերեն գրքերը հազիվ էին բավարարում գրքի մեծ պահանջը դպրոցներում ու եկեղեցիներում: Բավական է հիշել մեր մատենագիրների վկայությունները, որ բավականին հայկական դպրոցներ էին բացվել դեռևս Մուշտոցի ժամանակ¹:

ՄԵՐԺԵԼԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծածուկ ու սուտ գրքերի ցուցակներ

Հայտնի է, որ հին ու միջնադարյան հայ հեղինակների ստեղծագործությունները մեծ մասամբ մեզ հասել են ուշ շրջանի ընդօրինակություններով: Այդպես են մեզ հասել նաև հնում ստեղծված հայկական մատենագիտության նմուշները: Ավելին, մի որևէ դարում կամ դարաշրջանում կազմված մատենագիտություն երբեմն պահպանվել է մի այլ ժամանակաշրջանի որևէ հեղինակի երկում, մի հեղինակի ձեռքով կազմված մատենագիտությունը մեզ է հասել մի ուրիշ հեղինակի

¹ Այդ մասին տե՛ս Ար. Մովսիսյան Հայագիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը.— Երևանի Պետ. համալս. «Գիտ. աշխատութ.», 1940, հտ. 13, էջ 363—464:

գրքի մեջ: Օրինակ, այդպես են պահպանվել գաղտնի (անվավեր) և հայտնի (ընդունելի) գրքերի մի շարք ցանկեր, Հովհաննես Սարկավագի նշանավոր ցուցակը և այլն:

Կանոնական գրքերի հնագույն մատենագիտության մասին խոսեցինք, այժմ մի քանի խոսք պարականոն կամ գաղտնի գրքերի ցուցակների մասին:

«Գիրք թղթոց» կոչվող հին վավերագրերի ժողովածուի մեջ կան ուղղափառ (ոչ նեստորական) ասորի հոգևորականների և հայ հոգևորականության, հատկապես կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդացու (548—557) մինչև VI դարի կեսերին փոխանակված մի շարք նամակներ:

Հականեստորական ասորի հոգևորականները զգուշացնում են հայերին Նեստորի հետևորդ, աղանդավոր ասորիներից: Աբդիսո եպիսկոպոսի նամակում նզովքի են ենթարկվում տարբեր աղանդների հիմնադիրները և նրանց գրքերը («եւ զգիրս նոցա ապականիչս») ¹:

Հայոց Ներսես Բ կաթողիկոսի մի նամակում խոսվում է առևտուր անելու պատրվակով Հայաստան խուժած նեստորականների մասին և ասվում, որ նրանց իրական նպատակը հայերին հավատափոխ անելն է ²:

Իսկ «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» փաստաթղթում ³ արդեն որոշակիորեն խոսվում է նեստորական աղանդավորների դեմ վճռական պայքար մղելու մասին: Այնուհետև հայերին արգելվում է նեստորականներից հաղորդություն ընդունել, ուտելիք ու խմելիք վերցնել, նրանց հետ խնամի ու բարեկամ դառնալ ⁴ և այլն:

Այս ժամանակաշրջանը Հայաստանում նեստորական աղանդի ամենագործուն շրջանն է եղել:

Նեստորականները Հայաստան էին բերել նաև իրենց զրբերը, որոնք թարգմանվել էին հայերեն:

Հեշտ բան չէր այն ժամանակ ամեն մեկի համար դավանաբանական հակամարտությունների նրբություններն ըմ-

1 Գիրք թղթոց: Թիֆլիս, 1901, էջ 67:

2 Նույն տեղում, էջ 70:

3 Նույն տեղում, էջ 72—75:

4 Նույն տեղում, էջ 77:

բըռնելը: Թե աշխարհական մարդիկ, թե հոգևորականները կարգալուծ նեստորականների գրքերը՝ կարող էին հրապուրվել ու տարածել դրանք: Որպեսզի այդպես չլինի, եկեղեցին հրապարակ է հանում նեստորական գրեթե ցուցակներ, այդ գրքերը հռչակվում են սուտ կամ ծածուկ:

XII դարի հեղինակ Սամվել Անեցին իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» գրքի մեջ խոսում է 591 թվականին Հայաստանում քարոզելու եկած նեստորական ասորիների մասին: Նա տեղեկացնում է, որ նեստորականները Հայաստանից հեռացվում են, բայց ոմանք (երևի հայերից) նրանց գրքերը թարգմանում են: Եվ Սամվել Անեցին բերում է այդ գրքերի ցուցակը: Մատենագիտական այդ ցանկում նշված գրքերից մինչև մեր օրերն էլ պահպանվել են: Դա նշանակում է, որ ժամանակին Հայաստանում տարբեր վայրերում եղած բոլոր նեստորական գրքերը շեն ոչնչացվել (որ հնարավոր էլ չէր) և ապա նաև, որ չոչնչացված գրքերը հետագայում ընդօրինակվել են: Ուրեմն, ընդօրինակողները կամ շեն իմացել գրքերի մերժված լինելը կամ իրենք նեստորական հակումներ ե, ունեցել:

Հայաստանում նեստորական ասորիների ծավալած ամենաեռանդուն պործունեության ժամանակից շուրջ վեց հարյուրամյակ հետո ապրած հեղինակը նեստորական գրքերի ցուցակը պետք է վերցրած լինի ինչ-որ հին, անհետացած աղբյուրից: Ահա Սամվել Անեցու բերած այդ ցուցակը. «...զԳօրտոսակ. Կիրակոսակ. զՊողոսի տեսիլն. զԱդամայ ապաշխարութիւն. և զԴիաթէկն. զՄանկութիւն տեառն. և զՍեբիոս. և զՃիռն օրհնութեան. և զԱնթագչելի մատենանսն. և Աւետարանի մեկնութիւն զՄանեայ»¹:

Այս նույն մատենագիտական ցուցակը գրեթե բառացի գտնում ենք նաև 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու (1201—1272) Պատմութեան մեջ²: VI—VII դարերում

¹ Սամվել Անեցի Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղպատ, 1893, էջ 76—77.

² Կիրակոս Գանձակեցի Պատմություն Հայոց, Աշխատասիր.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 51:

այսպիսի ցանկեր, ըստերևույթին շատ են ընդօրինակվել և տարածվել, ու նրանցից մի քանիսը պետք է որ պահպանվեն մինչև 12—13-րդ դարերը:

Գ. Զարբանալյանը իր «Մատենադարան հայկական թարգմանությանց» գրքում բերում է նեստորական գրականության մի ուրիշ ցանկ, որ նա վերցրել է, իր խոսքով, մի նոր գրչագրից: Յուցակի վերնագիրն է. «Այս են անուանեմ ուրևտասն սուտ գրոց, որ եկեալ ի հերձուածող Ասորոց և ոչ յուղափառաց Ասորոցն»:

Այս ցուցակը ընդգրկած գրքերի անուններով, նրանց նկարագրությամբ ու նյութի դասավորությամբ որոշ չափով տարբերվում է նախորդից: Հետաքրքիր է այնտեղ նշված «Հուսաւորչի տեսիլն» գիրքը, որ կարող է նեստորական թեքումով զուտ հայկական բնագիր եղած լինի¹:

Նեստորական «սուտ» կոչվող գրքերի մի ցուցակ էլ գտնվում է 16-րդ դարի մի գրչագիր մատյանի մեջ և կոչվում է. «Այս են անուանք ժՁ սուտ գրոցն, որ եկեալ ի հերձուածող Ասորոցն և ոչ ի յուղափառ Ասորոցն իմանայք»²:

Հնից եկող մատենագիտական շատ հետաքրքրական ցանկեր են պահպանվել 13-րդ դարի հեղինակ Մխիթար Այրիվանեցու կազմած և ընդօրինակած մի ժողովածուի մեջ³: Այդ ժողովածուն, որ այժմ Ճառընտիր է կոչվում, ընդգրկում է

1 Ահա Գ. Զարբանալյանի բերած այդ ցանկը. «Աղամայ կտակն. Ժիւն Օրհնութեան. Փիփիանն. Գորտոսական. Կիրակոսական. Ղոսիմովն. Պետրոսի տեսիլն. Դիաթիկն. Աստուածածնի պատմութիւնն. Սերիոսն. Փիւհոնացիքն. Մանկաթեան աւետարանն. Մանեայ մեկնութիւն աւետարանի. Հուսաւորչի տեսիլն. Զանթաքչելի մատեանն. Գրիգորիսի և Բարսղի հարցմունք» (Յուցակի վերջը Զարբանալյանն, ըստ երևույթին, նույնությամբ ի արտագրել ձեռագրից): Գ. Զարբանալյան Մատենադարան հայկական թարգմանությանց նախնայց: Վենետիկ, 1889, էջ 20:

2 Մաշտոցի անվ. մատ. ձեռ. № 1869, Տպագրված է՝ Ա. Աբրահամյան Հայկական պալեոգրաֆիա: Եր., 1948, էջ 150 և Հ. Անաոյան Հայկական մատենագիտություն Հտ. Ա. Եր., 1959, էջ XXIX:

Հայկական հՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ «Մատենադարան»-ը տողատակի ծանոթագրություններում նշում ենք՝ Մաշտոցի անվ. Մատ.

3 Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. № 1500:

հատուկ ծրագրով հավաքված տարբեր բնագրեր (այդ թվում «Աստվածաշունչ»)։ Այնտեղ, ուր վերջանում է Հին կտակարանը¹ (այստեղ նոր կտակարանը նախորդում է Հինին), մի էջի վրա իրար տակ ընդօրինակված են գրքերի չորս ցուցակներ, որոնք դեռ այս դարի սկզբից բանասերների ուշադրության առարկա են եղել։

Այս ցուցակներից առաջին երկուսը Մխիթար Այրիվանեցին դրել է նաև իր մյուս աշխատության՝ «Պատմութիւն ժամանակագրական»-ի մեջ², որոնք և բանասեր Ք. Պատկանյանի կողմից տպագրվել են այս գրքի 1867 թ. հրատարակության մեջ³։

Այնուհետև Ճառնախիւրի բոլոր չորս ցուցակները 1895 թ. տպագրվել են Կարապետ Տեր-Մկրտչյանի կողմից «Արարատում» (էջ 408) և զետեղվել Մ. Տեր-Մովսիսյանի վերահիշյալ աշխատության մեջ (էջ 241—243) նաև Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» գրքում (Հտ. Գ., Նյու-Յորք, 1942/3, սյունակ 197—198), Հ. Անասյանը ցուցակներից առաջին երկուսը դրել է իր «Հայկական մատենագիտության» մեջ (էջ XL)։

Այս ցուցակներից առաջինը հրեական ծածուկ, այսինքն՝ պարականոն գրքերի մատենագիտություն է, ահա այն ըստ Այրիվանեցու ճառընտիրի.

«Գիրք զոր ունին հրեայքն ի ծածուկ այսոքիկ են. Ադամա, Էնովքա, Սիրէլա, Բժ. Նահապետացն, Աղաւթքն Յովսէփա, Վերացումն Մուսիսի, Եղադ և Մովղադն, Սաղոմոնի սաղմոսքն, Եղիաի ծածուկքն, Դանիէլի է. երորդ տեսիլն, Իսկ ըստ Նորոյս. Գիրք մանկութեան տեսողն, Թոմաի ատարանն, Յայտնութիւնն Պետրոսի, Գ. Շրջագոյ Պաւղոսի, Կաթողիկէ թուղթքն, Բառնաբա և Յովղաի և Թաւմաի»⁴։

Սկզբի տասը անուն գրքերը Հին կտակարանի պարակա-

1 Նույն տեղում, էջ 369ր։

2 Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. № 582։

3 Մխիթար Այրիվանեցի Պատմութիւն ժամանակագրական, ՍՊԲ, 1867, էջ 33։

4 Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. 1500, էջ 369 ր։

նոններ են, որոնք մեծ մասամբ պահպանվել են հայերեն թարգմանություններ, «Իսկ ըստ նորոյս» (այսինքն՝ Նոր կտակարանի) ենթավերնագրի տակ տրված են հինգ անուն պարականոն գրքեր Նոր կտակարանին վերաբերող¹։

Ո՞վ է հրեաների ծածուկ գրքերի այս ցուցակի հեղինակը, անհայտ է, բայց անպայման այս մատենագիտությունը ևս բավական հին է, և Մխիթար Այրիվանեցին 13-րդ դարում այն իր բերած մյուս երեք ցուցակների հետ վերցրել է ինչ-որ մի ուրիշ աղբյուրից (կամ տարբեր աղբյուրներից)։


Նշել են կարծիքներ, որ այս ցուցակները կազմել է ինքը Մխիթար Այրիվանեցին², սակայն այդ կարծիքները մերժվել են և բավական հիմնավոր։ Մխիթար Այրիվանեցին, որի շը-նորհիվ այսօր մեզ են հասել հայկական հին և միջնադարյան մատենագիտության նաև ուրիշ կարևոր նմուշներ, ըստ երեւոյթին, այս շորս ցուցակներից ոչ մեկի հեղինակն էլ չէ, այլ ընդօրինակողն է։ Այլ բան, որ նա լրացումներ ու փոփոխություններ կարող է կատարած լինել իր ընդօրինակած ցուցակներում։ Այստեղ կարևոր է այն, որ հիշյալ շորս ցուցակներից այս առաջինը հայերեն թարգմանված սլաւոնական գրքերի, այսինքն հայերեն եղած գրքերի ցուցակ է, իսկ դա նշանակում է, որ ցուցակը կազմվել է հայ մատենագետի ձեռքով։

Հին և Նոր կտակաւորանների կանոնական շճանաչված գրքերը, ինչպես հայտնի է, շատ են։ Հին ժամանակներում տար-

1 Հ. Անասյանը այս ցուցակի Հին և Նոր կտակարանների մասերը իբրև իրարից անկախ ցուցակներ է դիտում (տե՛ս նրա նշվ. աշխատութ. էջ 211)։ Այրիվանեցու ճառընտիրում այս ցուցակը տրված է իբրև մեկը։ Այնտեղ ամեն մի առանձին ցուցակ նոր պարբերությամբ է սկսվում, այդպես իրար տակ տրված են շորս ցուցակները, որոնցից առաջինը այս է իր երկու մասերով «Իսկ ըստ նորոյս»-ը նոր պարբերությունից չի սկսում, այլ առաջին ցուցակի շարունակության մեջ է։ Այս ողջ ցուցակը իբրև միասնական մատենագիտություն է բերված նաև Այրիվանեցու ժամանակագրության մեջ։ (Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. № 582, էջ 15բ)։

2 Այդ մասին տե՛ս Տեր-Մովսիսյանի նշվ. աշխատութ. էջ 243—251, նաև Գ. Հովսեփյան Մխիթար Այրիվանեցի, նորագյուտ արձանագրություն և երկեր։ Երուսաղեմ, 1931, էջ 5։

բեր քրիստոնեական աղանդներ իրենց գաղափարները ավելի հիմնավոր ներկայացնելու համար երբեմն համապատասխան ձևով փոփոխում էին տարածված գրքերը կամ հորինում նորերը: Տվյալ աղանդի դեմ պայքարող ամեն մի եկեղեցի անվավեր էր հայտարարում այդ գրքերը՝ հրապարակելով նրանց ցուցակը: Այդ բնույթի էին նեստորական ասորիների, ինչպես և հրեաների այս գրքերը ներկայացնող ցուցակները:



Նկ. 1. Մատենագիտական չորս ցանկեր Միիթսի Այրվանեսու կողմից ընդօրինակված Ճառնտիրում (Մշտոցի անլ. Մատ. ձեռ. № 1500, էջ 369բ)

«Գիրք զոր ունին հրեայքն ի ծածուկ» կոչվող գրացանկը կարող է ներկայացնել V—VI, գուցե և հետագա դարերում

հայերեն թարգմանված Հին և Նոր կտակարանների պարականոն գրքերը։ Այս դեպքում «զոր ունին հրեայքն» կարող է նշանակել «Աստվածաշնչի» հրեական մասի, այսինքն Հին կտակարանի պարականոն գրքերը։ Եվ այդ դեպքում վերնագիրը վերաբերում է ցուցակի միայն առաջին մասին (դա չի բացառում այն, որ ողջ ցուցակը միասնական է)։ Բայց չի՞ կարող արդյոք «զոր ունին հրեայքն» նշանակել նաև այն, որ ցուցակում բերած բոլոր գրքերը. տարածել է հրեաներից բաղկացած (կամ հրեական թեքում ունեցող) ինչ-որ աղանդ։ Այս դեպքում վերնագիրը ընդհանուր է ցուցակի առաջին ու երկրորդ մասերի համար։

Ծածուկ և սուտ գրքերի մատենագիտության երկար կյանքը հայոց մեջ, այդպիսի ցուցակների անընդհատ ընդօրինակումը V—VI դարերից մինչև XIII—XIV դարերը պայմանավորված է եղել այդ նույն ժամանակամիջոցում հայոց մեջ պարականոն գրքերի առկայությամբ։ Դրա ապացույցն է նաև այն, որ ցուցակներում նշված ծածուկ և սուտ գրքերի մի զգալի մասը նույնպես պահպանվել են, ինչպես և նրանց ցուցակները։

Անշուշտ, մտածել է տալիս այս հարցը, թե ինչպե՞ս կարող էին հայկական վանքերում դարեր շարունակ ընդօրինակվել հայ եկեղեցու կողմից մերժվող, աղանդավորական համարվող գրքերը։

«Աստվածաշնչի» տարբեր ժամանակներում կազմված հայկական կանոնները, ինչպես և տարբեր դարերում գրված «Աստվածաշնչերի» բովանդակության համեմատումը ցույց է տալիս, որ կանոնավան և ծածուկ կամ պարականոն գրքերի ըմբռնումը հայոց մեջ միշտ միևնույնը չի եղել. որոշ գրքեր, որ մի ժամանակ անընդունելի են համարվել, հետո մտել են կանոնական գրքերի շարքը և ընդհակառակը՝ Այս հանգամանքը կարող էր պատճառ դառնալ, որ ընդօրինակող գրիչը չիմանար իր օրոք եղած կանոնը և ընդօրինակել եկեղեցու կողմից մերժված գրքերը։ Եվ պատահական չէ, որ եկե-

1 Տե՛ս, օրինակ, Մ. Տեր-Մովսիսյանի նշվ. աշխատութ. էջ 213—223, 224—266։

ղեցին կազմել է հրահանգներ այն մասին, որ եկեղեցական գրքերը պետք է ընդօրինակեն նրանց կանոնի վերաբերյալ մատենագիտական ստույգ գիտելիքներ ունեցող և դավանանքով լիովին հայ եկեղեցուն նվիրված անձինք¹։ Սակայն այսպիսի գրիչները այնքան էլ շատ չեն եղել միջնադարյան հայկական վանքերում։ Շատ դեպքերում հայ գրիչները եկեղեցական գրքեր ընդօրինակելիս արտագրում էին առանց խրտուրթյան՝ շտաբերելով ընդունվածը մերժվածից։

Սակայն որքան էլ հավանական լինի անգիտության պատճառով պարականոն գրքերի ընդօրինակման հանգամանքը, միևնույն է, դա հայոց մեջ ծածուկ ու սուտ կոչված գրքերի գոյատևման պատճառներից մեկը պիտի լինի։ Ուշադրություն է հրավիրում Սսի 1243 թ. կանոնների մեջ այն մատքը, ուր եկեղեցական գրքերի ընդօրինակողից սլահանջվում է ոչ միայն գիտելիքներ (եւ հրամայեսցէ եպիսկոպոսն զսուրբ եկեղեցւոյ գրել արուեստաւորաց, գիտնոց»), այլև դավանանքի անխափանություն (եւ ուղղափառաց)։ Սա նշանակում է, որ Հայաստանում պարականոն գրքերի ընդօրինակման պատճառ են եղել նաև ընդօրինակողների դավանական, գաղափարական հակումները, այսինքն՝ որոշ ծածուկ և սուտ համարվող գրքեր կարող են բազմացված լինել դիտմամբ։ Ուրեմն՝ գրիչները կարող էին նաև իմանալ, որ գիրքը պաշտոնական եկեղեցու կողմից մերժված է։ Արդյոք սա եկեղեցու ներսում ընդդիմադիր տարրերի, թաքուն աղանդների գոյության վկայություն չէ՞։ Այս տեսակետից էլ ավելի կարևոր է դառնում մերժվող և ընդունելի հայերեն գրքերի պատմության ու ներանց մատենագիտության մանրամասն ուսումնասիրման հարցը։

ԸՆԴՈՒՆԵԼԻ (ԿԱՆՈՆԱԿԱՆ) ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Ինչպես տեսանք, Մխիթար Այրիվանեցու Ճառքնտիրի շորացուցակներից առաջինն է մեծվաղ կամ ծածուկ գրքերին նը-

¹ Այդպիսի հատուկ կետ կա, օրինակ, 1243 թ. Ստում ընդունված կանոնների մեջ՝ «Կանոնք ժողովոյ գումարելոյ ի Սիս», ան՝ս Ա. Պալմյալ Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայտ։ Վիեննա, 1878, էջ 269։

վիրված: Յուցականերից երկրորդը կոչվում է. «Սրբոյն Կղեմա, եթէ որ գիրք ընդունելի է»¹: Այս ցուցակը նույնպէս Այրի-վանեցիին Ճառընտիրից բացի զետեղել է նաև իր Ժամանակագրութեան մեջ:

Յուցակի վերնագիրն ասում է, որ այնտեղ բերված են ոչ թե ծածուկ կամ մերժվող, այլ ընդունելի գրքեր, թեև իրականում այնտեղ կանոնական գրքերի հետ տեսնում ենք նաև ծածուկ, անվավեր գրքերի անուններ: Այս ցուցակն էլ ընդգրկում է 10 անուն գրքեր, որոնք նույնպէս մեծ մասամբ հայերեն թարգմանութեամբ պահպանվել են: Յուցակն սկսվում է այսպէս. «գործքն և կանոնք առաքելոցն: Յայսնութիւնն Յոհաննու, որ կոչի Պիլալիմսիս», իսկ վերջում հիշատակագիր կա՝ «Զայս ևս և Անանէ գրեցաք ի վիմի քաղաքի, ուր եկեղեցի աւրհնեցաք»: Այս Անանեն ըստ բանասիրութեան տվյալների առաջին դարի քրիստոնյա նշանավոր հեղինակ Անանիա Դամասկացին է, որ ինչպէս երևում է հիշատակագրութեանից ցուցակի հեղինակակից է համարվում, մյուս հեղինակը և հիշատակագիր գրողը բերված է ցուցակի վերնագրում («Սրբոյն Կղեմա, եթէ...»), դա նույնպէս առաջին դարի քրիստոնյա հայրերից է՝ Կղեմես Հռոմայեցին²:

Այդպիսով, այս ցուցակը պետք է թարգմանութեան լինի, սակայն նման ցուցակի թարգմանութեան նպատակը կարող էր լինել մատենագիտութեան մեջ նշված գրքերի առկայութեանը հայերեն (թարգմանութեամբ): Համեմատյն դեպս, ինչպէս էլ որ մտածենք, այս ցուցակը հայոց մեջ նույնպէս գործնական նշանակութեան է ունեցել, մանավանդ որ նրա տարբերակները պահպանվել են նաև հետագա հայ մատենագիրների մոտ, ինչպէս, օրինակ Գրիգոր Տաթևացու² և Վարդան Արեւելցու: Եվ չի կարելի համաձայնել Մ. Տեր-Մով-

1 Բոլոր ցուցակների ուղղագրութեանը պահում ենք ըստ բնագրի (չհաշված մեծատառերի գործածութեանը):

2 Այս հեղինակների հարցի մասին մանրամասն տե՛ս Մ. Տեր-Մովսիսյանի նշվ. աշխատութ. մեջ, էջ 224:

3 Այդ մասին տե՛ս Մ. Տեր-Մովսիսյանի նշվ. աշխատութ., էջ 247, 262:

սիւսյանի այն տեսակետին, թե իբր Մխիթար Այրիվանեցու բերած այս, ինչպես և հաջորդ երկու ցուցակները հայերեն թարգմանվել են անկախ այն բանից, թե նրանցում նշված գրքերը հայերեն հղել ե՞ն, թե ոչ¹:

Այրիվանեցու Ճառքնտիրի հաջորդ երկու ցուցակները Հին և Նոր կտակարանների կանոններ են, մեկի հեղինակն է IV դարի քրիստոնյա հայտնի մատենագիր Եվագր Պոնտացին, ցուցակի վերնագիրն է. «Սրբոյն Եւագրեա կարգադրութիւն Աստվածաշունչ տառից», մյուսի հեղինակը նույնպես 4-րդ դարի եկեղեցական մատենագիր Կյուրեղ Երուսաղեմցին է, այս ցուցակն էլ կոչվում է «Սրբոյն Կիրղի Երուսաղէմի հայրապետին կարգադրութիւն Աստուածաշունչ [գրոց]»: Երկու ցուցակում էլ թվարկվում են կտակարանների կանոնական գրքերը:

Անկասկած է, որ կարգադրություն կամ կանոն կոչվող մատենագիտական այս երկու ցանկերը թարգմանված են հունարենից: Բայց ե՞րբ: Դարձյալ պետք է ենթադրել, որ շատ վաղ շրջանում, ըստ երևույթին 5-րդ դարի մեջ:

Այս կանոնները պետք է որ ծանոթ լինեին Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին և նրանց աշակերտներին «Աստվածաշունչը» թարգմանելու շրջանում: Ավելին, կանոնական գրքերի որոշ ցուցակներ հայ եկեղեցուն պետք է ծանոթ լինեին նաև նախնա մեսրոպյան գյուտը, երբ «Աստվածաշնչի» գրքերը հայոց մեջ կարդայվում և ընդօրինակվում էին հունարեն ու ասորերեն:

«Աստվածաշնչի» գրքերի կանոնին նվիրված ցուցակներ հայոց մեջ առհասարակ շատ են հղել: Այդպիսի ցուցակներ կարելի է գտնել եկեղեցական ժողովների ընդունած կանոնների մեջ («Կանոնք ժողովոց»): Նման ցուցակները վերնագրված են լինում «Յաղագս եկեղեցական գրոց և ընթերցութոց», հրքեմն տրվում են նաև ուրիշ անունների տակ կամ առանց վերնագրի²: Հայտնի է, օրինակ, 435 եպիսկոպոսների

¹ Նույն տեղում, էջ 245 և հետո:

² Ժողովների այդ կանոնները սուղադրված են «Լուսա» հանդեսի 1900 և 1901 թվականների հավելվածներում, ցուցակները՝ 1901-ի հավելվածներում:

կանոնը կամ Անտիոքի ժողովում (III դար) սահմանված կանոնը ներկայացնող ցուցակը «Կանոնենալ և օրէնսուոց» վերնագրով, ուր նշվում է նաև Հին և Նոր կտակարանների տնեւորի՝ քանակը, «Սրբոց հարցն հետեողաց» ցուցակը (Հին կտակարանի գրքերի) և այլն։ Այս ցուցակները նույնպես թարգմանութիւններ են և շատ վաղ շրջանի։

Կանոնի հայկական ինքնուրույն մատենագիտութիւնն է Անանիա Շիրակացու (7-րդ դար) կազմած «Թիւք որչափութեան» մատենագիտական ցանկը։ Այստեղ թվարկված են երկու կտակարանների գրքերը, յուրաքանչյուրի դիմաց նշված է տների քանակը։ Լրիվ վերնագիրն է (ըստ Մաշտոցի անվ. Մատ. Մ 2180 ձեռագրի) «Անանիայի Շիրակացու, համարողի թիւք որչափութեան տանց Հին կտակարանաց», երկրորդ մասինը՝ «Նորին թիւք որչափութեանց տանց Նոր կտակարանաց»¹։

Ինքնուրույն է նաև հայոց Սիոն Բավոնեցի կաթողիկոսի (767—775) սահմանած Հին կտակարանի կանոնի ցուցակը 768 թ. Պարտավի ժողովում²։ Այդ ժողովի կանոններից 24-րդը Հ. կտակարանի գրքերի մատենագիտութիւնն է, ըստ որում սկզբից խոսք կա նաև Ն. կտակարանի գրքերը նշելու մասին, որոնք սակայն անհասկանալի պատճառով չեն թրվարկվում (Մ. Օրմանյանը հնարավոր է համարում ընդօրինակողների մեղքով այդ մասի կոտուսարը³)։ Հետաքրքիր է, որ Պարտավի ժողովի մեջ ընդունված կանոնական գրքերը իրենց կազմով նկատելի տարբերվում են այլ եկեղեցիների, մանավանդ կաթողիկական կանոնից։

Առհասարակ ուշադրութիւն է գրււմ Հին և Նոր կտակարանների կանոն սահմանող վերոհիշյալ ինչպես և ուրիշ ցուցակների մեջ եղած զգալի տարբերութիւնները, որոնք

1 Հրատարակված է. Ա. Աբրահամյան Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Եր., 1944, էջ 257—259, «Հանդես ամսօրյա», 1908, էջ 20—23 և Մ. Տեր-Մովսիսյանի նշվ. աշխատութ. մեջ։

2 «Հումա», 1907, Ա. գիրք, հավելված, էջ 33—48, ծուցակը տե՛ս նաև Մ. Օրմանյան Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, ոլոնակ 884—885։

3 Մ. Օրմանյան նույն տեղում։

համապատասխան մոտորումներ են առաջացնում հին Հայաստանում կտակարանների գրքերի կանոնի և պարականոնության շուրջը եղած գաղափարի մասին:

Այնուհետև, հետագա դարերում կտակարանների կանոն սահմանող մատենագիտական ցանկեր կան մի շարք ուրիշ հեղինակների երկերում, «Աստվածաշնչի» ձեռագիր մատյաններում և այլն:



Այժմ դժվար է ստույգ ժամանակագրությամբ բնութագրել հին շրջանում մատենագիտական լաշխատանքի վարձացումը հայոց մեջ: Մենք թվեցինք մատենագիտության այն տեսակները, որոնք անառարկելիորեն կամ բանասերների ենթադրությամբ Հայաստանում գոյություն են ունեցել V—IX դարերում, այսինքն՝ պարսից մարդպանության և արաբական տիրասլիտության ժամանակաշրջաններում:

Հետագա դարերից (XIII—XVII) մեզ են հասել նաև մատենագիտական այլ բնույթի ցանկեր, սակայն շատ դժվար է որոշել արդյոք նրանցից մի քանիսը շատ հինից են զալիս, թե՞ ավելի ուշ շրջանում են ստեղծվել:

Այդպես է, օրինակ, աբտաֆին և նուրբ գրքերի ցուցակների հարցը: Նուրբ գրքերի ըմբռնումը և այդ անունը առաջին անգամ օգտագործվել է XI—XII դարերի մասին գրված կամ այդ դարին վերաբերող բնագրերում: Ավելի վաղ օգտագործման մասին որևէ տեղեկություն չի պահպանվել: Ինչ վերաբերում է աբտաֆին գիտություններին և գրքերին, ապա թեև այդպիսի գրքերի մեզ հասած ցուցակները կազմվել են կամ ընդօրինակվել XIII դարից հետո, բայց գիտությունների և գրքերի այս խմբի (աբտաֆին) գաղափարը շատ հինից է զալիս, V—VII դարերից: Օրինակ, նշանավոր հայկական «Աշխարհացոյց»-ում (որ երևի նախապես խորենացու և ապա վերջնականապես Անանիա Շիրակացու կազմածն է) արդեն խոսք կա արտաքին հեղինակների մասին, այդպիսիք են համարվում աշխարհագրությամբ, աստղաբաշխությամբ, իրկրաչափությամբ զբաղվողները:

Հետագա շրջանների վկայություններից պարզվում է, որ արտաֆին են համարվել այն գիտելիքները, գիտությունները և գրքերը, որոնք դուրս են «Աստվածաշնչի» և մյուս եկեղեցական գրքերի ու գիտելիքների ոլորտից, բայց և արգելված չեն եկեղեցու կողմից: Դրանք մեծ մասամբ անտիկ շրջանի հեթանոս հեղինակների ստեղծագործություններն են, առհասարակ ոչ քրիստոնեական փիլիսոփայությունը, ապա նաև՝ քրականությունը, աշխարհագրությունը և այլն: Արտաքին ասվում է ի հակադրություն ներֆին ըմբռնմանը, որի տակ մեծ մասամբ հասկացվել է եկեղեցական ընդունելի ողջ գրականությունը: Թեև արտաֆին-ի մեջ էլ երբեմն մտցրել են քրիստոնյա մատենագիրների փիլիսոփայական երկերը և այլ եկեղեցական գրքեր, այսինքն որոշ դեպքերում արտաֆին-ի վերաբերյալ պատկերացումը միակերպ չի եղել: Բացի այդ, ներֆին անվանումը շատ հազվադեպ է հանդիպում (դրա դիմաց օգտագործվում է գիրք սուրբ, երբեմն լայն գրեհանք), մինչդեռ արտաֆին անվանումը սովորական է: Արդյոք շատ հնում եղե՞լ են արտաֆին կամ նուրբ գրքերի ցուցակներ, այժմ դժվար է ասել, արտաքին գիտությունների գաղափարի առկայությունը դեռևս ապացույց չէ այն բանի, որ այդ գիտությունները ներկայացնող գրքերի ցուցակներ են եղել: Երբ քննում ենք 5—6-րդ դարերի հայ մատենագիտական աշխատանքները, նկատելի են դառնում նրանց հիմնական դրդապատճառները, հետաքրքրության ոլորտները, և հազիվ թե այն ժամանակներում հարկ եղած լինի արտաֆին, ինչպես և նուրբ՝ գրքերի հատուկ ցուցակներ կազմելը: Դրանց հարկը կարող էր զգացվել հատկապես XI—XII դարերից հետո, երբ Հայաստանում իրոք ծաղկում են տարբեր գիտությունները, որոնք դասավանդվում են դպրոցներում և համալսարաններում, ուր արտաֆին, ինչպես և նուրբ շատ գրքեր են գրվում ու թարգմանվում:

Մի խոսքով, արտաֆին և մանավանդ՝ նուրբ կոչվող գրքերի հատուկ ցուցակների հանդես գալը այլ դարաշրջանի, մասովոր ուրիշ մթնոլորտի արդյունքն էր:

1 Նուրբ գրքերի տակ հետագայում գլխավորապես իմաստասիրական բնույթի, դժվար ըմբռնելի գրականությունն էր հասկացվում:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵԾ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մշակութային կյանքի այն թուլացումը, որ Հայաստանում սկսվել էր VIII դարից շատ երկար չի տևում: X դարից սկսվում է նոր վերելք հայ մշակույթի բոլոր բնագավառներում: Այս վերելքը տատանումներով ու ընդմիջումներով տևում է մինչև XIV դարի և նույնիսկ XV-ի սկիզբը, ապա նորից կենդանանում XVII դարի կեսերից:

Մեսրոպյան դպրության և առհասարակ հայկական մշակույթի ծաղկման այս դարաշրջանում, որ երբեմն կոչվում է արծաթյա դար (V-ը ոսկեդար դիտելու դեպքում), հանդես են գալիս հայ դրականության այնպիսի հսկաններ, ինչպես Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Ֆրիկը, Խաչատուր Կեղանցին: Այս ժամանակաշրջանին են վերաբերում հայկական ճարտարապետության բազմաթիվ չքնաղ կոթողներ, կառուցված հանճարեղ Տրդատի, Մանվելի և ուրիշների կողմից, ծաղկում է հայկական հրաշք զարդաքանդակն ու մանրանկարչությունը:

Այս ժամանակաշրջանում մինչև XIV դարը հանդես են գալիս մի շարք ականավոր հայ պատմագիրներ՝ Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ուխտանեսը, Ստեփանոս Ասողիկը (Տարոնացին), Արիստակես Լաստիվերտցին, Սամվել Անեցին, Մատթեոս Ուտհայեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Սմբատ Սպարապետը և էլի ուրիշներ:

Գիտությունն ու փիլիսոփայությունը ծաղկում են հանձինս նշանավոր հանրագիտակ Գրիգոր Մազիստրոսի, մեծն իմաստասեր Հովհաննես Սարկավազի, նշանավոր բանասեր Գևորգ Սկեռացու, հայտնի ուսուցչապետներ Ծսայի Նշեցու, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու, բժշկապետ Մխիթար Հերացու և էլի ուրիշ պայծառ դեմքերի:

X դարում սկսված մշակութային վերելքը ուղեկցվում էր և, անշուշտ, շատ կողմերով պայմանավորվում հայկական լանկախ պետականության վերականգնումով:

Հայոց մեջ մշակութային ու քաղաքական այս վերելքին որոշ գիտնականներ¹ տալիս են հայկական վերածնունդ տանունը՝ ընդհանուր գծեր գտնելով նվրոպական, գլխավորապես իտալական վերածննդի կամ ռենեսանսի (ֆրանսերեն՝ renaissance) և հայ մշակույթի այս վերելքի միջև: Ըստ որում, այդ տեսակետից բխում է, որ հայկական վերածնունդը նախորդել է նվրոպականին, որն սկսվել է միայն XIV դարում:

Թեև մի քանի նշանավոր գիտնականների հայտնած տեսակետ է սա, այնուամենայնիվ, հայ ժողովրդի մշակույթի պատմության վերաբերյալ մեր ունեցած գիտելիքն ու պատկերացումները լիովին ներհակ են այս տեսակետին, ուստի և երկու խոսք պետք է ասենք այդ մասին:

Գուցե մեր գիտնականները (ինչպես, ի դեպ, նաև արևելյան ուրիշ ժողովուրդների գիտնականներ) իրենց երկրում՝ տվյալ դեպքում, Հայաստանում նվրոպական «ռենեսանսի» առկայությունն պնդելով ուզում են ծառայություն մատուցել հարազատ ժողովրդին: Այսինքն, մտածում են, թե դրանով բարձրացնում են հայ մշակույթի արժանիքները: Բայց դա, հազիվ թե, նպատակասլաց լինի: Մի՞թե V դարի հայ մշակույթը բարձր չէ, կամ մի՞թե բարձր չէ, ասենք, հնդկական

1 Տե՛ս, օրինակ, Մ. Արեղյան Հայոց հին գրականության պատմություն: Գիրք երրորդ, Եր., 1946. էջ 1—15, 570—572 և այլուր, նաև՝ Վ. Զալոյանի վերջերս լույս տեսած «Армянский ренессанс» (Մոսկվա, 1963, 176 էջ) գրքում:

հին մշակույթը և բազմաթիվ այլ մշակութային երևույթներ, որոնք «ռեֆեւանսի» արդյունք համարել ոչ ոք չի համար-
ձակվի: Ուրեմն, բարձր մշակույթը բնավ էլ պարտադիր չէ
պայմանավորել եվրոպական վերածննդի երևույթներով:

Իսկ եթե խնդ-որ ընդհանուր գծեր կան եվրոպական վերա-
ծննդի արվեստի և Հայաստանում X դարից սկսած մշակու-
թային վերելքի միջև, ապա դա հասկանալի է. ո՛ր դարի, ո՛ր
երկրի ծաղկող մշակութային կյանքն էլ համեմատենք, ընդ-
հանուր գծեր կարելի է գտնել:

Մեզ համար անհող է թվում ասել, թե Հայաստանում կամ
ասիական որևէ այլ երկրում «ռեֆեւանս» է եղել նույնիսկ
նախքան Արևմտյան եվրոպայում նրա նշանների երևալը:
Այդպիսի նշաններ Իտալիայում երևացել են XIII դարում,
իսկ վերածնունդն սկսվել է XIV դարից, մինչդեռ Հայաստա-
նում մշակութային վերելքն սկսել է X դարից: Եվրոպական
«ռեֆեւանսը» պայմանավորված է բուրժուական հարաբերու-
թյունների զարգացմամբ: Մի՞թե Հայաստանը այդ բնագա-
վառում ավելի քան երեք հարյուրամյակով նախորդել է Իտա-
լիային և, առհասարակ, եվրոպային: Այսպիսի խնդրում նա-
խորդելը կամ հաջորդելը, բնավ էլ որևէ որակական, լավ
կամ վատ հատկանիշի չափանիշ չէ, այլ պատմական իրողու-
թյան հարց է: Իայց ասել, թե այդտեղ Հայաստանը նախորդել
է եվրոպային, նշանակում է ճիշտ չասել:

Վերջապես, մի թե հայոց մեջ X—XV դարերում վերա-
ծնվել է հեթանոսական մերժված մի մշակույթ, ինչպես այդ
եղել է ժամանակին եվրոպայում, և հենց այդտեղից էլ առա-
ջացել վերածնունդն անունը (հոմեական, հունական հին
մշակույթի վերածնունդ): Նման բան հայ իրականության մեջ
չի եղել: Իսկ աշխարհիկ երանգների ուժեղացումը սովորա-
կան երևույթ է ամեն մի ծաղկող մշակույթի համար: Մի՞թե
քիչ են աշխարհիկ երանգները Բուզանդի, Խորենացու, Նշիշեի
և V դարի մյուս հայ մատենագիրների երկերում, գուցե որոշ
իմաստով ավելի շատ են: Այդ դեպքում կարելի է հայոց վե-
րածնունդ կոչվածը ավելի հետ տանել մինչև V դար: Այսպի-
սի անհեթեթության կարող է հասցնել օտար երկրի պատմու-

թյանը բնորոշ երևույթի արհեստական տեղափոխումը հայկական միջնադար:

Հայաստանում «ռեմենսանս» չի եղել¹, այլ եղել է մշակույթի մեծ վերելք, ծաղկում, որը մեր համոզմամբ իր խորությամբ, մեծ խմաստությունամբ, բարձր արվեստով շատ դեպքերում գերազանց է եվրոպական վերածնունդյան մշակութային արտադրանքից:

Որքա՞ն է տեւել այդ մեծ վերելքը հայոց մեջ: Այս հարցին տարբեր պատասխաններ են տալիս, օրինակ, Մ. Աբեղյանը այն հասցնում է մինչև XVII դար², ուրիշները սահմանափակում են ավելի վաղ շրջանով:

Իրոք, X դարում սկսված այս մեծ վերելքի մի շարք բնորոշ գծեր հանդիպում են նաև XVII դարում, այսինքն՝ XIV դարից սկսած անկումից հետո: Սակայն, հազիվ թե սխալված լինենք, եթե ասենք, որ մշակութային վերելքի այդ շրջանի վերջին ամենից ավելի բնորոշ և խոշոր ներկայացուցիչը Գրիգոր Տաթևացին էր ու նրա դպրոցը, (մինչև XV դարի սկիզբը), իսկ հետագայում այդ շարժումը միայն առանձին պոռթկումներ է ունեցել:



Հայաստանում X դարը բավականին խաղաղ է անցնում: Թուլացած Արաբական խալիֆաթը ճանաչում է Բագրատունիների անկախ պետությունը և Աշոտ Ա Բագրատունուն՝ իբրև հայոց թագավոր (885 թ.): Աշոտ Բ թագավորի օրոք Բագրատունյաց իշխանությունը լրջորեն հվորանում է, հայոց մայրաքաղաք է դառնում Անին (961 թ.): Ծաղկում են արհեստներն ու առևտուրը, գիտություններն ու արվեստը:

Հայաստանում ստեղծվում են նաև այլ իշխանություն-

1 Եվրոպական միջնադարը հասցնում են մինչև վերածնունդի շրջանը: Հայաստանի միջնադարի սահմանը սովորաբար համարվում է XI-X դարի սկիզբը, որ թեև շատ պայմանական է, բայց բնահանուր առմամբ՝ ճիշտ:

2 Մ. Աբեղյանը եղվ. աշխատութ., էջ 1:

ներ, ինչպես՝ Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Սյունիքի թագավորությունը, Կարսի, Լոռու (Գուգարքի) թագավորությունները, որոնք մեծ մասամբ ենթակա էին Բագրատունյաց հայկական կենտրոնական պետությանը, թեև երբեմն ձգտում էին ինքնուրույնության: XI դարի վերջից հզորանում է Կիլիկյան հայոց պետությունը (մինչև XI^Վ դարի կեսերը):

XI դարից նոր, կործանարար արշավանքներ են սկսում Հայաստանի վրա: Բյուզանդիայի հույները նենգությամբ առնում են Անին, ապա սկիզբ են առնում սելջուկ թուրքերի ավերիչ ասպատակությունները (սուաշինը՝ 1048 թ.):

Հայաստանում XII—XIV դարերում մնում էին մի քանի անկախ իշխանություններ, ինչպես՝ Զաքարյանների, Վաչուտյանների, Վահրամյանների, Խաղբակյանների (կամ Պրոշյանների), Օրբելյանների և այլոց: Այս իշխանական տները, հատկապես վերջինները մեծ դեր են կատարել հայ մշակույթի զարգացումը պահպանելու ուղղությամբ:

1235 թվականից վրա է հասնում Հայաստանի համար մի շատ ծանր շրջան՝ սկսվում են թաթար-մոնղոլական զարհուրելի ասպատակությունները, մոնղոլական ծանր լծի շրջանը, որին հաջորդում են Լենկթեմուրի ավերի դաժան ու անգութ արշավանքները (XIV դար), ապա թուրքական տարբեր ցեղերի ասպատակությունները և ի վերջո Հայաստանի բաժանումը Իրանի և Օսմանյան բռնապետությունների միջև (1555 թ.), և այդ պետությունների մղած անընդհատ արյունալի պատերազմները Հայաստանի հուլի վրա:

Այսպիսով, հայ մշակույթի վերելքը, որ սկիզբ է առնում խաղաղության և հայ պետականության վերականգնման պայմաններում, շարունակում ու զարգանում է քաղաքական լիմաստով ամենատարափոխիկ, անապահով իրադրությունների մեջ:

Հայ մշակութային կյանքը մայր երկրում ամեն պահ ենթակա էր անակնկալ ավերածությունների, սա է եղել մտավոր կյանքի վերելքի այս դարաշրջանի կարևոր առանձնահատկություններից մեկը: Նույնիսկ հայկական մշակույթի կենտրոն-

ների աշխարհագրական դիրքը պերճախոս պատմում է այդ մասին: Բավական է համեմատենք XII—XV դարերում Եվրոպայի մեջ գործող խոշոր համալսարաններն և դրադարանները Հայաստանի նույն ժամանակվա միևնույն բնույթի հիմնարկների հետ, որպեսզի վիճակը պարզ լինի: Մի դեպքում ունենիք Փարիզի ու Բոլոնիայի, Հռոմի ու Ֆլորենցիայի, Պրագայի ու Վլեննայի, Հեյդելբերգի ու Կրակովի համալսարաններն ու նրանց գրադարանները, բոլորը հիմնված սովորական բնակավայրերում, մեծ մասամբ խոշոր քարգավաճ քաղաքներում, իսկ մյուս դեպքում՝ Գլաձորի ու Տաթևի, Սանահինի ու Հաղբաաի, Նոր Գետիկի ու Գեղարդի համալսարաններն ու նրանց գրադարանները ծվարած խուլ ձորերի մեջ, բարձրաբերձ լեռների կիրճերում: Ժողովուրդն ուզում էր անպայման պահպանել ու ծաղկեցնել իր դարավոր գանձերը, ստեղծագործ միտքը և թաքցնում էր դրանք հայոց լեռներում՝ շեղ անապատի օրդուններից սև: Առհասարակ Հայաստանում ձգտում էին համալսարանները հիմնել ապահով, անվտանգ նաև անդորր ու խաղաղ վայրերում, քաղաքներից, շատ ինքի խոշոր բնակավայրերից հեռու: Դրա համար եղել են նույնիսկ հատուկ հրահանգներ¹: Անշուշտ, սրա նպատակը ֆիզիկական ապահովություն ունենալու հետ միասին ու դրա հետ կապված՝ խուլաղ պարապելու ձգտումն էր:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Հայաստանում X դարից սկսված մշակութային վերելքի կարևոր առանձնահատկությունը կրթական գործի ծաղկումն էր:

Երկրի տարրեր վայրերում, մեծ մասամբ վանքերին ու մենաստաններին կից, ուսումնարանների կյանքը աշխուժա-

1 Տե՛ս Լ. Խաչիկյան Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները:— Երևանի համալս. «Գիտական աշխատություններ», հ. 23, Եր., 1946, էջ 429:

նում է, ստեղծվում են նոր դպրոցներ և համալսարաններ¹։ Բազմաթիվ աղքատներին, ինչպես, օրինակ, Գրիգոր Մագիստրոսի մի շարք նամակներից² պարզ երևում է, թե այն ժամանակ որքան կարևոր նշանակություն էր տրվում կրթական գործին։ Դրա հետ միասին, հասկանալի է, որ ուշագրության կենտրոնում պետք է լինեին գրականության բազմա-ցումը, քանի որ առանց գրքի, գրականության անհնար է պատկերացնել կրթական կյանք։ Սկսում է ծաղկել գրչության արվեստը։ Բազմաթիվ վանքերում ստեղծվում են գրչության կենտրոններ, մեծ եռանդով ընդօրինակվում են հույց մնացած հարյուրավոր ու հազարավոր ձեռագրեր, աներևակայելի չափով աճում է հայ գրի քանակը։ Ստեղծվում են հայոց ձեռագրերի մի շարք մեծ ու փոքր գրադարաններ, ճոխանում են նախկինում եղածները։

Գաղափարները, որպես օրենք, հիմնվում ու նոխանում էին կրթության և գրչության կենտրոններում։

X—XVI դարերում հայ կրթության կենտրոններ եղել են շատ վայրերում, գրեթե միշտ (չնչին բացառություններով) վանքերին կից։ Հայոց մեծ, իսկ երբեմն նաև՝ ողջ քրիստոնեական Արևելքում, հռչակված են եղել Սանահինի, Հաղբատի, Սև Լեռան, Սկևռայի, Գետիկի (Գոշավանք), Գլաձորի, Տաթևի, Այրվանքի (Գեղարդ), Տավուշի, Մեծօփա բարձր կարգի դպրոցներն ու համալսարանները, Անիի արքայական ճեմարանը։ Հայտնի են եղել նաև Խոր-Վիրապի, Կեչառիսի, Բջնիի, Վարագի, Նարեկի, Սեպուհ Լեռան և շատ ուրիշ վայրերի վանքերին կից դպրոցները։ Եղել են նաև մասնավոր աշխարհիկ ուսումնարաններ, ինչպես, օրինակ, Գրիգոր Մագիստրոսի շարժական դպրոցը։

Հետաքրքրական է, որ ըստ տեղեկությունների այդ շրջանում հայկական դպրոցների մեծ մասում եկեղեցական առարկաների հետ դասավանդվել են նաև արտաքին գիտություն-

¹ Մանրամասն տե՛ս Ա. Մովսիսյան Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X—XV դարեր), Եր., 1958, 361 էջ։

² Գրիգոր Մագիստրոս Թղթեր, Հրատ. Կ. Կոստանյանի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 105—107, 136—138, 43, 54 և այլուր։

ներ (գլխավորապես փիլիսոփայություն, երաժշտություն, գրչագրություն), որոնց տեսակարար կշիռը մի քանի համալսարաններում բավական զգալի է եղել:

Բազմաթիվ վկայություններ կան հայ պատմագիրների մոտ, ձեռագրերի հիշատակարաններում ու քարեղեն արձանագրություններում այն մասին, որ հիշյալ գրեթե բոլոր ուսումնարաններում եղել են հաբուստ գրադարաններ:

Միջնադարյան հայ մատենագիտությունը սերտորեն կապված էր դրադարանների կյանքի հետ, այդ կյանքի մի անքակտելի մասն էր կազմում: Ուստի խոսել անցյալի հայ մատենագիտության մասին, նշանակում է խոսել միաժամանակ այդ մատենագիտության կենտրոնների՝ դրադարանների մասին:

Մեծ է եղել հնում և միջնադարում հայ գրադարանների դերը: Առանց նրանց չի կարելի պատկերացնել միջնադարյան հայ մշակույթի այն փառավոր ծաղկումը, որն այսօր մեզ զարմանք ու հիացմունք է պատճառում: Գրադարանների դերը մեծ է նաև անցյալի հայ մտքի ամենակարևոր կրողների՝ հայերեն հին գրքերի պահպանման գործում:

Ահա թե ինչ է ասում Հայաստանի հին գրադարանների մասին մեր խոշոր գիտնականներից մեկը՝ Գարեգին Հովսեփյանը իր «Մատենադարանները հին Հայոց մեջ» գեղեցիկ հոդվածում. «...այդ հաստատությունների (գրադարանների) մեջ են հավաքվել և պահպանվել այն ձեռագրերը, ուր մարմնավորված են հայ մտքի ստեղծագործությունը, հայ արվեստը պատկերագրության և զարդանկարչության ճյուղերի մեջ. հայ կրոնական և աշխարհիկ բանաստեղծությունը, ինքնուրույն կամ թարգմանական, պատմական և այլ տեսակի մատենագրությունը: Առանց մատենադարանի գոյության՝ մտքի և քաղաքակրթության զարգացում և սերունդներից սերունդ ավանդելու և տարածելու միջոց չկա շայն չափերով»¹:

1 Գ. Հովսեփյան «Մատենադարանները հին Հայոց մեջ» — «Պայքար», 1946 (նոր տարվա բացառիկ), էջ 7, նաև՝ Ս. Քուլանջյան Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը — «Եշիածին», 1962, թիվ է. էջ 20—21:

Գրատուն, գրանոց, արկղի գրոց, գանձատուն, դիվան, երբեմն էլ՝ նշխարանոց, այսպիսի անուններով են կոչվում միջնադարյան աղբյուրների մեջ Հայաստանի գրադարանները: Շատ հին է նաև մատենադարան¹ անունը, թեև միջնադարյան աղբյուրներում ավելի քիչ հանդիպող: Ինչ վերաբերում է գրադարան անվանմանը, ապա սա, ավելի նոր ժամանակներում է շրջանառության մեջ մտել:

Հայերենում գրադարաններին տրվող այս տարբեր անվանումներից այժմ ամենատարածվածն են գրադարան և մատենադարան, ըստ որում՝ Խաչատուրյանը օգտագործվում է հայերենի արևելյան, երկրորդը՝ արևմտյան ճյուղում: Բացի այդ, արևելյան հայերենում մատենադարան նոր նշանակություն է ստացել: Քանի որ էջմիածնի մատենադարանը տեղափոխվելով Երևան՝ վերածվեց Գիտական ձեռագրատան, իսկ հետո՝ ձեռագրերի ուսումնասիրման գիտական հաստատության, ապա և մատենադարան-ը սկսեց նշանակել ձեռագրատուն², ավելի ճիշտ՝ միայն Մաշտոցի անվան Երևանի ձեռագրատունը (իբրև հատուկ անուն):

Եվ այսպես, հնում Հայաստանի գրադարանները զբաղա-
րան անունով չեն կոչվել, բայց այսօր նրանց մասին խոսելիս ամենից ավելի հարմար է թվում ժամանակակից այդ անվանման գործածությունը, թեև մերթ մերթ կարելի է դիմել նաև անցյալի անվանումներին:

Գրադարանները Հայաստանում, ինչպես ասել ենք, շատ հնուց են գոյություն ունեցել: X դարից սկսած հայ մշակույթի մեծ վերելքի ժամանակաշրջանում հիմնադրված ու գործած հայոց գրադարանների մասին կան բավմաթիվ տեղեկություններ:

X դարում հիմնված Ստեփանոսի և Հաղբատի վանքերը XI-

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի: Հտ. 1, Վենետիկ, 1836:

² Հետաքրքիր է, որ Մաշտոցի անվան Մատենադարանի տպագիր գրականության ռաժիսը կոչվում է գրադարան, և այդպես ասում են Մատենադարանի գրադարան, որ առաջին հայացքից անհեթեթ բան է թվում (գրադարանի գրադարան): Բայց լեզվում անհեթեթ թվացող բաները շատ ասվելով՝ դառնում են սովորական:

ում արդեն ճանաչված էին իրենց բարձր կարգի դպրոցներով ու պրագարաններով: Հատկապես հռչակված է եղել Հաղթատի գրադարանը, որը համարվել է հայ ձեռագրերի երբևէ գոյություն ունեցած գանձարաններից ամենահարուստը:

Հաղթատի վանքն ունեցել է գրադարանի կամ, ինչպես այն կոչվել է, գրատան հատուկ շինություն, որը շատ հին է, կառուցված XI դարում¹: Գրատունը, որ հետագայում կոչվել է նաև նշխարախուց, գրքերով հարստացել է ինչպես նվիրատուությունների, այնպես էլ ձեռագրերի՝ տեղում կատարված բնօրինակումների շնորհիվ: Հաղթատի վանքի մի շարք արձանագրություններ պատմում են XI—XIII դարերի մեջ տարբեր անձանց կողմից գրատանը նվիրված պրականություն մասին²: Ի դեպ, շատ արձանագրություններ էլ վկայում են, թե ինչպես մարդիկ գրատանն են նվիրել սարքեր արժեքավոր իրեր, նաև՝ անշարժ կայք, այդ թվում՝ այգիներ³: Մի համագամանք, որ վկայում է այն օրերին ժողովրդի տածած մեծ սերը հայ գրքի նկատմամբ:

Հաղթատի գրատունը ներսից ունի պատերի մեջ ներս ընկած խորշեր, որոնք ծառայել են իբրև դարակներ գրքերի համար: Ն. Լալայանցը այսպես է նկարագրում գրատան այդ շենքը. «Սա մի անսյուն շենք է. յուրաքանչյուր պատին կից բաշճրանում են երկուսական գեղեցիկ կիսասյուներ իբր նեցուկ այն ռոմանական կամարների, որոնց վրա բարձրանում է քառանկյունի մի շրջանակ՝ կրելով ութանկյունի մի գմբեթ, ծույրը բաց լույսը թափանցելու համար: Սրա հանդեպ, հատակի վրա մի քարե լիոթրիկ ավազան կա, որի մեջ հավաքվում է այդ բացվածքից ներս թափանցված անձրևի ջուրը:

Պատերի մեջ կան հինգ հատ բավական մեծ, կամարակապ դուռակներ քրքեր դենլու... համար»⁴:

1 Ն. Լալայանը Հաղթատի գրատան կառուցման թիվը համարում է 1260-ը («Ազգագրական հանդես», 1901, էջ 396), Կ. Ղաֆադարյանը գրում է, որ այն կառուցվել է 11-րդ դարում: Կ. Ղաֆադարյան Հաղթատ, 1963, էջ 38:

2 Կ. Ղաֆադարյան Նույն տեղում:

3 Կ. Ղաֆադարյան Նույն տեղում, էջ 38, 42:

4 Ն. Լալայան Բորչալուի գավառ — «Ազգագր. հանդես», 1901, էջ 407:

Սակայն Հաղթատում գրադարանի դեր միայն այդ գրատունը չէ որ կատարել է: Վանքի մոտակա քարայրներում միշտ էլ պահված է եղել մեծ քանակությամբ գրականություն: Հատկապես կարևոր է եղել Ջրաղացի ձորի մի մեծ քարայրը, որ ոչ միայն գրապահոցի, այլև ընթերցարանի դեր է կատարել:

Այդ քարայր-գրադարանը անշուշտ, ավելի հին է քան վանքի գրատունը: Նրա մասին հիշատակում է Կիրակոս Գանձակեցին՝ Հովհաննես Սարկավազի պատանեկության մասին խոսելիս, այսինքն այն իր հարուստ գրականությամբ արդեն գոյություն է ունեցել XI դարի կեսերին: Այդ քարայրի մասին նույն Հովհաննես Սարկավազի պատանեկության կապակցությամբ խոսում է նրա անհայտ կենսագիրը, գրադարանն անվանելով «արկեղք գրոց յայրի»²: Կիրակոս Գանձակեցու պատմածի համաձայն XI—XII դարերում Հաղթատի ուսանողները և մյուս ընթերցասեր վանականները այդ քարայրում էին երկար ժամերով կարդում մագաղաթյա հին մատյանները³:

Առհասարակ քարայրային գրապահոցները Հայաստանում սովորական երևույթ էին սկսած սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանից կամ ավելի վաղ շրջանից: Դրանց հիմնական նպատակը այն ժամանակ սրբություն համարվող ձեռագրերը հրոսակների վայրագություններից փրկելն էր: Բացի այդ, քարայրային գրատները որոշ իմաստով գուցե և հարմար են եղել ընթերցանությամբ զբաղվելու համար. վանքի առօրյայից հեռու, բնության գրկում այրի մեջ առանձնացած, ըստ երևույթին, ավելի լավ կարելի էր սուղվել հին գրքերի էության մեջ:

Հաղթատի գրատունը հավանաբար XVII դարից սկսած օգտագործվել է իբրև մառան և կոշվել մառնատուն, ուր պահ-

1 Կիրակոս Գանձակեցի Պատմություն հայոց, Աշխատասիր, Կ. Մեխրե-Օհանջանյանի, Եր., 1961. էջ 114, 116:

2 Գ. Հովսեփյան Հիշատակարանք ձեռագրաց: Հտ. Ա. Անթիլիաս, 1951, էջ 336:

3 Կիրակոս Գանձակեցի նույն տեղում:

վել է գինի ու պարեն: Մի ուրիշ տեղեկության համաձայն մի ժամանակ Հաղբատի գրականությունը տեղավորված է եղել յոթ պահոցներում՝ Ս. Նշան տաճարի վերնախորանում, լուսագեղատուն վերնահարկի չորս խորաններում և Ջրադացի ձորի մեծ քարայրում¹:

Նշանավոր է եղել նաև Հաղբատի հարևան Սանահինի գրադարանը, որ կոչվել է նաև մեծ գանձարան: Հայտնի է, որ Հայաստանի մի շարք վայրերից՝ Սյունիքից, Վասպուրականից, Կիլիկիայից գրիչներ են եկել Սանահին այստեղի հայրուստ գրադարանից հազվագյուտ գրքեր ընդօրինակելու նըպատակով: Սանահինում 1063 թվականին Դավիթ արքայի դուստր, Հրանուշի ջանքերով կառուցվել է հատուկ շինություն գրադարանի համար², որ հիշվում է գրատուն կամ նշխարատուն անունով:

Ահա թե ինչպիսի հիացմունքով է նկարագրում Ա. Շիրվանզադեն Սանահինի վանքի գրատան շենքը 1888 թվականին Լոռի այցելելու կապակցությամբ իր գրած «Լոռվա ձորերում» ակնարկի մեջ. «Նժն Սանահինի վանքի մեջ կա մի սիրուն ճաբտարասլետական շինություն, որ նսեմացնում է Հաղբատի վանքի, նույնիսկ Համազասպի գավթի շքեղությունը, այդ մատենադարանն է: Դա մի պարզ, քառանկյունի, քսան քայլ երկարությամբ, ամուր հատակից շինած մի սենյակ է, բարձր և շքեղ կամարով: Հմուտ վարպետի ձեռքը երկաթի ամրություն ունեցող քարի վրա գործել է, կարծես, այն դյուրություն, որպես մոմի վրա: Զորս երեք ճյուղանի սյուներ, պատերի մեջ ամրացրած, պահած ունեն մի փառահեղ կամար: Սյուների ճյուղերը քանդակագործված են միմյանցից տարբեր, հյուսվածքը մի զմայլեցուցիչ ներդաշնակություն է կազմում կամարի հետ: Պատերի մեջ շինված են մոտ տասն ընդարձակ, խուլ պատուհաններ. սրանք մի ժամանակ եղել են գրքերի պահաբաններ»³:

¹ «Բազմավեպ», 1956, էջ 107—108:

² Ե. Լալայան Նույն տեղում, էջ 388, Կ. Ղաֆադարյան Սանահինի վանքը և նրա արձանագրությունները: Եր., 1957, էջ 32:

³ Ա. Շիրվանզադե Նրկերի ժողովածու: Զ. 9, Եր., 1961, էջ 49—50:

Միջնադարյան Հայաստանում գրադարանի շենքի վրա հայ ճարտարապետության հանճարի շուրջումը դարձյալ ասպարեզու է գրքի ու հատկապես գրադարանի նկատմամբ այն ժամանակներում հայոց մեջ եղած մեծ սիրո: Առհասարակ, առանձին ուշադրություն է սլահանջում հին ու միջնադարյան Հայաստանի գրադարանների ճարտարապետությունը: Գրադարանային շենքերի կառուցումը հատուկ հոգատարությամբ է կատարվել: Այդ կարելի է նկատել ոչ միայն Սանահինի, այլև մինչև մեր օրերը սլահանված ուրիշ միջնադարյան գրադարանների շինություններում:

Հետաքրքիր է, որ Սանահինի գրատունը իր կառուցվածքով նման է Հաղբատի գրատան շենքին: Ըստ երևույթին, վերջինիս օրինակով է կառուցվել (Հաղբատինը ավելի հին) ¹, թեև ավելի կատարելագործված է ու գեղեցիկ:

Սանահինի վանքի արձանագրություններն էլ են պատմում գրատանն արված նվիրատվությունների վերաբերյալ: Դրանցից մեկում, օրինակ, հիշվում է նշանավոր Գրիգոր Տուգեորդու կողմից գրատանը նվիրված գրքերի մասին: Այս գրատունը ևս այգիներ և այլ կյաք է նվել ստացել շրջակա բնակիչներից:

Սանահինի վանքը Հաղբատի նման նույնպես ունեցել է քարայրային գրապահոց, ուր գրքերը տեղադրվել են վտանգավոր արշավանքների ժամանակ:

Սանահինի գրադարանը իր ծաղկմանն է հասնում, երբ այստեղ վանահայր էր ժամանակի հմուտ գիտնական, մատենագետ Գրիգոր Աբասի որդին (XII դարի սկիզբ):

Սյունիքում IX դարի վերջին հիմնված Տաթևի վանքը հետագայում նույնպես դարձավ հույ գրքի կարևոր կենտրոններից մեկը: Տաթևի վանքի գրադարանը նույնպես հիմնվել է IX դարում Սյունյաց Հովնանենս եպիսկոպոսի կողմից, որը և կառուցել է գրատան շենքը:

Սյունիքի տարեգիր Ստեփանոս Օրբելյանի պատմածի համաձայն Տաթևի վանքում էլ են եղել ապահով թաքստոցներ,

¹ Կ. Ղաֆադարյան Հաղբատ, էջ 33:

հատուկ պահոցներ, որտեղ տեղավորված են հղել տարբեր փաստաթղթեր ու գրականություն։ Այստեղ վանքի մոտակայքում հղել է նաև ամուր գրապահոց-քարանձավ, ուր դեռևս հին ժամանակներից պահվել է գրականություն, այդ թվում նամակներ, պայմանագրեր և այլ փաստաթղթեր¹։

Աբդեն XII դարի հրկրորդ կեսին Տաթևի գրադարանը բավականին պատկուտիլի քանակությամբ ձեռագիր գրքեր ուներ։ Նույն Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, երբ 1170 թվականին սելջուկները գրավում են Սյունիքի Բաղաբերդ ամրոցը, այստեղ նրանք ի թիվս այլ հարստությունների իրենց վայրագության ճարակ են դարձնում նաև Տաթևի վանքի 10.000 գրքերը²։ Մեմենայն առ հասարակ գերի վարեցան և ցան ու ցիր եղան ընդ երեսս աշխարհի», — գրում է պատմիչը։ Հստ Օրբելյանի, Տաթևի գրքերը Բաղաբերդ էին տեղափոխվել նպատի առնելով ամրոցի անառիկությունը։ Թե ինչու այդ գրականությունը Տաթևի թաքստոցներում չէին պահել, այժմ դժվար է ասել, սակայն 10.000 գրքի ոչնչացման փաստն ինքնըստինքյան ասում է այդ գրադարանի զարմանալի ճոխության մասին։

Տաթևի գրադարանը այդ սոսկալի թալանից չի մահանում, այն վերակենդանանում է և հատկապես ծաղկում 1350-ական թվականներից հետո, երբ Գլաձորից այստեղ է տեղափոխվում համալսարանն ու սկսում գործել Հովհան Որոտնեցու ղեկավարությամբ։ Գրադարանը է՛լ ավելի բարգավաճեց մեծն Գրիգոր Տաթևացու օրոք։ Տաթևի համալսարանը գործել է մինչև 1415 թվականը, որից հետո գրադարանը շարունակում է պահպանվել, թեև աստիճանաբար անկում է ապրում։

XIV դարում գործող Տաթևի գրադարանի «արկղք գրոցի» մասին կան մի շարք գրավոր հիշատակություններ, որոնցից

¹ Ստեփանոս Օրբելյանի Պատմություն հայաստանի Սրբազան Թիֆլիս 1910, էջ 10։

² Ստեփանոս Օրբելյանի նույն տեղում, էջ 336։

որոշ պատկերացում կարելի է կազմել այդ զրուգարանի ունեցվածքի մասին ¹։

Հովհան Որոտնեցին Գլաձորի համալսարանի իր ուսուցիչ մեծ մանկավարժ ու գիտնական Սասյի Նչեցու օրինակին հետևելով՝ գրիչներ էր ուղարկում ամենատարբեր վայրերի հայկական վանքերը, ինչպես և անհատ մարդկանց մոտ՝ ընդօրինակելու այն գրքերը, որոնք չկային Տաթևի գրադարանում։ Նույն գործունեությունը շարունակում է Գրիգոր Տաթևացին, և, այդպիսով, ձեռագիր մատյանների մեծ հարստություն է կուտակվում Տաթևի վանքի «արկղք գրոց»-ում։ Այդ գրականությունը հիմնականում օգտագործվում է համալսարանի ուսանողների կողմից։

Տաթևի համալսարանը նախապես եղել է Գլաձորում, ուր այն գործել է մոտ 60 տարի Պռոշյան իշխանների հովանավորությամբ։ Այստեղ գրադարանը ճոխանում է ուսուցչապետ Սասյի Նչեցու ջանքերով։ Ուսուցման նպատակներով նա իր աշակերտներին ընդօրինակել է տալիս հարյուրավոր հին ձեռագրեր, ըստ որում, որոշ ձեռագրեր, որոնք իբրև ամենօրյա դասագիրք էին ծառայում, ավելի շատ էին բաղմացվում։ Առհասարակ Սասյի Նչեցին առաջինն է Սյունիքում մեծ եռանդ ցուցաբերել իր տնօրինած գրադարանը հարստացնելու ուղղությամբ։ Նա ուղարկում էր իր սաներին Հայաստանի տարբեր վայրերը, ինչպես և Հայաստանից դուրս փնտրելու, գտնելու և ընդօրինակելու Գլաձորում չեղած ձեռագրեր։ Այդպես Գլաձորում ստեղծվում է շատ հարուստ գրադարան բաղկացած հայ հեղինակների, ինչպես և թարգմանական գրքերից, հատկապես մեծ է եղել ուսումնական գրքերի քանակը։

Գլաձորի և Տաթևի համալսարանների ավանդները գրքեր բաղմացնելու ուղղությամբ շարունակել են նրանցում ուսում առած սաները։

Օրինակ, Արճեշի Մեծոփա դպրոցում Գրիգոր Տաթևացու

¹ Գ. Հովսեփյան Մատենադարանները հին Հայոց մեջ։— «Պայքար» (նոր տարվա բացառիկ) 1946, էջ 8—9։

աշակերտ Թովմա Մեծոփեցին գրիչների մի մեծ խմբի ընդօրինակել է տալիս բաղմաթիվ ձևազարդեր և ճոխացնում տեղի գրադարանը ¹։

Սյունիքի հարևան Արցախում նույնպես եղել են միջնադարյան հայոց հարուստ գրադարաններ։ Հետաքրքիր է, օրինակ, Հույաստանի այս գավառի Վաղահաս գյուղի մի խաչքարի վրա եղած արձանագրությունը, ուր հիշվում է ոմն Հովհան Գրասեբ մականունով։ Այս գյուղում եղել է գրադարան ²։

Հիշատակելի են Հայաստանում X—XII դարերում հիմնադրված ու զործած կաթողիկոսական և արքայական գրադարանները։

Ստեփանոս Ասողիկ պատմիչի վկայությամբ 972—991 թվականներին Արգինա ավանում (Ախուրյանի ափին), ուր այդ ժամանակ գտնվում էր կաթողիկոսարանը, խաչիկ կաթողիկոսը հավաքում է մեծ քանակությամբ գրականություն և ստեղծում ճոխ գրադարան ³։

Շուտով Արգինայի դպրոցը և գրադարանը կաթողիկոսարանի հետ տեղափոխվում են Անի։

Կաթողիկոսական այս գրադարանը հիշատակվում է նաև Գրիգոր Տղայի և Տուգեորդու թղթակցությունների մեջ։ Իմիջիայլոց, Գրիգոր Տղան գրում է նաև. «Լաւ համարիմ ցմին մաշկալաթ գրով, քան ղգանձ լի ամանով» ⁴ (մաշկալաթ գրապահարանն է), այսինքն, որ մի պահարան գիրքը նրա համար ավելի թանկ է, քան ամանով լի գանձը, արտահայտություն, որ ինքնբնութիւնքյան վկայում է հնում գեպի գիրքը եղած ձեռագրումը հայոց մեջ։ Տուգեորդին ուղղակի հիշատակությունների կաթողիկոսական գրադարանի մասին ⁵։

Անիում եղել է նաև արքունի գրադարան, որի մասին հիշատակություն կա դեռևս 999 թվականից ⁶։ Այնուհետև 1041

1 Գ. Հովսեփյան Նույն տեղում, էջ 12։

2 Նույն տեղում, էջ 9։

3 Ստեփանոս Ասողիկ Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 185։

4 Գ. Հովսեփյան Նույն տեղում, էջ 8։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 9։

թվականին այդ «գրանոցի» մասին մի ձեռագրի կապակցութեամբ խոսում է Անիի գիտուն մարդկանցից մեկը՝ Սարգիս Սանահնեցին¹։

Կա տեղեկություն Անիի գրադարաններից մի ուրիշի՝ Ս. Փրկիչ եկեղեցու գրադարանի մասին։ Տեղում եղած արձանագրություններից երևում է, որ այն հիմնվել է 1035—36 թթ. հայոց մարզպան Տիգրան Պահլավունու (Ապլղարիպ) կողմից։ Այս իշխանը եկեղեցու գրադարանին նվիրել է մի շարք գրքեր և իզուր դրել դրքերը հավիշտակողների վրա («ուլ ի գրենոյս յափշտակէ») ²։

Շիրակի միջնադարյան գրադարաններից հիշատակություններ կան նաև Կարսի արքայական գրադարանի, ինչպես և Հուռմուս վանքի գրադարանի մասին։

Արևելյան Հայաստանի մյուս գրադարաններից հախ պետք է հիշել էյմիածնինը, որ հիմնված լինելով դեռևս V դարում՝ իր գոյությունը շարունակում էր ողջ միջնադարում՝ ունենալով ծաղկման և անկման շրջաններ։ Այս գրադարանը երբեմն առ երբեմն սուրբեր վայրեր է տեղափոխվել ապահովության համար։

Գետալեք (Գուշավանքը), որ միջնադարյան գրչության կենտրոններից է եղել և ունեցել բարձր կարգի դպրոց, հարուստ է եղել նաև դրականութեամբ։ Այստեղ գրատուն է կառուցում վանքի առաջնորդ (Մխիթար Գոշի աշակերտ) Մարտիրոսը. «Շինեաց և գրատուն մի գեղեցկաշէն յարկօք՝ արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար» ³։ Այս գրադարանի հարստացման աղբյուրներից մեկը հույնպես նվիրատվություններն են եղել, որոնց մասին կան վկայություններ ⁴։ Հետագայում է, որ նշանավոր Կիրակոս Գանձակեցին իր գրքերից 20-ը նվիրել է Գետալեքի գրադարանին ⁵։

¹ Գ. Զաւրեանայան Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1869, էջ 445, Մ. Արեղւան նշվ. աշխատութ. էջ 16։

² Ղ. Ալիշան Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 81—83։

³ Կիրակոս Գանձակեցի Պատմություն հայոց, էջ 222։

⁴ Օրինակ, նույն տեղում, էջ 223։

⁵ Գ. Հովսեփյան։ Նույն տեղում, էջ 10։

Հարուստ գրադարան է եղել Գեղարդում (Այրիվանք)։ Այդ գրատան հարստությունը երևում է թեկուզ Մխիթար Այրիվանեցու (1222—1239/91) մատենագիտական շատ ընդարձակ գիտելիքներից, որ արտահայտվել է վանքում եղած գրքերի ընդօրինակություններից նրա կազմած Ճառքեփրի նյութերով¹, խնչսիս և նրա հեղինակած ժամանակագրության մեջ տրված մատենագիտական ցանկերով։

Արագածի լանջին նշանաւոր է եղել Հովհանավանքի գրադարանը, որից օգտվել է Զաքարիա Սարկավագ պատմիչը։ Այստեղ ավելի հռչակված է եղել Սաղմոսավանքի գրատունը, որի շինքը 1235-ին կառուցել են Քուրդ և Խբրիշահ Վաշուտյանները համաձայն իրենց թողած արձանագրության²։ 1441 թվից հետո, երբ Սսից հայոց կաթողիկոսարանը տեղափոխվում է էջմիածին Սաղմոսավանքի գրականությունը (ինչպես և մի շարք այլ վանքերի գրականություն) բերվում է էջմիածին, որով և ճոխանում է այստեղի մատենադարանը։

Ուշադրություն է գրավում այն, որ միջնադարյան աղբյուրներում Սաղմոսավանքի գրադարանին երբեմն հատուկ տեղ է տրվում։ Օրինակ, հայ պատմիչներին նվիրված մի հին մատենագիտական ցանկի վերջում ասվում է, որ «Ամենայն պատմագիրք 62, որ գտանին ի Սաղմոսավանք և ի Սիս»³։ Երեմիա Զեւպիի (XVII դար) մի աշխատության բնագրում ուրիշի ձեռքով ավելացված է. «Պատմագիրք 62 ասեն և ոմանք 28 գոլ Հայոց, զորս ժողովեալ ումամ ութ գիրք շինեալ է, ի Սաղմոսավանքն և ի Սիս»⁴։

Սաղմոսավանքի գրականությունը էջմիածին տեղափոխելուց հետո այս վանքի գրադարանը շարունակում է գոյություն ունենալ (ըստ երևութի, գրքերի մի մասը մնում է), որի մասին և կան հիշատակություններ⁵։

Լավ գրադարաններ են եղել Կիլիկիայի մի քանի վայրե-

1 Մաշտոցի անվ. Մատ., ձեռ. № 1500։

2 Ղ. Ալիշան Այրարատի վեհետիկ, 1890, էջ 162—163։

3 Ղ. Ալիշան Հայապատում, վեհետիկ, 1901, էջ 14։

4 Նույն տեղում էջ 13։

5 Գ. Հովսեփյան։— «Պայքար», 1946 թ. բացառիկ, էջ 10։

րում, ինչպես, օրինակ, արքայական գրադարանը, որի մասին կա հետաքրքիր հիշատակություն¹։

Այնուհետև նշանավոր է եղել Սկևռա դպրոցի գրադարանը, որի գրքերի մի զգալի մասը պահպանվել է։ Գրադարաններ եղել են նաև Հռոմկլայում, Դրազարկում և Կլիկիայի այլ վանքերում։

Կա հիշատակություն 1366 թվականին Հովհան Եպիսկոպոսի կողմից Կաֆայում հարուստ գրադարան հիմնվելու մասին։

Հիշատակություններ կան նաև Վասպուրականի Վարազա և Նարեկի վանքերի գրադարանների մասին։

Եղել են նաև մասնավոր անձանց պատկանող գրադարաններ, օրինակ, Գրիգոր Մազիստրոսը, որ, ինչպես ինքն է ասում, կարգացիլ էր ժամանակի բոլոր կարևոր գրքերը², իր սեփական (շարժական) ճեմարանի հետ ունեցել է նաև գրադարան։

Միջնադարյան Հայաստանի գրադարանների մի կարևոր կողմը, ինչպես ասվել է, անվտանգության և այլ նկատառումներով՝ գրականությունը քարայրներում պահելն էր։

Բնորոշ էր նաև գրադարանների գրքային ունեցվածքը մի տեղից մյուսը տեղափոխելը։ Օրինակ, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Հովհաննես Վանականը (1181—1251) Երզնկանք բերդի մոտ եղած վանքից գրադարանը տեղափոխում է Տավուշ բերդի մոտ մի քարայր, այն բանից հետո, երբ Սուլթան Զալաադդինը ավերում է վանքը³։ Մի ժամանակ անվտանգության նկատառումներով Հովհանավանք է տեղափոխված եղել էջմիածնի հնագույն մատենադարանը⁴։ Այս կարգի տեղափոխությունների մասին կան և ուրիշ տեղեկություններ։ Նույնիսկ, հատկապես հրահանգավորվել է գրքերը լուրջ վտանգի պահին թաքցնելու կարգը։ Մի հիշատա-

1 Կ. Հովսեփյան Նույն տեղում էջ 11։

2 Գրիգոր Մազիստրոս Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 54—55։

3 Կիրակոս Գանձակեցի Պատմություն Հայոց, էջ 243—244։

4 Ս. Աբրահամյան Մատենադարանի ձեռագիր գանձերը, Եր., 1959, էջ 8։

կարանի մեջ, օրինակ, ասված է, թե «ի ժամանակի փախըստեան կամ խռովութեան զգիրք ի քաղաքն տարէք և պահեցէք, և ի ժամանակի խաղաղութեան վանքն տարէք»¹։ Այստեղ էլ ահա ավելի ապահով վայր է համարվում քաղաքը (եթե այդ բառի տակ քարայր չի հասկացվում)։

Բազմաթիվ են եղել նաև դեպքեր, երբ վանքերի գրակա-նությունը թաքցրել են մոտակայքում ուրևէ այլ ձևով։ Հարմար քարայրներ ընտելու դեպքում, գրքերը հաճախ թաղել են հողի տակ։ Օրինակ, Լենկթեմուրի արշավանքի ժամանակ Աղթամարի վանքի գրապետ Ղևոնդը գրադարանի գրքերը լցրել է սականների մեջ ու թաղել հողի տակ²։ Մի ձեռագրի հիշատակարան պատմում է, թե ինչպես 1471 թվականին Տարոնում թուրքերի բռնությունների ժամանակ Ս. Առաքելոց վանքի միաբանները այնտեղի գրքերը («բազում սուրբ գրեանք») թաքցրել են հողի տակ, ուր դրանք մնացել են բավական երկար ժամանակ³։ Այդպիսի դրվագներ շատ կան նկարագրված և դրանք, անշուշտ, եղածների մի մասն են լուկ։

Ձևայած նախազգուշական միջոցներին, միշտ չէ, որ հնարավոր է եղել փրկել հայոց հին գրադարանները։ Շատ դեպքերում գրականությունը թալանվել է, ձեռագրերը փչացվել, երբեմն էլ ասպատակողները այրել են հին մատյանները։

Հայ պատմիչներից շատերն են խոսում այն մասին, թե ինչպես են նվաճող բռնակալները ոչնչացրել հայ հին գրադարանների ունեցվածքը։ Բացի Ստեփանոս Օրբելյանի վերը հիշված վկայություններից կան և շատ ուրիշները։

Սեբեոսը պատմում է Ներսես Գ իշխանցի կաթողիկոսի օրոք (641—661) Հայաստան կոտարված արշավանքների պատճառով մեծ քանակությամբ հայերեն գրքերի ոչնչացման

1 Գ. Հովսեփյան Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից։ Հալեպ, 1930, էջ 6։

2 Ղ. Ալիշան Հայապատմ. էջ 11։

3 Գ. Զարեանցյան Մատենադարան հայկական թարգմանությանց, Վենետիկ, 1839, էջ 149։

մասին: Մովսես Կաղանկատվացին խոսում է «անօրեններին» կողմից մեծ քանակությամբ գրքեր հրկիզվելու մասին ¹:

Կիրակոս Գանձակեցին էլ վկայում է, թե ինչպես 1241 թվին մոնղոլ-թաթարները Կարին քաղաքի գրադարաններում եղած բազմաթիվ գրքերը («Անթիս գոյին անդ կտակարանք աստուածային գրոց՝ մեծամեծաց և փոքունց») թալանում են, հետո շնչին գնով վաճառում ²:

Որոշ տեղեկությունների համաձայն էլ Լենկթեմուրը Հայաստանի գրադարաններից մեծ քանակությամբ ձեռագրեր է թալանել, տարել ու փակել Սամարղանդի իր աշտարակի մեջ ³:

Պետք է սուսել սակայն, որ Հայաստանի հարուստ գրադարանները միայն օտարների կողմից չէ, որ վնաս են կրել, բայց այդ մասին քիչ հետո:

Վկայություններ կան նաև ույն մասին, որ միջնադարյան խառը ժամանակներում թաքցված հայերեն գրականությունը, երբեմն այնպես էլ մնացել է թաքստոցում: Օրինակ, ասվում է, որ Հայաստանի տարբեր վայրերի գրադարաններից բերված հսկայական քանակությամբ գրքեր (միայն Սսից բերված «50 լիտր գիրք») սլահված մնացել են Մակու քաղաքի մոտ մի ջարաբերդում ⁴:

Մի կարևոր հարցի կասկածնությունը անհրաժեշտ է հիշել Երզնկայի մոտ գտնվող Սեպուհ լեռան վրայի վանքերը, ուր նույնպես եղել են բարձր կարգի ուսումնարաններ և գրադարաններ: Հարուստ է եղել այդտեղ Գրիգոր Լուսավորչի վանքի գրադարանը, որ հիմնել էր Մովսես Երզնկացին XIII դարի երկրորդ կեսում:

Մովսեսը եղել է ժամանակի շատ զարգացած մարդկանցից մեկը, Կիլիկիայի նշանավոր Գրիգոր Սկևռացու աշա-

1 Մովսես Կաղանկատվացի Պատմութիւն Աղուանից Աշխարհի: Մոսկվա, 1860, էջ 10, 274:

2 Կիրակոս Գանձակեցի Նույն տեղում, էջ 279—280:

3 Ղ. Ալիշան Հայագատում: էջ 12:

4 Նույն տեղում:

կերտը: Մովսեսի աշակերտներից մեկը 1314 թ. գրած հիշատակարանը մեջ¹ պատմում է, թե ինչպես Մովսեսը Կիլիկիայում հորդորում է մի խումբ երիտասարդների կազմել ուսումնասեր միաբանություն և Կիլիկիայից մեծ քանակությամբ գրքեր (աբազում գրեմօք) առած իր աշակերտների հետ գալիս, հաստատվում է Սեպուհ լեռան վրա, Գրիգոր Լուսավորչի վանքում: Այս վանքը այդ ժամանակ լքված վիճակում է լինում: Մովսեսը հիմնում է ուսումնարան ու գրադարան, որը և սկսում են ճոխացնել նոր գրքերով:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է XIII դարի վերջում Գրիգոր Լուսավորչի վանքում Մովսես Երզնկացու կողմից ընդօրինակված մի «Աստվածաշունչ»²: Այստեղ նախ նկատվում է որոշակի մատենագիտական աշխատանք: Ձեռագրում գտնում ենք կտակարանների առանձին գլուխների մի ինքնօրինակ ցանկ, որը խորհուրդ է տրվում հետագա ընդօրինակողին օգտագործել գրքի գլուխները վերնագրելու համար:

Բայց շատ ավելի ուշագրավ են գրքի սկզբում (էջ 12բ) և ամենավերջում եղած հրկու հիշատակագրերը, որոնցում առաջադրված է որոշակի տեսակետ ժամանակի գրադարանների դերի, գրքերի օգտագործման, նրանց նկատմամբ անհրաժեշտ խնամքի մասին:

Հիշատակագրերը վանքի գրադարանի հարստություններն օգտագործելու վերաբերյալ հրահանգի բնույթ ունեն³: Ըստ բանասերների (Մ. Տեր-Մովսիսյան, Գ. Հովսեփյան) այս գրությունների հեղինակն ինքը՝ Մովսես Երզնկացին է⁴: Ահա

1 Ղ. Ալիշան Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 106:

2 Ձեռ. № 177:

3 Այս հիշատակագրերը հատվածաբար մի քանի անգամ հրապարակվել են, ինչպես, օրինակ, Մ. Տեր-Մովսիսյանի Նշվ. աշխատությունում, էջ 109—110, Գ. Հովսեփյանի «Հայ արվեստի և մշակույթի պատմությունից» գրքում (Հալեպ, 1930, էջ 6), Ա. Մովսիսյանի «Ուրվագծերում» էջ 299—300 և այլն:

4 Հիշատակագրությունների ձեռագիրը և թանաքի գույնը տարբեր են եույն և մոտակա էջերի գրից (թվում է նաև՝ առհասարակ Մովսեսի գրից), և պարզ նկատվում է, որ երկու հիշատակագիրն էլ ավելացվել են ձեռագրի

այդ հիշատակագրերից առաջինը «Ով եղբարք շատ տշխատեցայ և սակաւ վայելեցի. որ դայք մեր զկնի և հանդիպիք այսմ խահի, մեզ ասացէք Տէր ողորմի...»

Որ զգիրքս զաստուածաշունչս և կամ զմեկնչերն և զնորբերն և զինչ վարդապետական գիրք կա խնայէ դասասաց վարդապետի. փակեալ լիցի նմա դուռն արքայութեան աստուծոյ զի գրեանքդ վասն դասի ենք դրել ի դուռն սուրբ լուսաւորչիդ. որ փակէ զդա, փակեալ լիցի նմա կենացն մուտ. ամէն»¹:

Ինչպես տեսնում ենք, այստեղ հրահանգվում է այնպես, որ. եթե որեւէ մեկը այս աստվածաշունչ գրքերը կամ մեկնչականներն ու նորբերը և առհասարակ վարդապետական գրքերը կխնայի որեւէ դասասաց ուսուցչի (դասախոսի) տալու, նրա համար արքայութեան դռները թող փակ լինեն, Եվ ավելացվում է, որ «այս գրքերը Ս. Լուսավորչի վանքում հավաքված են ուսուցման համար»:

Մյուս հիշատակագիրը նույն ոգով է գրված և ավելի խիստ է. «որ զաստուածաշունչս և կամ զայլ վարդապետական գրեանք որ ի սուրբ Լուսավորիչս կա, յաղագս յաշաղանաց խնայէ՝ որ ի շուրջակա վանօրեայքդ դասատուն լինի, եղիցի ընդ անիծիւք, իբրև զայն ծառայն, որ թաքոյց զարծաթ տեառն իւրոյ և իբրև զայն, որ ինքեանք ոչ մտին և որ մտանէին, չտային թոյլ մտանել եւ զնոյն անէծս ծառանգեսցեն: Ապա որ կարդասցէ, խնամով պահեսցէ: Եւ այս բաւական է, զի զէնն զինւորին է, և կատարողքն եղիցին արհնեալ»²:

Աշխարհաբար այսպես կլինի. «նա ով Ս. Լուսավորչի վանքում եղած աստվածաշունչները և կամ մյուս վարդապետական գրքերը նախանձից կխնայի և չի տա շրջակա վանքերի դպրոցներին, թող անիծված լինի», ապա ասվում է.

մեչ միննույն մարդու կողմից այն ժամանակ, երբ ողջ ձեռագիրն արդեն ընդօրինակված է եղել (ըստ երևույթին, ընդօրինակումից ոչ շատ հետո): Մի թյուրիմացութեամբ այս հիշատակագրերի հեղինակ է համարվում Հովհաննես Նրզնկացին (Ա. Մովսիսյան Ուրվագծեր, էջ 299—300),

1 Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. Մ 177, էջ 12ա:

2 Նույն ձեռագրում, էջ 608բ—609ա:

«Իսկ ով որ կկարդա այդ գրքերը թող խնամքով վարվի ու պահի: Եվ այդքանը բավական է, որովհետև զենքը պատկանում է զինվորին: Եվ օրհնյալ լինեն կատարողները»:

Ինչպես տեսնում ենք, արտահայտված է շատ լայն հայացք գրադարանային հարստություններն օգտագործելու վերաբերյալ: Գիրքը կարդալու համար է, ինչպիսի և ուսուցանելու և ոչ թե փալ պահելու, ուրեմն որքան շատ կարդացվեն գրքերը այնքան նրանք կծառայեն իրենց նպատակին: Անեծք է տրվում այն մատենապետին, որ հարկան դպրոցներից գիրք պահանջող դասատուներին պիտի մերժի: Կարևոր է նաև այն, որ պահանջ է դրվում գրքերի հետ խնամքով վարվել, այսինքն՝ լավ պահպանել: Եվ սա միակ պահանջն է, որ ներկայացվում է ընթերցողին, գրքից օգտվողին:

Այս հիշատակագրությունների կապակցությամբ պետք է ասել նաև մատենագիտական մի անվանման մասին «վարդապետական գրեանք» («գգիրս զաստուածաշունչս և կամ զմեկնչերն և զնորբերն և զինչ վարդապետական գիրք կա» և «Աստուածաշունչս և կամ զայլ վարդապետական գրեաք»): Մ. Տեր-Մովսիսյանը հակված է այստեղ տեսնելու գրքերի չորս տեսակների՝ Աստվածաշունչ, մեկնիչներ, նրբեր և վարդապետական, թեև իրականում վարդապետական անվանումն այստեղ վերաբերում է թվարկված նախորդ տեսակներին և չթվարկվածներին, որոնք եղել են Ս. Լուսավորչի գրատանը: Վարդապետական անվանումը հանդիպում է նաև միջնադարյան մատենագիտական ցանկերում: Օրինակ, այդպես է անվանել Ամրդուլու վանքի մատենադարանի գրացուցակը 17-րդ դարի նշանավոր մատենագետ Վարդան Բաղիշեցին («Այս են վարդապետական գրեանք»): Պարզվում է, որ առհասարակ եկեղեցու կողմից ընդունելի թե՛ կրոնական, թե՛ արտաքին բոլոր կարգի գրքերը վարդապետական են կոչվել, որ նշանակել է ուսումնական, հանձնարարելի,

1 Մ. Տեր-Մովսիսյանը նշվ. աշխատութ. էջ 229: 2. Անասյանը ուշագրավ գիտողություն ունի այս մասին (տե՛ս նրա «Հայկ. մատենագիտ.» էջ XXII—XXIII):

կամ այնպիսի գրքեր, որոնք պետք է կարդացվեն և իմացվեն ուսուցիչներին, վարդապետներին և ուսանողներին կողմից:

Միշնադարյան հայ գրսողարանների ունեցվածքի բաժանումը հրեք տեսակի՝ Աստվածաշունչ, մեկնիչներ և նրբեր հետաքրքիր է նրանով, որ, ինչպես պիտի տեսնենք, բերված հիշատակագրից և Մովսես Երզնկացու ժամանակից ավելի վաղ շրջանում Հովհաննես Սարկավագի կաղմած մատենագիտական ցանկում և միշնադարյան մի շարք այլ գրացանկերում գրքերի խմբավորման հիմքում նույն կամ նման սկզբունք է դրված:

Առհասարակ, հայերեն ձեռագրերի, ինչպես և հնատիպերի հիշատակարաններում շատ հետաքրքիր տեղեկություններ կարելի է գտնել գրքի, նրա դերի, նշանակության և օգտագործման վերաբերյալ: Օրինակ, մանրամասն հրահանգներ կան գրքի հետ վարվելու մասին: 1413 թվին Եկեղյաց գավառի Ս. Ստեփանոս վանքի Սամվել գրիչը գրում է. «Եւ ով ոք հանդիպիք այսմ տառի (այսինքն՝ գրքի), կարդալով կամ տեսանելով կամ զաղափարելով, նախախնամելով պահեսցէ դիրքս և լաթով բռնեսցէ և մի իշխեսցէ ի դրոցէս պարապ թուղթ կտրել կամ ի յիշատակարանէս քերել և այլ անուն գրել»¹:

Ձեռագիր մատյանները խնամքով պահելու մասին կան և ուրիշ հրահանգներ, ուր խնդրվում է գրքերի մեջ, լուսանցքներում գրառումներ չանել, գրքի էջերը չկտրտել, չծակծկել, առհասարակ ձեռագրերը մաքուր պահել, խոնավությունից ու կրակից պահպանել, գրավ չդնել, չվաճառել և այլն: Սակայն այդ ամենը չէր նշանակում գրքերը թաքցնել ընթերցողից, ընդհակառակը, գրքի հետ վարվելու ձևերը սովորաբար հիշեցվում են այն նկատառումով, որ դրքերը պիտի կարդացվեն, տրվեն յուրաքանչյուր պահանջողի, իսկ ընթերցողին գիրք մերժողը միշտ այպանվում է: Նույնիսկ երգիծական բանաստեղծություններ են գրվել այն անձանից մասին, որոնք

1 Գ. Հովսեփյան Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 4:

իրենք գիրք չկարդալով՝ ուրիշներին էլ են զլացել գրքեր տալ¹։

1446 թ. գրված մի հիշատակարանի մեջ ասված է. «գիրք փակեալ կուռք են», այսինքն՝ փակված գիրքը այլևս գիրք չէ, այլ կուռք և որ գիրքը պետք է կարդացվի²։

Չնայած հայ գրադարաններին հասնող տարբեր վտանգներին, միջնադարում նրանք իրենց գոյութիւնը միշտ էլ պահպանել են։ Հետաքրքիր է XV դարի պատմիչ Մխիթար Առաքելացու ասածն այն մասին, որ նրա ժամանակ, այն դժվար տարիներին, եթե հնար լինէր հավաքել Հայաստանի բոլոր գրքերը, ապա նրանք կկազմէին ավելի քան «զհազար բեռ»³, այսինքն հազար ուղտի բեռ, որ գրականութեան շատ մեծ քանակ է։



Հայաստանի մշակութիւթի համար հստկապես ծանր ժամանակներ են սկսվում Հենկթեմուրի արշավանքներից սկսած (XIV դար), իսկ XVI դարից, երբ սկիզբ են առնում թուրք-պարսկական պատերազմները, երկրում մշակութային ամայութիւն է իշխում։ Վեր կյանքը այն ժամանակներից ընթացել է մուրճի և սալի մեջք, — գրում է Գ. Հովսեփյանը⁴։

Սակայն XVII դարում նկատվում է հայ մշակութային կյանքի աշխուժացում։ Կարեւոր դեր են խաղում Եմրոպայի ու Ասիայի հայկական գաղութները և ցլխավորապես Նոր Զուլան, որի գրադարանը այդ ժամանակ բավական հարստանում է նորանոր ձեռագրերով։ Հայաստանի բարեկրորդումներին էլ Ն. Զուլան եռանդուն մասնակցութիւն է ցույց տալիս։

Հիշատակութիւններ կան այն ժամանակաշրջանից նաեւ

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում։

3 Ղ. Ալիշան Հայապատում։ էջ 12։

4 Գ. Հովսեփյան։ — «Պայքար» Նոր տարվա բացառիկը, 1946, էջ 12։

Տիգրանակերտի Ս. Կիրակոսի և Հուդիտայի գրատան մասին¹։

Ավելի շատ աեղեկություններ կան Բաղեշի Ամրոգու (Ս. Կարապետի) վանքի գրադարանի մասին, որը ճոխացել է ալդտեղի առաջնորդ Վարդան Բաղիշեցու օրոք։ Վերջինս, ինչպես կտեսնենք, կազմել է այդ գրադարանի գրացուցակը։

Հարավային Հայաստանի մեջ XVII դարում եղած գրադարաններից աչքի է ընկել Լիմ անապատինը։ Ըստ 1693 թվականի մի Ավետարանի հիշատակարանի այնտեղ եղել է 3124 գիրք, «որը նման աղիւսաց շինութեանց սրայիւ եղեալ են ի վերայ միմեանց ի ձախակողմեան խորանիս սուրբ տաճարիս»²։

Երբ Լիմ անապատն է այցելում այոյժ գիտնական, բարեմտական» Դրիգոր Քամիլ «քաջաբարբառ վաղապետը», այստեղի գրադարանում լուրջ վերանորոգումներ են կատարվում։ Հիշատակարանը նախ պատմում է, թե ինչպես են միաբանները գրականությունը դասակարգում և դասավորում ըստ բովանդակության (սխտեմատիկ կարգով)։ Նախ գրքերը կրում ու դուրս են բերում եկեղեցու գավիթը, ապա. «քաջուսոյց միաբանք աշխուժիւ թեքթեքեցին զգրեանս, թէ ոյք իցեն Սաղմոս, Ժամագիրքս, շարականս, պատմութիւնք ազգային և յօտարս, քարոզամտեանս, տօնացոյցս, ճառքնտիրս, յայսմաւուրք և բազումք ըստ կարգի և զնմանութեան, գրութեան և չափածոյ։ Նաւթ տիւ և գիշեր ճօրով շարակարգեցինք»³։

Այսպես «քաջուսոյց», գիրք լավ հասկացող վանականները շաբակագում են, այսինքն՝ գրադարանային դասակարգման են նեթարկում ողջ գրականությունը։ Ապա վանիկանշում են Զիհանշուհ և Շահրիշար ատաղձագործներին որոնք գրադարանի համար սկսում են պահարաններ պատրաստել։ Հետաքրքիր է, որ շրջակայքի ժողովուրդն է կամովին վաբձատրում վարպետներին պաղարանի պահարաններ պատրաստելու համար։

1 Գ. Հովսեփյան Նույն տեղում։

2 Նույն տեղում, էջ 13։

3 Նույն տեղում։

Վարպետները պատրաստում են 22 պահարան, դասակարգված գրքերը գեղեցիկ շարվում են պահարանների մեջ («յոյժ հաճելի աչաց տեսողաց»)։ Այս վանահայրը բոլորի կողմից սիրված Թումային նշանակում է կառավարիչ «վասն մատենադարանիս», իսկ իրեն՝ հիշատակարանի հեղինակ Հովհաննեսին՝ օգնական։ Օգնականի պարտականությունն էր ընթերցալուսույթունը «վասն ցրուելոյ մատեանս ընթերցման միաբանից»։

Ուշագրավ է նաև այն, որ Հովհաննեսը բոլոր գրիչների սովորության համաձայն հիշատակարանի վերջում խնդրում է հիշել իր ուսուցչին, ծնողներին, մերձավորներին և ի վերջո «իսկ սրբասուրբ մաղթանս ձեր՝ յիշեցէք սուրբ մատենադարանս»։ Այդքան սիրելի է եղել գրադարանը գրքի այդ համեստ մշակի համար։

Անցյալի հայ մատենագիրները, վանքերի քարեղեն արձանագրությունները այսօր գեղեցիկ վկայություններ են մեզ տալիս այն մասին, թե անցած այն դարերում ինչպիսի սիրով, գոյովանքով է հայ ժողովուրդը վերաբերվել գրադարաններին, որքան զոհողություններ, զոհաբերություններ արել նրանց ծաղկման ու պահպանման համար։ Դա, անշուշտ, գրքի նկատմամբ հայ ժողովրդի բացառիկ ջերմ վերաբերմունքի մի արտահայտությունն է եղել։ Հայ գիրքը միջնադարում համարվել է սրբություն, կենսատու ուժ ունեցող։ Հայերեն գրքերի առատությունը դիտվում էր բարգավաճում, նրանց ոչընչացումը՝ մեծագույն աղետ։

Հետաքրքիր հարց է այն, թե արդյոք սովորական ժողովուրդը ընթերցասե՞ր է եղել. անցյալի մեր գյուղացիները, արհեստավորները գրքեր կարդացե՞լ են թե ոչ։ Անկասկած է, որ միջնադարում գյուղացիների ու արհեստավորների մեջ գրասերներ, ընթերցասերներ շատ են եղել։ Այդ են վկայում այն արձանագրությունները, ուր խոսվում է գյուղացիների կողմից գրադարաններին նվիրված գրքերի մասին (գիրք ունեցողն է նվիրում)։ Հայտնի է նաև, որ հին ու միջնադարյան Հայաստանում եղել են աշխարհիկ դպրոցներ, ուր ազնվականների երեխաներից բացի սովորել են նաև ռամիկների զա-

վականներ, որոնք դպրոցն ավարտելուց կամ թողնելուց հետո պետք է, որ շարունակած լինեն ընթերցասությունը: Թոնդրակեցիները հիմնականում գյուղացիներ են եղել, իսկ թոնդրայան շարժումն իր գաղափարախոսությունն ու գրականությունն ունեցած շարժում է եղել, նրա մասնակիցների գոնե մի մասը պետք է որ կարդար այդ գրականությունը:

XIX—XX դարերի մեր հեղինակներից շատերն են նկարագրում գրասեր դյուղացիների, որոնց ընթերցասիրությունը սերնդե սերունդ ավանդաբար փոխանցվել է շատ հնից: Երբեմն գրոհները կամ ազդագրագեղունելը նույնիսկ տրտնջացել են, որ հնում գյուղացիների մեջ եղած ընթերցասիրությունը նոր շրջանում նւազել է:

Հիշենք միայն նոր հեղինակներից հայ հին գյուղի լավագույն գիտակ Ակսել Բակունցին: Ուշագրավ է «Խոնարհ աղջիկը» ինքնակենսագրական պատմվածքից (1915 թ. իրողություններ) մի գեղջուկի՝ Օհան Կալոյ (իրականում Հակոբ ապեր) հնավանդ ընթերցասիրությունը: Բակունցը նկարագրում է, որ երեկոները նա հետաքրքիր պատմություններ էր անում, իսկ մենակ եղած ժամանակ «բուխարու առաջ բաց էր անում շաբականի գիրքը», ապա ավելացնում է. «Օհան ապերը գրքեր շատ ուներ, հին գրքեր»: Բակունցը պատմում է, որ այդ սովորական գեղջուկը ցերեկները հանդում ու գոմում ժանր աշխատանք էր տանում, իսկ երեկոյան ընդհատված տեղից շարունակում շաբակնացի ընթերցանությունը: «Օհան ապերը նահապետական բարքով մարդ էր: Հիմա մեր գյուղերում նման մարդիկ այլևս չկան»,—բնութագրում է այդ գյուղացուն հեղինակը¹: Պարզ է, որ Օհանը (Հակոբը) հին ժամանակների վերջին մոհիկանն է եղել, իսկ հնում այդպիսի մարդիկ քիչ չեն եղել հայ գյուղերում: Բակունցը հայ գյուղացիության անցյալը պեղելու իր գրական հայտնի նախասիրությամբ այստեղ ևս նկարագրել է դարերի խորքից եկող հայ գյուղացիության հակումներից մեկը:

1 Մենք եղել ենք Սիսիանի շրջանի Լոր գյուղում, որը նկարագրված է այս պատմվածքում: Տեղացիները ցույց տվեցին Օհան (Հակոբ) ապուր տունը և լիովին հաստատեցին Բակունցի դրածները նրա մասին:

Գյուղացին օգտվե՞լ է միջնադարյան հայ գրադարաններից: Այս հարցին փոքր-ինչ դժվար է պատասխանել, սակայն հիշենք զբքի ու գրադարանների դերի լայն ըմբռնումը միջնադարյան Հայաստանում, վերը բերված փաստաթղթերի որոշակի դրույթը՝ որ զիրքը պետք է տալ կարդացողին և այլն: Այս ամենից արդյոք հնարավոր չէ՞ ենթադրել, որ «զիրքը ընթերցողին» նշանաբանով ասորող գրադարանը կարող էր զիրք տրամադրել նաև այս կամ այն ընթերցասեր գյուղացուն: Խոսքը, իհարկե, մեծամիտ աբեղաների մասին չէ, որոնց նշովում են վերոհիշյալ հրահանգները դրբերը ընթերցողից խնայելու համար:

Ճեռագրացուցակներ

Մատենագիտական աշխատանքը հենվում է գրադարանների զբքային ունեցվածքի վրա: Իսկ գրադարանում մատենագիտական աշխատանքն սկսվում է այդ գրադարանի գրացուցակի (կատալոգի) կազմամբ:

Գրադարանների գրականության ցուցակների (կատալոգների) կազմումը հենց իսկական մատենագիտական աշխատանք էր: Յավոք, մեզ չեն հասել միջնադարյան ամենից ավելի հարուստ գրադարանների գրացուցակները: Մեր ձեռքի տակ կա միայն երկու այդպիսի գրացուցակ, մեկը Սաղմոսավանքի գրանոցինը, կազմված XV դարում¹, մյուսը Ամրդոլու վանքի (Բաղեշ) գրադարանինը՝ կազմված արդեն XVII դարի երկրորդ կեսին², Ձեռագրերի և հնատիպերի մեջ (եբրեմն սլավոնականների վրա) պատահում են նաև անհատ մարդկանց ունեցած գրքերի ցուցակներ: XV դարից մնացած այդպիսի մի ցուցակ հրատարակել է Լ. Խաչիկյանը «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» զբքի մեջ (Մաս Ա., Եր., 1955, էջ 208):

Քանի որ գրադարանների ավելի վաղ շրջանի ձեռագրա-

1 «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 167—169:

2 «Արարատ», 1905, էջ 178—179:

ցուցակներ չեն պահպանվել, ուստի եղածների մասին ժամանակագրական կարգով կխոսվի իր տեղում, իսկ այժմ տեսնենք հայ մշակույթի վերելքի տարիներին ինչպես է զարգացել մատենագիտական աշխատանքը հայոց մեջ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պատահականություն չի կարելի համարել, որ մշակութային վերելքի դարաշրջանի մատենագիտական առաջին ամենալուրջ աշխատությունը ստեղծվել է ժամանակի ամենահարուստ գրականությունն ունեցող Հաղբատի վանքում: Այդ աշխատության հեղինակը միջնադարյան հայ մտքի ամենապայծառ դեմքերից մեկն է՝ Հովհաննես Սարկավագը:

Դժվար է գտնել այն ժամանակներում մի ուրիշ անձնավորություն, որ այնքան սերտորեն կապված լիներ գրքի, գրականության, գրադարանի հետ, այնքան շատ կարդացած լիներ և այնքան լավ իմանար հայերեն լեզվով եղած ողջ գրականությունը, ինչպես Հովհաննես Սարկավագը:

«Իմաստասեր», «մեծն Սոփեստես», «սյոետիկոս», «մեծիմաստ»¹ և ուրիշ յաղսիսի անուններով են մեծարում Հովհաննես Սարկավագին նրա ժամանակակիցները և հետագու պատմիչները: Վարդան Արևելցին նրա դործը անվանում է լույս, լույսի ճառագայթ²: Իրոք, որ Հոռվա անդնդախոր, մութ ձորերում, այն անցած, հեռավոր դարերի մեջ Հովհաննես

1 Այս մականուններից մեկը՝ «Սոփեստես» Ղ. Ալիշանը գործածում է իրրե հատուկ անուն (Հովհաննես Սոփեստես)՝ Հովհաննես Սարկավագ ընդունված անվան փոխարեն (Ղ. Ալիշան «Հուշիկք», հտ. 2. Վենետիկ, 1921, էջ 248—273), Պրոֆ. Ա. Աբրահամյանը իրրե հատուկ անուն է գործածում «Իմաստասեր» մականունը, տե՛ս Ա. Աբրահամյան «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը»: Եր., 1956, Այս դեպքում արդյոք շփոթություն չի՞ առաջանա 8-րդ դարի Հովհաննես Իմաստասերի (Օձնեցու) անվան հետ:

2 Մեծի՞ն Վարդանյ Բաբճաբեդեցույ Պատմութիւն տիեզերական: Մոսկվա, 1861, էջ 159:

Սարկավագը մի իսկական լուսատու է եղել՝ իր անբասիր, պայծառ կյանքով, իր անսպառ մտքի ուժով, անընդգրկելի զարգացմամբ: Ղ. Ալիշանը խորագնին ուսումնասիրելով Հովհաննես Սարկավագի աշխատությունները՝ զարմանք է հայտնում այն մասին, թե Հայաստանում կրթություն ստացած մարդը ինչպե՞ս կարող էր այդպիսի աներևակայելի զարգացման հասնել¹, և յոդ զարմանքը Հայաստանում այն ժամանակ կրթական գործի բարձր մակարդակն է վկայում միայն:

Շատ են գրել Հովհաննես Սարկավագի մասին XIX—XX դարերի հեղինակները և ուսումնասիրողները², միշտ մեծաբել նրան: Ա. Շիրվանզադեն Սարկավագին անվանում է «Մեր մատենագրության արծաթյա դարի վայլուն աստղերից մեկը»³, Ղ. Ալիշանը՝ «բնատուր մեծ հանճար՝ կրթությամբ և երկար ուսմամբ կրկին մեծացած և զորացած»⁴: Իրոք, այսօր երբ ուշադիր ծանոթանում ենք նրանից պահպանված գրական ժառանգությանը, հիացմունքով ենք նկատում, որ Հովհաննես Սարկավագը XI—XII դարերում հայ ու, թերևս, ողջ աշխարհի գիտության մեջ հավասարը չունեցող անձնավորություն է եղել:

Հովհաննես Սարկավագը ծնվել է Հայաստանի Արցախ նահանգի Փառխաս (Փառնես) գավառում (ներկայիս Դաշքեսանի մոտերքը)⁵, 1044—1054 թվականների մեջ (ըստ Հ. Ոսկյանի, «Հանգես ամսօրյա», 1925, էջ 27): Մանուկ հասակից բերվել է Հաղբատ ուսման: Սարկավագի անհայտ կենսագիրը, որ նրա աշակերտներից մեկն է եղել, ասում է. «ի մանուկ հասակին կարդայր և ուսանէր»: Մանուկ Հով-

¹ Ղ. Ալիշան Հայապատում: էջ 96:

² Հովհաննես Սարկավագի մասին եղած գրականության մատենագիտությունը տե՛ս Գ. Հովսեփյան Հիշատակարանք ձեռագրաց: Հտ. Ա., էջ 542:

³ Շիրվանզադե Երկերի ժողովածու: Հ. 9, Եր., Հայպետհրատ, 1961, էջ 23:

⁴ Ղ. Ալիշան Հուշիկը հայրենյաց հայոց: Հ. 2, Վենետիկ, 1921, էջ 248:

⁵ Ըստ նորագույն մի տեղեկության Հովհաննես Սարկավագը ծնվել է Անիում (տե՛ս Ա. Աբրահամյան Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը: էջ 20—21):

հաննեսը հրաժարվել է խաղերից ու զվարճություններից, օրերն անց է կացրել գրքերի մեջ¹։ Հատկապես նա սեր է ունեցել դեպի նուրբ կոշվող գրքերը։ Դրանք լմաստասիրական-փիլիսոփայական գրքեր էին, որոնք նուրբ էին կոշվել իրենց ոճի և բովանդակության նրբության համար (այսինքն՝ նուրբ մտքով ու ոճով)²։ Պետք է ասել, որ այս նուրբ անվանումն էլ առաջին անգամ հանդիպում ենք Հովհաննես Սարկավադի հետագայում կազմած մատենադիտության մեջ, ինչպես և նրա աշակերտի կազմած կենսագրականում և հավանական է, որ հենց Սարկավադի ստեղծածը լինի։

Թե որքան է պատանի Հովհաննեսը սիրել գրքերն ու ընթերցանությունը, դույց են տալիս պատմիչ Կիրակոս Գանձակեցու և անանուն կենսագրի վկայությունները։ Հաղրատում Հովհաննեսի սիրելի վայրն է եղել Զրաղացի ձորի վերը հիշված քարայր-գրապահոցը, որը հարուստ էր ինչպես եկեղեցական, այնպես էլ փիլիսոփայական, բնագիտական, մաթեմատիկական ամենաբազմազան գրքերով։ Կիրակոս Գանձակեցին Հովհաննես Սարկավադի մասին խոսելիս միշտ հիշատակում է նաև ույզ գրապահոցը, կարծես նրանք անբաժան են եղել։ Նույնիսկ մի բոլորովին այլ առիթով, երբ պատմիչը խոսում է, թե ինչպես է Հովհաննեսի վրա հարձակվել մի նախանձամիտ վանական, դարձյալ այդ քարայրն է հիշում, ասելով, որ Հովհաննեսը դալիս էր այնտեղից պետին նայելով (սմինչդեռ գայր նա յայրէ անտի, որ ի նեղքոյ կայ վանիցն, հայելով ի վերայ գետնոյն)³։

Շատ բնորոշ է Կիրակոս Գանձակեցու պատմած մի այլ դեպք։ Մի անգամ Հովհաննեսը, դեռևս պատանի, այդ քարայրի գրապահոցի մի անկյունը քաշված կլանվել էր իր սի-

1 Տե՛ս Գ. Հովսեփյան Հիշատակարանը ձեռագրաց, Հտ. Ա. Անթիլիաս, 1951, էջ 335—336, Ա. Աբրահամյան Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 23։

2 Նուրբ անվանմանը տարբիր մեկնություններ են տրվել, ամենից հիշադր թվում են Ղ. Ալիշանինը (Յուշիկը, էջ 255) և Ն. Ակինյանինը (Մատենագր. հետազոտութ., հտ. Ա, 1922, էջ 34), որոնցով և առաջնորվել ենք։

3 Կիրակոս Գանձակեցի Պատմություն հայոց, էջ 114։

րելի գրքերի ընթերցանությամբ: Նրա հետ եկած մյուս ուսանողները վերջացնելով ընթերցանությունը պատրաստվում են վերադառնալ վանք: Չնկատելով գրքերի խորքը քաշված Հովհաննեսին, ընկերները կարծում են, թե նա արդեն հեռացել է քարայրից: Բոլորը դուրս են գալիս և կողպում գրապահոցի դուռը: Անցնում է մի քանի օր, ուսանողները նորից են գալիս քարայր և տեսնելով այնտեղ Սարկավազին դարմանում են, թե ինչպե՞ս է նա այդքան ժամանակ առանց ուտելիքի ու ջրի ապրել քարայրում, գրքերի մեջ: «Տեսին զնա և սքանչացան, հարցանէին զնա, թե «Ո՞րպէս լսուրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ»: Եւ նա եցոյց նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր. և ասէ՝ «Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ»¹:

Այսպիսով, գրքերի պատանի սիրահարը իր ապշած ընկերների հարցին, թե ինչպե՞ս է նա քարայրում ապրել առանց ուտելու ու խմելու, պատասխանում է, որ գրքերն են իր ուտելիքն ու խմելիքը, և դրանցով է սնվել այրում և դած այդ օրերին: Հովհաննես Սարկավազի անանուն կենսագիրը նույնպես վկայութուն ունի քարայր-գրապահոցում գրքերի մեջ իր ուսուցչի անց կացրած օրերի մասին. «առ յոյժ սիրոյ և ըղձից զաւուրս ութ արգել զանձն գաղտագողի յարկեղս գրոց յայրի անդ»²:

Հովհաննես Սարկավազը շուտով դառնում է ողջ Հայաստանի ամենաճանաչված իմաստունը, ամենանշանավոր գիտունը: Նա լինում է Հաղբասի համալսարանի ուսուցչապետ, կրթում շատ պատանիների, ապա հրավիրվում է Անի և այնտեղ դասավանդում արքայակոն ճեմարանում, կա կարծիք, որ Անիում նա իր սեփական ուսումնարանն է հիմնել³: Առհասարակ, Հաղբասից հետո Հովհ. Սարկավազի անունը ամենից շատ կապված է Հայաստանի շքեղ մայրաքաղաքի հետ,

1 Կիրակոս Գանձակեցի Նույն տեղում, էջ 116—117:

2 Գ. Հովսեփյան Հիշատակարանք ձեռագրաց: Հտ. Ա. էջ 336:

3 Ա. Արեմամյան Նշվ. աշխատութ. էջ 25:

ուր նրա մոտ ուսանելու էին գալիս սլատանիներ ամենատարբեր վայրերից:

Հովհաննես Սարկավազը մահացել է 1129 թվականին (ըստ Վարդան Արևելցու՝ 1139-ին) խոր ծերության մեջ, իր սիրելի Հաղբատում, ուր և թաղված է: Սարկավազը հանրագետ էր: Նա ձեռք է զարկել ամեն բնագավառի և ամեն դեպքում հանճարի փայլատակումներ տվել: Նա մեծ բնագետ էր և մաթեմատիկոս, նա նշանավոր տոմարագետ էր, հայոց հին տոմարի նորոգիչը և սարկավագյան կոշվող տոմարի ստեղծողը: Նա մեծ բանաստեղծ էր, նրա մի շարք ստեղծագործություններ համարվել են «կերպով մը նարեկացիեն ավելի բնական և կատարյալ»¹, Մ. Արեղյանը չափազանց բարձր է գնահատում Սարկավագի «Սարեկ» փիլիսոփայական հայտնի բանաստեղծությունը²: Հովհաննես Սարկավազը մեծ պատմաբան էր, թեև նրա պատմական գործերի հիմնական մասը կորել է, և դա հայ պատմագրության ամենացավալի կորուստներից է:

Ամենից ավելի շատ, թերևս, Հովհաննես Սարկավազը փիլիսոփա էր, ինչպես և նախորդ «նուրք», դժվարըմբռնելի ուսմունքների գիտակ, և ուսուցիչ: «Խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին և զխորին իրս», — գրում է Սարկավագի անհայտ կենսագիրը և ավելացնում՝ «կրթէր, արկանէր ի գիրս նուրբս և դժուարալուրս»³: Նույն կենսագրության մեջ խոսվում է նաև հին փիլիսոփաների, հայտնապես Արիստոտելի և Փիլոն Եբրայեցու նկատմամբ Սարկավագի ունեցած հատուկ վերաբերմունքի մասին⁴:

Վերջապես, Հովհաննես Սարկավազը մատենագետ էր բառի ամենախսկական իմաստով, թե՛ իբրև գրքի ու հին բնագրերի անմրցակից գիտակ և թե՛ իբրև մատենագիտական մի նշանավոր ցանկի հեղինակ, մանավանդ նաև, իմպատասիրական գրքերի մատենագիտության առաջին կազմող:

¹ Ղ. Ալիշան Հուշիկք, էջ 267:

² Մ. Արեղյան Նշվ. աշխատութ. էջ 52—54:

³ Գ. Հովսեփյան Հիշատակարանք ձեռագրաց, Հտ. Ա. էջ 337:

⁴ Նույն տեղում:

Կիրակոս Գանձակեցին թվելով Հովհաննես Սարկավագի կատարած գործերը, ստում է նաև, որ նա «գրեաց և օրինակս ստույգ գրոց»¹ այսինքն, որ կազմեց ստույգ, այն է՝ ստուգված, հանձնարարելի, ընդունելի գրքերի մատենագիտություն։ Սարկավագի մատենագիտական աշխատանքի մասին խոսք կա նաև նրա անհայտ կենսագրի մոտ։

Հովհաննես Սարկավագի ձեռքով գրված այդ մատենագիտությունը (ինքնագիրը) կամ նրանից հանված ճշգրիտ պատճեններ չեն պահպանվել։ Սակայն կան այդ ցուցակի մի քանի տարբերակներ, որոնցից ամենահինը գրվել է Մխիթար Այրիվանեցու ձեռքով նրա «Պատմութիւն ժամանակագրական» գրքում²։ Այստեղ ժամանակագրական կարգով թվարկվում են Հայաստանում և շրջակա երկրներում կատարված դեպքերը։ Երբ հեղինակը խոսում է Հաղբատի եպիսկոպոսական աթոռի մասին, անդրադառնում է Հովհաննես Սարկավագի նոր տոմարին. «Սկիզբն նոր թուականին, որ կարգեցաւ ի Յոհաննէս վարդապետէ Հաղբատացւոյ, որ Սարկաւագ կոչեցաւ։ Սա արար անշարժ տոմար ըստ այլոց ազգաց»³։ Այս նկարագրում է այդ տոմարը՝ նմուշներ բերելով։ Սրան հետեւում է Սարկավագի մատենագիտական աշխատանքի նկարագրությունը, այսպիսի վերնագրով՝ Կարգադրութիւն⁴ գրոց սրբոց ուր ստուգարանեցան ի Սարկավագ վարդապետէն և


¹ Կիրակոս Գանձակեցի Հայոց պատմություն, էջ 113։

² Հավագույն ձեռագիրը, որ 15-րդ դարի առաջին կեսի ընդօրինակություն է, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, թիվ 582։ Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրականը» տպագրվել է 1860-ին (Մոսկվա) և 1867-ին (Պետերբուրգ)։ Առաջինը հրատարակվել է աղճատ ձեռագրից (Սարկավագի մատենագիտությունը առաջին հրատ. մեջ բացակայում է)։

³ Մատ. ձեռ. № 582, էջ 39ա, Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական։ ՍՊԲ, 1867, էջ 35—36։

⁴ Բնագրի «Կարգադրութիւն» գրոց սրբոց»-ը անհասկանալի պատճառով 1867 թ. Բ. Պատկանյանի հրատ. մեջ դարձել է «Կարգադրութիւնը» և ասպ. նույն ձևով կրկնվել Գ. Գալեմբյարյանի, Մ. Տեր-Մովսիսյանի, Ն. Ակինյանի, Հ. Անասյանի և այլոց մոտ։

գրեցան յինէն ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի
մին տոսի յատուս ճՀ»:



Նկ. 2. Հովհաննէս Սարկավազի «Կարգադրութիւն» մատենագիտական
ցանկի սկիզբը Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ: (Մաշտոցի
անվ. Մատ. ձեռ. № 582, էջ 39ա)

Աշխարհաբար՝ Կարգադրութիւն այն սուրբ գրքերի,
որոնք ստուգաբանվեցին (ստուգվեցին, քննվեցին) Սարկա-
վազ վարդապետի կողմից և 170 օրվա ընթացքում ընդօրի-
նակվեցին իմ՝ Մխիթար վարդապետ պատմագրի կողմից մի
կազմի մեջ»։ Այնուհետև գալիս է գրքերի ցուցակը, որը ձե-

ազգրում երեք սյունակների մեջ է տրված մոտ երեք էջի վրա¹։

Այս ցուցակի, ինչպես և նրա մասին հայտնված կարծիքների քննությունը ցույց է տալիս, որ Մխիթար Այրիվանեցու ձեռքի տակ է կղել Հովհաննես Սարկավազի կազմած մատենագիտությունը (կամ նրա հարազատ պատճենը)։ Մխիթարը այդ ցուցակը իր գրքի մեջ բերել է, սակայն ոչ իբրև պատճեն, այլ բավական աղատ արտագրելով այն, որոշ լրացումներ ու կրճատումներ կատարելով։

Ցուցակը բաժանվում է երկու հիմնական մասի՝ ա) Հին և նոր կտակարանների գրքեր և բ) նուրբ գրքեր։ Սակայն կտակարանների կանոնական գրքերի բերված ցուցակները մի շարք կարևոր նորություններ ունեն նախորդ կանոնների համեմատ։ Նախ, ի տարբերություն նախորդների, որոնք սկսվում են Հ. կտակարանի գրքերով, Հովհաննես Սարկավազի ցուցակն սկսվում է Ն. կտակարանով՝ «Չորք աւետարանիչք» պիսով, որին հաջորդում է «Գործք առաքելոցն» ու Ն. կտակարանի մյուս գրքերի ցուցակը։ Ընդամենը «Իսկ ըստ դրութեանն Կղեմայ, Բրպէս և գիտ» ենթավերնագրի տակ տրվում է Ն. կտակարանի գրքերը ներկայացնող մի ուրիշ ցուցակ, որի մեջ է նաև Դավիթ Անհաղթի «Բարձրացուցէք»-ը, հայոց «Աշոթամատուց»-ը և «Պատարագ»-ը։ Այնուհետև գալիս է Հ. կտակարանի գրքերի ցանկը։

Այս բոլոր գրքերը բերված են իբրև կանոնական, և հետաքրքիրն այն է, որ սրանց մեջ տեղ են գտել նաև անցյալում պարականոն, անվավեր համարված գրքեր։ Ակնառու է նաև այն, որ Հովհաննես Սարկավազի «Կարգադրութեան» մեջ ներկայացված կտակարանների գրքերի դասավորությունը և կարգը բոլորովին տարբեր են նախորդներից և առհասարակ ինքնօրինակ²։

Այնուհետև «Նուրբքն» ենթավերնագրի տակ իրար են հա-

1 Մաշտոցի անվ. Մատ., ձեռ. № 582, էջ 39ա, 39բ, 40ա։

2 Տե՛ս նաև Գ. Գալսեմյան Մխիթար Այրիվանեցի և նորագյուտ գրությունը — «Հանդես ամսօրյա», 1891, էջ 161—167։

չորդում իմաստասիրական բնույթի տարբեր գրքեր, այս թվում՝ անտիկ և քրիստոնյա իմաստասերների աշխատասիրությունները: Սկզբում են Փիլոն Եբրայեցու ինը գրքերը, այնուհետև ցուցակի շարունակության մեջ գտնում ենք Դիոնիսիոս Արիսպագացու 5 գիրքը, Գրիգոր Նյուաացու 7 գիրքը ինչպես նաև Սեբերիանոսի, Գրիգոր Նազիանզացու, Բարսեղ Կեսաբեցու, Եվագր Պոնտացու, Դավիթ Անհաղթի, Պյոկլի Արիստոտելի, Պորփյուրի և այլ հեղինակների գրքեր, բոլոր միասին ալեկի քան հիսուն անուն:

Միջնադարյան այս նշանավոր մատենագիտության մասին պատկեհացում տալու համար բերենք մի երկու տարբեր հատվածներ այդ ցուցակից ¹.

Ա մասի սկիզբը

Բ մասի սկիզբը

Չորք

Նուրբն

աւետարանիչք

Յոհաննէս՝ յոյն լեզուաւ:

Մատթէոս՝ եբրայեցերէն:

Մարկոս՝ դալմատերէն:

Ղուկաս՝ Ասորի ²:

Գործքն առաքելոցն:

Կաթողիկէքն:

Յակոբոս տեառն ելքայր:

Պետրոսի Ա թո՛ղթն:

Բ թողթն և այլն:

Փիլոն Թ գիրք:

Նախախնամութեան Խ.:

Նահապետացն Ա:

Հեսսեցն Ա:

Ալլաբանութեանց Ա:

Առաջի որ ի լինելու ՂԹ:

Բ որ ի լինելութեանց ՁԲ:

Գ որ ի լինելութեանց ԿԲ:

Գ Երևեցանն ՃԿԸ:

Դիոնէսիոսի Ե գիրք և այլն:

Հովհաննէս Սարկավադի մատենագիտության «նուրբն» բաժինն ունի հետևյալ կառուցվածքը: Տրվում է հեղինակի ա-

¹ Բերվում է ըստ Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռ., № 582, էջ 39ա—40ա, նաև՝ «Մխիթարյան Այրիվանեցոյ պատմութիւն ժամանակագրական ՍՊԲ, 1867, էջ 33—36:

² Այսինքն՝ այս շորս լեզուներով են նախապես գրվել գրքերը:

նունը, դիմացը նշվում, թե այդ հեղինակից քանի գիրք է
թվարկվելու, ինչպես՝ Փիլոն Թ (9) գիրք, Դիոնիսիոսի Ե (5)
գիրք, Արիստոտելի Ե (5) գիրք և այլն: Ապա բերվում են այդ
գրքերի անունները, ամեն անվան դիմաց նշվում է տվյալ
գրքի գլուխների կամ մասերի քանակը, ինչպես՝ Նախախնա-
մութեան Խ (40), Նաեապետացն Ա (1) և այլն: Գլուխների
քանակի նշումը ընդհատվում է Արիստոտելի «Աշխարհացն»
գրքով, որ ենթադրել է տալիս, թե դրանից հետո եկող գրքե-
րի անունները հետագայում ավելացված են ուրիշի ձեռքով:

Կարևոր է այն, որ ցուցակում բերված են միայն հայե-
րեն գրքեր՝ ինքնուրույն և թարգմանական, որով Հովհաննես
Սարկավագի այս մատենագիտությունը նախ կտակալականների
այդ ժամանակաշրջանում հայոց մեջ ընդունված կանոնն է
ներկայացնում, ասլա տալիս է իմաստասիրական այն գրքե-
րը, որոնք առաջնակարգ են դիտվել «Աստվածաշնչից» հետո
և որոնց իմացությունը անհրաժեշտ (կամ ցանկալի) է հա-
մարվել հայոց միջնադարյան կրթության ընթացքում: Սար-
կավագը իր ստուգաբանած գրքերը, ըստ երևույթին, հանձ-
նարարում է կարդալու հատկապես հայկական բարձրագույն
դպրոցների սովորողներին, այդ իմաստով մատենագիտու-
թյունը ուսումնական ծրագրի արժեք նույնպես կարող է ու-
նեցած լինել:

Ինչպես ասվեց, Մխիթար Այրիվանեցու շնորհիվ մեզ հա-
սած սարկավագյան մատենագիտությունը փոփոխված է:
Ն. Ակիսյանը ցույց է տալիս, որ այդ մատենագիտության մեջ
նշված են գրքեր, որոնք թարգմանվել են XIII դարում, ինչ-
պես, օրինակ, Պրոկլի «Հուծմունք»-ը, Եվագր Պոնտացու
«Հարիրատրք»-ը¹:

Հովհաննես Սարկավագը, ինչպես ցույց է տալիս ցուցա-
կին Մխիթար Այրիվանեցու տված անունը և Կիրակոս Գան-
ձակեցու վերը բերված վկայությունը, ստուգաբանել, ստու-
գել, այսինքն՝ ուսումնասիրելով գնահատել է (նաև դասակար-
գել) իր բերած բոլոր գրքերը: Դրանով Հովհաննես Սարկա-

1 Ն. Ակիսյան Մատենագրական հետազոտություններ: Հտ. Ա., էջ 42:

վազը որոշել է, թե իր ժառանգակ հյուսիս անհամար հայեր գրքերից որոնք են հանձնարարելի հայոց մեջ, մասնավոր պես ուսուցման ժամանակ: Հասկանալի է, որ բացի «Աս վածաշնչի» կանոնական գրքերից, ինչպես և ցուցակում բն ված 50-ից ավել նախնից Սարկավագը գնահատելու համ ուսումնասիրել է նաև շատ ուրիշ գրքեր և բոլոր գրքերի կատարել իր ընտրությունը: Բացի այդ, «ստուգաբանի» «ստույգ» գրքերի օրինակ տալը այստեղ պետք է հասկան նույն մի այլ իմաստով, այն, որ ընդունելի դիտված բաղմ թիվ գրքերը ժամանակի ընթացքում ընդօրինակություններ աղավաղվել էին, և Հովհաննես Սարկավագը բանասիրակ աշխատանքով վերականգնել է նաև այդ գրքերի առա ճշգրիտ բնագրերը: Այնուհետև նրա ստուգած գրքերն ընդօրինակվել, տարածվել ու պահպանվել մինչև մեր օրեր Մ. Տեր-Մովսիսյանը «Կարգադրութիւն»-ը թարգմանում բաշխում (распределение)¹, որ ինչ-որ չափով նույնպ ճիշտ է (թեև լիմաստը լրիվ չի արտահայտում): Սարկավ գը ստուգաբանելով, գնահատելով գրքերը նաև բաշխել, դ սակարգել է դրանք:

Գրքերի այդ ողջ «ստուգաբանումը» իր հիմնական առու ներով մատենադիտական-բանասիրական մի ահռելի սոյն տանք է եղել, որ տարիների ընթացքում կարող էր գլուխ բ ըել միայն Հովհաննես Սարկավագի նման դարի ամենաղա գացած ու ամենաաշխատասեր մարդը, ամենահմուտ մատ նագետը: Միաժամանակ դա մի աշխատանք է, որ կարող իրականացվել միայն միջնադարյան Հայաստանի ամենահ րուստ գրադարանն ունեցող Հաղբատի վանքում:

Ղ. Ալիշանը մանրամասն խոսելով Հովհաննես Սարկավ գի տարբեր դործերի մասին՝ շատ բարձր գնահատական տալիս նաև նրա մատենագիտությունը և մատենագիտակ ողջ աշխատանքին՝ շեշտելով, որ միայն մատենագիտակ աշխատանքի համար «կարժեք Սարկավագա մեծ հիշատ մը թողելու, եթե ուրիշ հիշատակ այլ չունենար»²:

1 Մ. Տեր-Մովսիսյան Նշվաշխատութ. էջ 239:

2 Ղ. Ալիշան Հուշիկը, Հտ. Բ, էջ 256:

Հովհաննես Սարկավազը հայ մշակույթի վերելքի ժամանակաշրջանի համար դարագլուխ կազմող մի մատենագիտական-քանասիրական աշխատանք կատարեց, հետագա դարերի համար հայերեն ստուգված գրականությունն օրինակը տալով։ Սարկավազյան մատենագիտությունը դարձավ ուղեցույց ոչ միայն Հայաստանի բազմաթիվ ուսումնարաններում դասավանդման և ընթերցանության, այլև գիտության կենտրոններում՝ նոր ձեռագրերի ընդօրինակման և դրադարանների համալրման համար։ Այլ խոսքով, այս մատենագիտությունը ինչ-որ չափով եղել է նաև միջնադարյան հայ գրադարանների գրականության համալրման (սյուսույա խոսքով՝ կոմպլեկտավորման) մի օրինակելի ցուցակ։ Արդյոք այդ ցուցակը չի՞ օժանդակել նաև Գլաճորի ու Տաթևի և այլ համալսարանների ուսուցչապետներին որոշելու, թե ինչ նոր ձեռագրեր պետք է ընդօրինակվեն իրենց պրոդարանների ունեցվածքը համալրելու նպատակով։

Գատահական չէ, որ հետագա ժամանակաշրջանում Հովհաննես Սարկավազի ցուցակում նշված զրբերը մեծ մասամբ եղել են հայոց վանքերի գրադարաններում։ Այդ բանը տեսնում ենք Գեղարզի օրինակով, ուր ՀIII դարի հրկրբոդ կեսին եղել են սարկավազյան ցուցակում նշված բոլոր զրբերը, որոնք և տեղում ընդօրինակվել են Մխիթար Այսիվանեցու կողմից (Ճառքնախոս)։

Հովհաննես Սարկավազի ծրագրային ցուցակը, որ մի քանի տարբերակներով է պահպանվել, հիմք է դարձել նաև հայոց մեջ հետագայում կատարվող մատենագիտական ուղիսատանքի համար։ Նրանից հետո շրջանառության մեջ են մտնում «նուրբ գրեանք», «նուրբքն», «գնուրբ փիլիսոփայութիւն» և նման անվանումներ, կազմվում են նուրբ գրքերի ուրիշ ցուցակներ ու ժողովածուներ։ Նախքան Հովհաննես Սարկավազը հավանական է, որ հայոց մեջ եղել է ուղեցուցային մի ուրիշ ցուցակ, ինչպես իրավացիորեն ենթադրում է Մ. Տիր-Մովսիսյանը¹, սակայն այդ ցուցակը կամ ցու-

1 Տե՛ս նրա նշվ. աշխատութ. էջ 230

ցականները իրենց նշանակությունը կորցրել են Հովհաննես Սարկավազի հսկայական մատենագիտական ուսումնասիրությունից ու ճշտումներից և դրանց հիման վրա սարկավազյան մատենագիտության երևան գալուց հետո:

Հովհաննես Սարկավազի ազդեցությունը նրանից հետո հայոց մեջ կատարված մատենագիտական աշխատանքի վրա ընդունել են հետագայի բանասերները: Օրինակ, Ն. Ակինյանը նշում է այդ ցուցակի թողած ակնհայտ ազդեցությունը Սանահինի վանքի առաջնորդ (XIII դարի սկիզբ) Աբասի որդի Գրիգորի կազմած «Գիրք պատճառաց»-ի վրա «...ժանոթ են, որչափ կերևա, Սարկավազի կարգադրությունքն իրեն (Գրիգորին.—Ռ. Ի.), վասն զի կրկին բաժանումն՝ «սուրբ» (կամ ըստ Գրիգորի՝ «լայն») և «նուրբ» գրքեր,—Սարկավազ է են. և, ինչպես պիտի տեսնենք, հետիններս՝ նույն են գրեթե հեականս Սարկավազի ցանկին հետ»¹, «երրորդ խումբը «նուրբ» հորջորջմամբ առաջին անգամ հոս (սարկավազյան ցուցակում.— Ռ. Ի.) կպատահի և ասկե սորված է Գրիգոր»², «Այս բացատրությունն («նուրբ» անվանման.— Ռ. Ի.) Սարկավազի ազդեցությամբ կնշմարվի Գրիգորի Պատեռնաց գրոց մեջ ալ...»³ և այնուհետև՝ «թեև Պատեռնաց գրոց ցանկն համեմատությամբ Սարկավազի ներկայացուցած ցանկին շատ աղքատ կարելի է համարիլ, բայց հեականս կհամընթանա անոր հետ և զգալի է Գրիգորի հետևիլն սարկավազյան Կարգադրությանը»⁴:

«Գիրք պատճառաց»-ի վրա Հովհաննես Սարկավազի ցուցակի թողած ազդեցության մասին է, ըստ էության, խոսում նաև Մ. Տեր-Մովսիսյանը, երբ նշում է նրանց ընդհանրությունները⁵:

1 Ն. Ակինյան *Մատենագիտական հետազոտությունիւ*, Հտ. Ա էջ 30:

2 Նույն տեղում, էջ 34:

3 Նույն տեղում, էջ 35:

4 Նույն տեղում, էջ 36:

5 Տե՛ս նրա նշվ. աշխատութ. էջ 96, 99: Մ. Տեր-Մովսիսյանը թյուրիմացաբար «Գիրք պատճառացը» ավելի վաղ շրջանի գործ է համարում, քան Հովհաննես Սարկավազի ցուցակը, սակայն լավական է, որ նա նշում է նրանց ընդհանրությունները: Այժմ ստույգ իմանալով, որ Աբասի որդի

Պետք է ավելացնել նաև, որ Հովհաննես Սարկավազը մատենագիտական-բնագրագիտական բնույթի ուրիշ աշխատանք էլ է կատարել, կապված նախորդի հետ: Նա վերականգնել է մի շարք աղավաղված բնագրեր, հատկապես Դավիթ Անհաղթի և ուրիշ փիլիսոփաների գրություններ¹, որոնք շատ ձեռքից ձեռք անցնելով խաթարվել էին: Սարկավազը Հաղթատի գրադարանում հայտնաբերում է Սաղմոսարանի մի հնագույն օրինակ V դարից և ընդօրինակել տալով տարածում՝ այդ ժամանակ օգտագործվող սաղմոսների բավական աղճատված բնագրերի փոխարեն²: Պետք է հիշել, որ Սաղմոսարանները միջնադարում ամենակարգացվող գրքերից էին և լեզու սովորելու դպրոցական ամենատարածված դասագրքերը:

Ա. Աբրահամյանը հիշատակում է Մաշտոցի անվ. Մատենադարանի մի ձեռագիր, որն ընդօրինակված է Քովմա Մեծոփեցու կողմից: Այն ընդգրկում է Կյուրեղ Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Դրիզոթ Նաղիանզացու, Եպիփանոս Կիպրացու և այլ հեղինակների իմաստասիրական աշխատությունները, այսինքն՝ հիմնականում նուրբ գրքեր: Ընդօրինակողի հիշատակարանում ասված էր, որ ժողովածուն կազմվել և խմբագրվել է Հովհաննես Սարկավազի կողմից³:

Այստեղ ևս ակնարկ կա Սարկավազի մատենագիտական աշխատանքի մասին. «Յիմաստնոյն Սարկավազ վարդապետէ մտառեալ է սակաւ ինչ յամենեցունց մասնաւորեալ զպատշաճաւորն, իբր իմաստուն մեղու թռչելով ի մարգ և ի լերինս և ի ծաղկավէտ բուրսաստանս, ժողովելով զպիտանիսն առ ի նոցունէ»⁴:

Գրիգորը Սարկավազից հետո է գործել (տե՛ս Ակինյան նշվ. աշխատութ. էջ 2—11) այդ ընդհանրությունը կարող ենք ճիշտ գնահատել:

1 Ղ. Ալիշան Հուշիկք: Հտ. Բ, էջ 255:

2 Ղ. Ալիշան Նույն տեղում, էջ 257:

3 Ա. Աբրահամյան Հովհաննես իմաստասերի մատենագրությունը: էջ 112:

4 Նույն տեղում:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 1879 ձեռագիրն ունի «Պատճառ լայն և նուրբ դրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ րարունասպետին Գրիգորի՝ որդոյ Արասայ», որ նշանակում է. Սուրբ քայրերի և վարդապետների կողմից ստեղծված և մեծ րարունասպետ Գրիգորի Աբասի որդու կողմից ի մի նաւաւված լայն և նուրբ գրքերի բացատրություններ: Այս գիրքը կրճատ կոչվում է «Պատճառաց դիրք» (կամ «Գիրք պատճառաց»):

Սանահինի վանքի և Մակարովանքի XIII դարի սկզբի արձանագրությունների մեջ հիշվում է «Գրիգոր վարդապետ որդի Արասայ», «Գրիգոր վարդապետ առաջնորդ սուրբ նշանիս» և այլն: Ակինյանը հիմնավորել է, որ «Պատճառ լայն և նուրբ գրեանց» վերնագրում և արձանագրությունների մեջ հիշվող Աբասի որդի Գրիգորը միևնույն անձնավորությունն է, որը Սանահինի վանքում եղել է վանական, 1214-ին դարձել է այգտեղի առաջնորդ, դրանից հետո զրել «Գիրք պատճառաց»-ը և մահացել 1217—1221 թվականների միջև, թաղվել Սանահինում¹: Բացի սրանից և արձանագրություններում հիշված էլի մի երկու մանր տեղեկություններից զրեթե ոչինչ հայտնի չէ Աբասի որդի Գրիգորի մասին, որին վերջերս նաև Աբասյան անունն են տալիս²:

Աբասի որդի Գրիգորի թողած գիրքը բանասերների միահամուռ կարծիքով վկայում է հեղինակի բարձր զարգացումը և մեծ շխառտասիրությունը:

Արդ, ի՞նչ բովանդակություն ունի և ի՞նչ նպատակ է հետապնդել Աբասի որդի Գրիգորի կազմած այս «Գիրք պատ-

1 Ն. Ակինյանն նույն տեղում, էջ 1—11, 76—79: Նախքան այս «Գիրք պատճառաց»-ի հեղինակ համարվել են տուրքեր անձինք, ինչպես՝ Դավիթ Քորայրեցին (ըստ Հ. Շահաթուռյանցի), Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսը (ըստ Գ. Զարբհանյանի), Գրիգոր Ձորափորեցին (ըստ Մ. Տեր-Մովսիսյանի):

2 Հ. Անասյանը Հայկ. մատենագիտ. հտ. Ա, էջ XIII—XV:

ճառացյալը, որի լաւագույն օրինակը (XIII դարի ընդօրինակութիւն) այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. 1879):

«...նա ներկայացնում է մի փորձ.— դրում է այս գրքի մասին Կարապետ Տեր-Մկրտչանը,— համառոտ ծանոթութիւն տալ Հին և Նոր կտակարանի բոլոր դրվածքների ծագման և նշանակութեան մասին, այսինքն՝ տալ մոտավորապես այն բանը, ինչ որ... Հին և Նոր կտակարանի ներածութիւն է կոչվում: Հեղինակն ամեն անգամ նախ ինքը յուր ունեցած տեղեկութիւնները գրի է առնում և ապա մեջ բերում հատվածներ զանազան հարց դրվածքներից (գլխավորապես Ոսկեբերանից և Եփրեմից), որչափ այդ դրվածքները մատչելի են իրեն և որչափ նոցա նստատակահարմար է գտնում»: «...Բացի Հին և Նոր կտակարանի դրվածքների սլոտառներէից այստեղ կան նաև բացատրութիւններ Փիլոնի գործերի, Գրիգոր Աստվածաբանի, Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նյուսացու երեսնաչափ ճառերի, Դիոնիսիոս Արևսպագացու, Եվագրի, Դավթի Անհաղթի հեղինակութեանց մասին՝ կենսագրական տեղեկութիւններով»¹:

Այլ խոսքով ասած, Գրիգորի «Պատճառ լայն և նուրբ գրեանց» աշխատութիւնը նման է ժողովածուի, ուր հավաքված են լայն (Հին և Նոր կտակարաններ) և նուրբ (այստեղ՝ գլխավորապես՝ քրիստոնյայի մատենագիրների իմաստասիրական գործերը) գրքերի մասին բացատրութիւններ և ծանոթագրութիւններ, կազմված տալիքի հեղինակների և մասամբ իր՝ Գրիգորի կողմից: Ամեն մի գլուխ նվիրված է մի գրքի և սկսվում է «Պատճառ» բառով, որ նշանակում է ծանոթութիւն, գրքի գրման շարժառիթի բացատրութիւն, նաև գրքի մեկնութիւն, այսինքն՝ տվյալ գրքի ծանոթութիւնն ու մեկնութիւնը²:

¹ «Արարատ», 1895 թ., էջ 146—148:

² «Պատճառ», «Սկիզբն ի պատճառ» բառերը այս սոբորի առաջ էլ միևնույն նշանակութեամբ օգտագործվել են միջնադարյան հայ գրականութեան մէջ:

Ապա զետեղված է ժանոթագրվող գրքի մասին այս կամ այն հեղինակի գրածը (իբրև քաղվածք կամ հատված) և կամ իր՝ Գրիգորի լմացածը այդ մասին: Ըստ որում, տրվում է նաև տեղեկանք գրքի հեղինակի, նրա կենսագրության, աշխատությունը գրելու թվականի վերաբերյալ, երբեմն էլ շարագրվում է գրքի համառոտ բովանդակությունը:

«Հեղինակն ամփոփած է հոս,— գրում է Ն. Ակինյանը,— ինչ որ կարևոր տեսած է իբրև նախապատրաստություն Ս. Գիրքն իմանալու. լեզվագիտականը, հնախոսականը, մեկնողականը ևն հաճախ շատ անկարգ կուտակած են առանց համեմատական քննության: Այս արվեստն բոլորովին իսկ անծանոթ է հեղինակին, և որ շատ վգալի է»¹:

Գրքում քաղվածքներ և հատվածներ են ընդգրկված Հովհան Ոսկեբերանից, Ծփրեմ Ասորուց, Որիգենից, Անթասիոսից, Դավիթ Անհաղթից, Կյուրեղ Երուսաղեմցուց և եկեղեցական ուրիշ մատենագիրներից: Կարևոր է, որ քաղվածքները բերված են միայն հայերեն եղած թարգմանություններից (ինչպես հաստատում են բոլոր բանասերները, Աբասի որդի Գրիգորը հունարեն չի իմացել):

Այս ժողովածուի կազմման միակ նպատակն է եղել՝ դուրացնել «Աստվածաշնչի» և մյուս եկեղեցական գրքերի ուսումնասիրությունը միջնադարյան հայ դպրոցներում և առհասարակ վանքերում², Դա մի տեսակ ձեռնարկ է եղել ուսուցչի և սովորողի համար:

Գրքին փոքր-ինչ մոտիկից ծանոթանալով՝ դժվար չէ նկատել, որ այն, անշուշտ, ունի նաև մատենագիտական արժեք, ավելի ճիշտ՝ արժեք միջնադարյան հայ գրչի պատմության տեսակետից, որ և նշվել է բանասիրության մեջ: Հատուկ այդ մասին գրել է Ն. Ակինյանը. «Մեր նախնիք առհասարակ սիրած են զգրոց գիտութեան անեղր և անհաս ծովու» («Գիրք պատճառաց», հոջրն) վրա նալել, կարդալ գրքեր, պատմագրել ժամանակակից կամ անցյալ դեպքեր, ուսում-

1 Ն. Ակինյան նույն տեղում, էջ 21—22:

2 Նույն տեղում, էջ 24:

նասիրել Ս. Գրուց մթին տեղեր ևն, բայց Գիրգորեն զատ ոչ ոք, և այս կարելի է ըսել բացարձակապես, խորհած է ուսումնասիրել գրքի պատմությունը, ի մի ամփոփել հեղինակի մ'անձին, գրությունը թվուն, շարժառթին (պատճառ-ին) ևն մասին ցրիվ ըսվածները՝ ավանդությունն, պատրաստել քննական համեմատական տեսություններ անոնց վավերականության կամ անվավերականության վրա, կատարել վերջապես գործ մը, որ այսօր «Մատենագրության պատմություն» հորինողի մը պաշտոնն կհամարվի»¹։ Ինչպես տեսնում ենք, «Գիրք պատճառաց»-ի մեջ Ակինյանը նորություն է համարում ա) որ այդտեղ կա գրքի պատմություն, բ) որ այդտեղ կա գրականություն (մատենագրության) պատմություն։

Հենց այսքանով էլ այս գիրքը ունի մատենագիտական արժեք, թեև բնավ էլ իսկական մատենագրություն չէ բառի սովորական ըմբռնմամբ։

Զպետք է մոռանալ, որ Ակինյանն իր գնահատականը տալիս է «Գիրք պատճառացի» բերած նորությունը նշելու համար, իսկ առհասարակ այդ աշխատությունը մնում է եկեղեցական հեղինակների կողմից լայն և նուրբ կոչվող գրքերին տրված ծանոթությունների ու մեկնությունների ժողովածու (այդ գրքերի ուսումնասիրումը դյուրացնելու նպատակով)²։ Ուստի և փոքր-ինչ չսփառանք է «Գիրք պատճառաց»-ը իսկական մատենագիտություն համարելը, ինչպես երբեմն անում են։

Այժմ երկու խոսք «Գիրք պատճառաց»-ի կառուցվածքի մասին։ Ինչպես և Հովհաննես Սարկավագի ցուցակը, այս գրքի նյութն էլ ըստ բովանդակության երկու մասի է բաժանվում. ա) Հին և Նոր կառավարանների գրքեր, որոնք այստեղ առաջին անգամ լայն գրքեր անունն ունեն և բ) նուրբ գրքեր։

Սակայն սարկավագյան ցուցակի և «Գիրք պատճառաց»-ի նյութերի, նրանց դասավորման մեջ կա նաև տարբերություն. նախ «Գիրք պատճառաց»-ում կառավարանների կանոնը հա-

1 Ն. Ակինյան նշում տեղում, էջ 12։

2 Այս մասին տես նաև Մ. Տեր-Մովսիսյան նշվ. աշխատութ., էջ 228։

կառակ սարկավագյան ցուցակի, հին ավանդներով սկսվում է Հին կտակարանի գրքերի մեկնությամբ: Ասլա հալիս են նուրբ գրքերի և վերջում նոր կտակարանի գրքերի «պատճառները» (բոլոր գրքերի քանակը 164 է): Ն. Ակինյանը ցույց է տալիս, որ Հին կտակարանի գրքերի ցուցակը փոքր տարբերությամբ նման է Պարտավի վերահիշյալ կանոնի ցուցակին, իսկ նոր կտակարանին՝ «սարկավագյան ցուցակին», սակայն Գրիգորը, ըստ երևույթին, այդ գրքերի կարգը սահմանել է ուղղակի իր ունեցած «Աստվածաշնչի» օրինակի մեջ եղած գրքերի կարգով:

Ավելի մեծ են տարբերությունները «Գիրք պատճառաց»-ում բացատրվող նուրբ գրքերի և սարկավագյան ցուցակի նախքան մասի միջև: Ն. Ակինյանը իր հիշյալ աշխատության մեջ դրել է դրանց համեմատական առիթատակը²: Այնտեղ պարզ երևում է, թե որքան քիչ են «Գիրք պատճառաց»-ում նուրբ կոչվող գրքերը Հովհաննես Սարկավագի մատենագիտության համեմատ: Հետաքրքիր է, որ «Գիրք պատճառաց»-ում չկան զուտ փիլիսոփայական այնպիսի արտաքին գրքեր, ինչպես՝ Արիստոտելի և Պորփյուրի աշխատություններն են, որոնք ներկայացված են Հովհաննես Սարկավագի ցուցակում:

Սակայն շնայած պահասներին ակնհայտ է, որ «Գիրք պատճառաց»-ի նրբերին վերաբերող մասը հիմնականում կառուցված է Հովհաննես Սարկավագի մատենագիտության համաձայն, այսինքն՝ Աբասի որդի Գրիգորը առաջնորդվել է այդ ցուցակով՝ իր հայեցողությամբ դուրս թողնելով որոշ առաջին, ինչպես և եկեղեցական գրքեր: Արիստոտելի և Պորփյուրի նման անտիկ փիլիսոփաների գրքերը, որոնք շատ սիրելի են եղել Հովհաննես Սարկավագին, երևի Գրիգորը հարմար չի համարել նրանց «պատճառը» տալ եկեղեցական նշանավոր գրքերի «պատճառների» կողքին: Մյուս գրքերից (ինչպես, օրինակ, Սեբերիանոսինը) Գրիգորը բաց է թողել

1 Ն. Ակինյան նույն տեղում, էջ 30—32:

2 Նույն տեղում, էջ 37—41:

գուցե հարմար ծանոթութիւն կամ բացատրութիւն չգտնելով՝ Սարկավագյան ցուցակում եղած մի քանի գրքեր էլ «Գիրք պատճառաց»-ում չեն բերվել գուցե և այն պատճառով, որ նրանք ցուցակի նախնական օրինակում չեն եղել:

Աբասի որդի Գրիգորի «Գիրք պատճառաց»-ը ամեն դեպքում մեծ ու հետաքրքրական նորութիւն էր միջնադարյան հայ գրաւոր մշակույթի անդաստանում: Կարևոր էր նաև նրա մատենադիտական նշանակութիւնը, մանավանդ ուշագրավ էր այն երևույթը, որ մի շարք գրքերի կամ հեղինակների «պատճառը», այսինքն՝ բացատրութիւնը, զնահառականը տալիս էր ինքը՝ Գրիգորը: Հատկապես սրանով էր տարբերվում հայկական «Գիրք պատճառաց»-ը քրիստոնյա աշխարհում բեռեւ V դարից գոյութիւն ունեցող ժողովածոներից, ուր կտակարանների գրքերը հնահատող տարբեր քաղվածքներ են բերվում եկեղեցական մատենագիրներից առնված: Այդ գրքերը (որոնք կոչվում էին կառնեմներ), անշուշտ, նկատի է ունեցել Աբասի որդի Գրիգորը, սակայն մտքել է այնտեղ զգալի խնդիրնակութիւն, մանավանդ սեփական ծանոթութիւններով՝ աշխատութեանը տալով ավելի շատ գեղագիտական նշանակութիւն:

«Գիրք պատճառաց»-ը միջնադարյան հայ մշակութային կյանքում անհետևորդ չմնաց, նրա այս կամ այն չափի ազդեցութեամբ երևան եկան ուրիշ «Գիրք պատճառաց»-ներ, որոնցից մի քանի անուն այսօր կա նաև Մաշտոցի անվան Մատենադարանում: Մեր ժամանակներում ստեղծված որոշ մատենագիտական աշխատութիւններ անգամ (օրինակ, կենսամատենագիտութիւնները) ձևով ինչ-որ չափով հիշեցնում են միջնադարյան այս գիրքը, բայց ամեն դեպքում չպետք է մոռանալ, որ «Գիրք պատճառացը», ինչպես ասվեց, մատենագիտութիւն չէ սովորական իմաստով կամ մատենագիտութիւն է մի շարք լուրջ վերապահումներով:

Միաժամանակ Աբասի որդի Գրիգորը, ինչպես պարզ երևւում է նրա աշխատութիւնից, գրքագիտական լուրջ գիտելիքների տեւ անձ է եղել, մոտ կանգնած զրդի աշխարհին: Նրա սրտին պետք է մոտ եղած լինի նաև վանքի գրադարանը:

Ուշագրավ է Սանահինի մի արձանագրություն, որ ասված է, որ 1217 թ. տեղի առաջնորդ Աբասի որդի Գրիգոր 12 գիրք է նվիրել վանքին¹:

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

Մխիթար Այրիվանեցին (1222—1289/91) հայտնի է երկու աշխատությամբ՝ «Պատմութիւն ժամանագրական»-ով, որ մի պատմական ժամանակագրություն է և Ճառընտիր անվանված ժողովածուով, որը Հին և նոր կտակարանների ու նուրբ գրքերի մեծ ժողովածու է²:

Ինչպես վերն ասվեց, այս երկուսի մեջ էլ կան մատենագիտական ցանկեր: Բացի այդ, Ճառընտիրը իր նյութերի կազմությամբ, ինքնըստինքյան, ունի որոշակի մատենագիտական արժեք:

Ճառընտիրի ցանկերը արդեն գիտենք, որ չորսն են՝ «Գիրք զոր ունին հրէայքն ի ծածուկ», «Սրբոյն Կղեմա, եթէ որ գիրք ընդունելի է» և Եվագր Պոնտացու ու Կյուրեղ Երուսաղեմցու կարգադրությունները (կանոնական գրքերի ցուցակներ): Այրիվանեցու «Ժամանակագրության» մեջ նույնպես կան մատենագիտական չորս ցանկեր. նախ կրկնվում են Ճառընտիրի առաջին երկու ցուցակները, ապա կա մի մատենագիտություն՝ «Պատմագիրք ի սկզբանէ» և ի վերջո՝ Հովհաննես Սարկավագի ցուցակը:

Այդպիսով, Այրիվանեցու գրքերում կան վեց առանձին ցանկեր, դրանցից էլ հինգը, որոնց մասին արդեն խոսվեց, Մխիթարի կազմածը չեն, իսկ մեկը՝ «Պատմագիրք ի սկզբանէ» ցուցակը անկասկած Այրիվանեցունն է:

Երկու խոսք այդ մատենագիտության մասին: Այստեղ

¹ Կ. Ղաֆադարյան Սանահինի վանքը և նրա արձանագրությունները: Եր., 1957, էջ 116:

² Այդ ժողովածուն մենք պայմանականորեն ենք կոչում ավանդական դարձած Ճառընտիր անունով: Իրականում դա ճառընտիր չէ:

Թվարկված են մի շարք հեղինակների անուններ: Ցանկն սկսվում է Մովսեսի անունով, որը, ըստ ավանդության, Հնգամատյանի (Հին կտակարան) հեղինակն է: Սրան հետևում են հին հրեական ավանդությանը հեղինակներ համարվող Դավիթ, Սողոմոն, Նաթան և այլն: Այնուհետև գտնում ենք մի շարք այլ օտարազգի պատմիչներ՝ Եվսեբիոս, Ափրիկանոս, Ղերութնա, Մար Աբաս Կատինա և այլն, ապա գալիս է հայ պատմագրության հեղինակների շարքը՝ Աղաթանգեղոս, Փավստոս, Ղազար Փարպեցի և այլն: Ընդամենը ցանկում կա հիսուն անուն: Ցուցակը վերջանում է XIII դարի հեղինակներ Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու և իր՝ Մխիթար Այրիվանեցու անուններով: Որակա նմուշ բերում ենք այս մատենագրության վերջին մասը.

Մաթեոս վարդապետ Ուռիայեցի:

Անանիա վարդապետ:

Մխիթար քահանայ:

Վահրամ Տիգրանալերտեցի:

Յոհանէս վարդապետ Սարկաւուզ:

Սամուէլ քահանայ:

Մխիթար վարդապետ Գոշ:

Տէր Միխայէլ աւտորիարք Ասուրոց:

Վանական վարդապետ:

Վարդաճ վարդապետ:

Կիրակոս վարդապետ:

Եւ ես տէր Մխիթար վարդապետ: ժա¹

Թեև ցուցակի անունը «Պատմագիրք» է, բայց այնտեղ կան նաև այլ բնույթի հեղինակներ (ըստ որում, բացի հայ մատենագիրներից, նաև՝ այլազգիների):

Պատմիչներ թվարկող այսպիսի ցուցակներ քիչ չեն եղել հայ միջնադարյան գրականության մեջ: Սովորաբար սլատմա-

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 582, էջ 15ա, տպագրված է Մխիթարաւ Այրիվանեղույ Պատմութիւն ժամանակագրական: 1867, էջ 37, նաև՝ Հ. Անասյան Հայկ. մատենագիրտ. հ. Ա, էջ Լ:

դիր, մատենագիրը թվում էր իրենից առաջ իղածներին, վերջում նաև՝ իրեն։

Որ այս «Վատմագիրք ի սկզբունէն ցանկի հեղինակը ինքը՝ Մխիթար Այրիվանեցին է, ոչ մեկի կողմից կասկած չի հնթարկվել։ Բացի այդ, կասկածից վեր է, որ Մխիթար Այրիվանեցին մատենագիտական հրաշալի պատրաստութիւն է ունեցել, իր մյուս ներկայացրած ցանկերի մեջ տրված գրականութեանը նա լավ ծանոթ է եղել և իր ընդօրինակած ցանկերում երբեմն ճշտումներ ու լրացումներ է արել։ Պետք է նշել նաև, որ Մխիթարի սերը ցանկերի, մատենագիտութեան նկատմամբ շատ նկատելի է։ Ոչ մի միջնադարյան հեղինակի հրկերում գրականութեան այնքան ցանկեր չենք գտնում, որքան Այրիվանեցու մոտ։

Ինչ վերաբերում է Ճառընթերին, ապա այդ մասին ինքը Մխիթարը Հովհաննես Սարկավագի մատենագիտութեանը տրված իր վերնագրի մեջ հայտնում է, որ ինքը 170 օրում արտագրել է մի կտրված մեջ Հովհաննես Սարկավագի ստուգաբանած գրքերը։ Ուստի և, ինչպես ցույց է տրված բանասիրութեան մեջ, Մխիթարի Ճառընթեր-ի նյութերը հիմնականում համընկնում են սարկավագյան ցուցակի նյութերին՝ թե՛ քանակով, թե՛ դասավորութեամբ։ Այդ ճառընթերը 2378 երկայուն էջերով մի հսկա մասայան է. մարդ նայում ու դարմանում է, թե ինչպես կարող էր մի մարդը 170 օրում այդքանը գրել։ Եղել են դրան կասկածողներ, մտածել են, թե Մխիթարին ինչ-որ մեկը օգնել է², սակայն թերթելով այդ հսկա գրչագիրը պարզ կարելի է տեսնել, որ ամբողջը գրված է միևնույն ձեռագրով, նույն իր՝ Մխիթարի կողմից, որ և վկայում են մի շարք հիշատակագրությունները։

Հովհաննես Սարկավագի կազմած ծրագրային մատենագիտութեան համաձայն (որոշ փոփոխութիւններով) Մխիթար

1 Մ. Տեր-Մովսիսյան նշել. աշխատութ., էջ 239—240 և հետո, ն. Ալիևյան Մատենագրական հետազոտություններ, հ. Ա, էջ 37—41, Գ. Գալսեմ-ֆյարյան։— «Հանդես ամսօրյա», 1891, էջ 161—167։

2 Տե՛ս, օրինակ, Գ. Գալսեմֆյարյանի հոդվածը։— «Հանդես ամսօրյա» 1891, էջ 165։

Այրիվանեցիներն կազմել է այս ժողովածուն, ըստ երևույթին, ուսումնական նպատակով, որպեսզի մի կազմի մեջ ունենա ըստ ուսումնական ծրագրի անհրաժեշտ բոլոր գրքերը: Ցավոք, չկա ձեռագրի մեծ հիշատակարանը. գրչագիրը վերջից պակասավոր է: Թեև դժվար թե ընկած թերթերը շատ լինեն, ինչպես ենթադրում են: Ճառընտիրը ընդհատվում է Արիստոտելի «Աշխարհաց»-ով, իսկ սարկավագյան ցուցակում դրանից հետո դեռ տասից ավելի գրքերի անուններ կան: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, բավական հավանական է, որ ցուցակի վերջի այդ մասը հետագայում է ավելացվել Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ մի ուրիշի կողմից, ուստի և այնտեղ նշված գրքերը Մխիթարը չէր կարող ընդօրինակած լինել իր ճառընտիրում:

Ի վերջո, երկու խոսք տասնք Մխիթար Այրիվանեցու մատենագիտական աշխատանքի մասին հայտնված երկու կարծիքների մասին:

Թեև շատ համոզիչ ապացուցված է, որ Ճառընտիրի չորս ցանկերից ոչ մեկն էլ Այրիվանեցու կաղամածը չէ¹, այնուամենայնիվ, հրապարակում մնում են և հակառակ կարծիքներ: Օրինակ, 1930 թվականին Գարեգին Հովսեփյանը ցուցակներից մեկի մասին խոսում է իբրև Այրիվանեցու ձեռքով գրված մատենագիտության², իսկ մատենագիտության վերջում հիշատակված «գրեցաք ի վիմի քաղաքին»-ը համարում է Գեղարդի այն քարայրը, ուր ինքը հայտնաբերել է Մխիթարի մի արձանագրությունը: Հետագայում Գ. Հովսեփյանը հերքելով այդ կարծիքը ապացուցեց, որ ցանկի հեղինակը Այրիվանեցին չէ, քանի որ նրանից առաջ այդ մատենագիտությունը հայտնի էր Վարդան Արևելցուն³:

Մխիթար Այրիվանեցու մատենագիտական աշխատանքի մասին մեզ զբաղեցնող մյուս կարծիքը Հ. Անասյանին է: Մերժելով տվյալ հարցով զբաղված բոլոր բանասերների, այդ

1 Տե՛ս, օրինակ, Մ. Տեր-Մովսիսյան նշվ. աշխատութ., էջ 224:

2 Գ. Հովսեփյան Մխիթար Այրիվանեցու Երուսաղեմ, 1931, էջ 5:

3 Գ. Հովսեփյան Խաղբակյանք կամ Պռոշյանք: Մասն 2. Երուսաղեմ, 1942, էջ 112:

թվում Ղ. Ալիշանի, Գ. Գալեմբյարյանի, Մ. Տեր-Մովսիսյանի, Գ. Հովսեփյանի, Ն. Ակինյանի, Հ. Ոսկյանի տեսակետը, ինչպես և անցյալի մեր մատենագրության վկայությունները՝ նա գրում է, որ Հովհաննես Սարկավագի «Կարգադրութիւն» կոչվող ցուցակի նուրբ գրքերին նվիրված մասը կազմել է ոչ թե Սարկավագը, այլ Մխիթար Այրիվանեցին¹։ Այս տեսակետն արդեն բոլորովին անհամոզիչ է։ Հ. Անասյանը հարցն այդպես է դրել, ըստ երևույթին, իր մի տեսակետը հիմնավորելու համար, այն, որ նուրբ գրքերի խմբի առանձնացումն ու ըմբռնումը առաջին անգամ տվել է Աբասի որդի Գրիգորը², որին հարգելի մատենագետը ձգտում է դարագլուխ կազմող մի շարք ծառայություններ վերագրել³։ Ըստ այդ տեսակետի ստացվում է, որ Մխիթար Այրիվանեցին նուրբ գրքերի թե՛ անունը և թե՛ գաղափարը կարող էր վերցրած լինել միայն Աբասի որդի Գրիգորից։

Հ. Անասյանը սարկավագյան ցուցակի մասին իր կարծիքը հիմնավորելու համար երեք փաստարկ է առաջ քաշում. ա) որ այդ ցուցակի մեջ նուրբ գրքերի բաժնում կան Հովհաննես Սարկավագի մահից հետո հայերեն թարգմանված գրքեր, բ) որ նուրբ գրքերի ցուցակի վերջին մասը խորթ հավելում է, և գ) որ Հովհաննես Սարկավագի տված «Կարգադրութիւն գրոց սրբոց» շարքի մեջ չէին կարող մտնել «Պորփյուրը, Արխատոսելը, Քերականը, Հերմեսը»։

Ինչ վերաբերում է ցուցակի վերջին, ապա, ինչպես ասվեց, Արխատոսելի «Աշխարհաց»-ից հետո եղած մոտ տասը գրքերի

1 Անասյան Հայկ. մատենագիտ., հտ. Ա, էջ XVI—XVII։

2 Նույն տեղում, էջ XIII։

3 Տարօրինակ է հնչում նաև այն պնդումը, թե իբրեւ պատճառացաւ-ը եւրդի հարթեց հայկական մատենագիտութեանը դուրս գալու նախորդ 2րջանի բացառիկ կրօնականութեանից և թեկոխելու գիտութեան տարբեր բնագավառները (նույն տեղում, էջ XVII)։ Ինչի՞ հիման վրա է արվում այս պնդումը, անհասկանալի է, համեմայն դեպս Վերք պատճառացաւ-ի բովանդակութեանը նման մտորումների առիթ չի տալիս, իսկ հայկական մատենագիտութեանը տարբեր բնագավառներ (պատմական, գեղարվեստական, փիլիսոփայական գրականութեան) թեկոխել էր նախքան այդ։

անունները ակնհայտորեն հետագայի ավելացումներ են, ըստ որում, ո՛չ Այրիվանեցու ձեռքով, այլ ավելի ուշ շրջանի: Այդ վերջավորության մեջ եղած հտտարկավագյան շրջանի թարգմանությունների անուններն էլ, պարզ է, որ նույն բնույթի հավելումներ են: Այնուհետև, նուրբ գրքերի ցուցակի հիմնական մասում (Արիստոտելի Աշխարհաց-ից դեպի վեր) եղած հտտարկավագյան շրջանի թարգմանությունների անունները ավելացված պետք է լինեն Մխիթար Այրիվանեցու կողմից, քանի որ տեղ են գտել նաև վերջինիս կազմած Ճառքնախոսում Ընդ որում, ցուցակի այդ մասում հտտարկավագյան թարգմանություն պիտի լինի միայն Պրոկլի Լաւմաւնք բնագիրը, որը կարող է միայն Այրիվանեցին ավելացրած լինել:

Իսկ ինչ վերաբերում է «Կարգադրութիւն գրոց սրբոց» վերնագրի տակ Արիստոտելի, Պորփյուրի գրքերի և մյուս ոչ «գրոց սրբոց» համարվողների առկայությանը, ապա նախ ասենք, որ մատենագիտության մեզ հասած վերնագիրը ոչ թե Հովհաննես Սարկավագինն է, այլ Մխիթար Այրիվանեցունը: Կիրակոս Գանձակեցին սարկավագյան մատենագիտությունը հիշատակում է «Օրինակ ստոյգ գրոց» անունով, որի տակ, ինչպես նշվել է, պետք է հասկանալ ստույգ, ընդունելի, վըստահելի գրքեր, այսինքն՝ Սարկավագի կողմից տարբեր տեսանկյուններով ստուգված և հանձնարարված գրքեր: Դրանց մեջ Արիստոտելի, Պորփյուրի գրքերի առկայությունը բնական պետք է դիտել, քանի որ դրանք հայ եկեղեցու կողմից ոչ միայն չէին մերժվում, այլ հանձնարարվում էին: Նույնը պետք է ասել ֆեռականի մասին: Իսկ Հերմեսը II—III դարերի հույն իմաստասեր Հերմիասն է, որ գրում էր հեթանոսության դեմ և ընդունված էր քրիստոնեական եկեղեցու կողմից:

Այլ բան, որ Արիստոտելի, Պորփյուրի գրքերը և ֆեռականը չեն համապատասխանում Մխիթար Այրիվանեցու կողմից սարկավագյան ցուցակին տրված ընդհանուր անվանը: Իրոք, ինչու է Այրիվանեցին «Կարգադրութիւն գրոց սրբոց» անվանել Սարկավագի գործը, եթե այնտեղ նշված բոլոր գրքերը այդպիսիք չէին: Այս հարցը, իհարկե, պատասխան է պա-

հանջում, բայց այդ պատասխանը բնավ էլ չի տրվում, եթե մատենագիտության երկրորդ մասի (նուրբ գրքերի) հեղինակ ենք դարձնում Այրիվանեցուն: Բանն այն է, որ նուրբ գրքերի հիմնական մասը միաժամանակ «գրոց սրբոց» շարքին է վերաբերել: Նուրբ անվանումը գրքի գրելակերպին, ոճի ու մրտքի նրբության, որոշ մանվածապատությանն է վերաբերում, և այն ժամանակներում սուրբ կոչվող գրքերը միաժամանակ կարող էին և նուրբ լինել¹: Սարկավագյան մատենագիտության նուրբ գրքերի բաժնում բերված այնպիսի հեղինակներ, ինչպես, ասենք Դիոնիսիոս Արևմտագացու, Գրիգոր Նալբանդացու, Բարսեղ Կեսարացու գրքերը և՛ նուրբ են համարվել, և՛ սուրբ: Այս բանը, իհարկե, ընդունում է նաև Հ. Անասյանը, այլապես նա միայն Արիստոտելը, Պորփյուրը և մյուս երկուսը չէր համարի անհամապատասխան ցանկի վերնագրին:

Այդ, չէ՞ որ եթե ցուցակի երկրորդ մասի հեղինակ համարենք Այրիվանեցուն, միևնույն հարցը մնում է, ինչո՞ւ Արիստոտելը, Պորփյուրը, Բեռականը դրվել են այդ երկրորդ մասի «գրոց սրբոց» շարքում:

Այնուհետև, կա մի հանգամանք ևս: Եթե սարկավագյան ցուցակի երկրորդ մասում ընդհանուր վերնագրի համեմատ երեք կամ չորս գրքի անհամապատասխան լինելը պետք է պատճառ դառնա ցուցակի այդ մասի համար նոր հեղինակ փնտրելուն, ապա նույնը պետք է անել նաև ցուցակի առաջին մասի համար, ուր տեղ են դրվել ավելի անհամապատասխան թվացող գրքեր: Նախ այստեղ տեղ են գտել «Աստվածաշնչի» գրքերից՝ ժամանակին անվավեր դիտված գրքեր, ապա, ինչպես ասվեց, Նոր կտակարանի մեջ է դրված Դավիթ Անհաղթի Բարձրացուցե՛ք-ը և երկու արարողական գրքեր, որոնք երբևէ Նոր կտակարանի մաս չեն կազմել: Մի՞թե այս հարցը պատասխան կստանա, եթե ցուցակի այս մասի հեղինակն էլ ուրիշի համարենք: Ո՛չ, իհարկե:

1 Անշուշտ, նուրբ կարող էին անվանվել նաև «գրոց սրբոց» շարքից դուրս եղած գրքերը, անտիկ փիլիսոփաների գործերը և այլն:

Մինչդեռ հայ հին մատենագրությունը շատ պարզ և որոշակի ասում է, որ ցուցակի հեղինակը Հովհաննես Սարկավազն է: Նախ այդ բանը ուղղակի ասում է ինքը Մխիթար Այրիվանեցին իր Ժամանակագրության մեջ. «որք ստուգաբանեցան ի Սարկասագ վարդապետէն»¹ Զէ՛ որ Հովհաննես Սարկավագի և նրա սիմարի ու մատենագիտության մասին խոսելիս է Այրիվանեցին ասում այս բառերը և ապա, իբրև Սարկավագի աշխատանքի նմուշ բերում բուն ցուցակը երկու մասով: Եթե ցուցակում ներքեի մասը Սարկավագինը չլիներ, Այրիվանեցին այդտեղ չէր տա այն, այլ կտար գրքի սկզբի մասում, ուր դրել է ևրեք ուրիշ ցուցակներու Այրիվանեցու Ժամանակագրության ձեռագրերի մեջ ողջ «Կարդադրութիւն»-ը, ներքեով հանդերձ, բերված է իբրև մի միասնական, անքակտելի ցույցակ:

Այնուհետև, ինչպես ասացինք, սարկավագյան մատենագիտության մասին որոշակի վկայում է Կիրակոս Գանձակեցին (ղարմանալի է, թե ի՞նչ հիմք կա չհավատալու այս հեղինակին), այդ մասին ակնարկ կա Հովհաննես Սարկավագի անհայտ կենսագրի մոտ:

Ցուցակի մեջ նուրբ գրքերին նվիրված հատվածի մասին խոսելիս չի կարելի մոռանալ նաև, որ միջնադարում նրբերի հայտնի գիտակը եղել է ոչ Մխիթար Այրիվանեցին, ոչ Աբասի որդի Գրիգորը և ոչ այլ ոք, բայց, միայն՝ Հովհաննես Սարկավագը, որի անանուն կենսագրի վկայություններից է. «արկանէր ի գիրս նուրբս և դժվարալուրս»² Եվ արդյոք Արիստոտելի և առհասարակ նուրբ համարվող գրքերի նկատմամբ հատուկ սերը չէ՞, որ Հովհաննես Սարկավագին մղել է Պորփյուրի ու Արիստոտելի երկերը եկեղեցու հայրերի գործերի շարքում, իսկ Դավիթ Անհաղթի գիրքը՝ անգամ նոր կտակարանի գրքերի մեջ դնելու³:

Վերջապես չպետք է մոռանալ, որ միջնադարում այնքան

¹ Թեև, անշուշտ, այստեղ նաև բոլորովին ուրիշ պատճառներ կարող են եղած լինել:

էլ որոշակի չեն հղել նուրբ, սուրբ, լայն, մեկնողական, առտաֆին և այլ ըմբռնումների սահմանները: Տարբեր ժամանակ տարբեր հեղինակներ յուրովի են հասկացել և օգտագործել այդ անվանումները: Նույնիսկ Հին և Նոր կտակարանների կանոնական ու որոշ անվավեր գրքերի տարբերակումը միակերպ չի հղել:

Քիչ չեն դեպքերը, երբ հին ձեռագրերի մեջ սուրբ գրքեր (սուրբ տառս, սուրբ գիրս) են համարվում Խորեմացու, Բաղաւնդի, Փարպեցու և այլ հեղինակների պատմական գրքերը, նույնիսկ՝ Գոշի Դատաստանագիրքը:

Ձեռագրերի մեջ հանդիպող մատենագիտական ցանկերում միշտ չէ, որ ցուցակի վերսագիրը և պարունակությունը լիովին համապատասխանում են իրար: Ձեռագրերից մի այդպիսի ցուցակ տպագրել է Բ. Կյուլեսերյանը: Վերնագիրն է. «Թիւք նուրբ գրեանս ովք են ասացեալ»¹: Այստեղ էլ հակառակն է կատարված. այս վերնագրի տակ ցուցակի մեջ նուրբ գրքերից հետո թվարկվում են նաև Նոր, ապա և Հին կտակարանների գրքերը ու նրանց մեկնությունները: Ուրիշ ձեռագրերում այս ցուցակի սկզբի մասն առանձին է տրված և ունի այլ վերնագիր՝ «Թիւք արտաքին գրոց, թէ ովք են ասացեալ»²:

XIV դարի մի գրչագրում³ մի այլ ցուցակ սկզբում կոչվում է «Արտաքին գրեանք», թեև այստեղ են Բարսեղ Կեսարացու, Դիոնիսիոս Նազիանզացու եկեղեցական գրքերը, ըստ որում այս ցուցակը վերջում նուրբ է կոչվում (սնրբերն այս էս):

Կան և շատ ուրիշ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ չի հղել գրքերին և նրանց ցուցակներին տրվող անցյալի բոլոր ժամանակների համար վերջնականապես որոշված և բոլորի կողմից միատեսակ ըմբռնվող անվանումներ (տերմիններ):

Դառնալով Հովհաննես Սարկավագի մատենագիտությանը

1 Բ. Կյուլեսերյան Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց ու շրջակայից: Անթիլիաս, 1957, սյուժակ 697:

2 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3408, էջ 144ա:

3 Մաշտոցի անվ. Մատ., ձեռ. № 2961, էջ 72ա, Հ. Անասյան նշվ. աշխատութ. էջ XVIII:

պետք է ասել, որ Այրիվանեցու կողմից նրան տրված «Կարգադրութիւն գրոց սրբոց» ընդհանուր անունից բացի այնտեղ կա նաև ցուցակի երկրորդ մասի ՆՈՒՐԲԷՆ հնթավերնագիրը, որ և միանգամայն բնական է դարձնում այդ մասում Արիստոտելի կամ Պորփյուրի գրքերի առկայությունը: Ավելորդ է անվանումների չափազանց խիստ ճշգրտություն պահանջել այն դարերի հեղինակներից, երբ մեր օրերում էլ հաճախ այդ հնարավոր չի լինում պահպանել:

Եվ այսպես, Հովհաննես Սարկավագի մատենագիտության մասին հայտնված վերոհիշյալ միակ կասկածը հիմք չունի, և Մխիթար Այրիվանեցին նուրբ գրքերի որևէ մատենագիտության հեղինակ չէ:

Անցյալի հայ մատենագիտական աշխատանքի մի կարևոր ժամանակաշրջանի հաջորդականությունը մնում է այսպիսին. Հովհաննես Սարկավագը Հաղբատի հարուստ գրադարանի նյութերի հիմուն վրա ստուգաբանում է կանոնական և նուրբ կոչվող գրքերը՝ ստեղծելով հայոց մեջ ծրագրային մի մատենագիտություն, որը դիտվում է որպես Հայաստանի համալսարաններում, դպրոցներում ուսումնական ծրագրով նախատեսված գրականության (կամ այդ գրականության միջուկի) ցանկը: Նրանով առաջնորդվում են նաև Հայաստանի միջնադարյան գրադարանների գրականությունը համալրելիս: Այդ մատենագիտության հիման վրա է XIII դարի սկզբում Աբուսի որդի Գրիգորը ուսումնական նպատակով կազմում իր «Գիրք պատճառացը», նույն սարկավագյան մատենագիտությամբ նշված գրքերն է Մխիթար Այրիվանեցին արտագրում ու հավաքում մի կազմի մեջ (Ճառընտիր) դարձյալ ուսումնական նպատակով: Սարկավագյան մատենագիտության օրինակներն ու տարբերակներն են, որ տեղ են գտել զանազան հին ձեռագրերում, այդ թվում Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ, տարբեր ժողովածուներում՝ և այլուր:

ՄԻՋՆԱԴԱՐՁԱՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՅԼ ՈՒՂԻՆԵՐ

Մինչև XIII—XIV դարերը հայոց մեջ կատարված մատենագիտական աշխատանքի վերաբերյալ պահպանված նյութերը ցույց են տալիս, որ այդ աշխատանքը բավական բազմազան է եղել: Մատենագիտության այսօրվա ըմբռնումներով հիմն դատելու լինենք, պեսք է ասենք, որ եղել են ինչպես ընդհանուր, այնպես էլ ճյուղային ցանկեր: Եթե գրադարանների գրացուցակները, Հովհաննես Սուրկավազի ցանկը կամ հայ մատենագիրներին նվիրված մի քանի ցանկեր կարող են դիտվել իբրև ընդհանուր մատենագիտության նմուշներ, քանի որ տարբեր բնագավառների դրբեր են ընդգրկում, ապա պատմագիրներին նվիրված, ինչպես և շարակնոցների, գանձերի հեղինակների կամ կանոնական գրքերի ցանկերը ճյուղային բնույթ ունեն, քանի որ մի բնագավառի կամ մի հարցի են նվիրված: Կարելի է գտնել նաև հանձնարարական բնույթի ցանկեր, ինչպիսիք են նույն կանոնական, այսինքն՝ հանձնարարվող գրքերի ցուցակները կամ սարկավագյան մատենագիտությունը և այլն:

Հիմնականում մինչև XIII—XIV դարերը գոյացած ուղղություններով էլ շարունակեց ընթանալ հայ մատենագիտությունը մինչև XVIII դարը և նրանից հետո:

ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

XIII դարում Մխիթար Այրիվանեցու կողմից կազմված «Պատմագիրք ի սկզբունէ» ցանկը, որի մասին խոսվեց, իր

նախորդներն է ունեցիլ: Այդ կարգի մատենագիտութեան հնագույն օրինակը, ինչպես ասվել է, Ղազար Փարպեցու Պատմութեան նախաբանն է, ուր խոսվում է նախորդ երկու պատմիչների՝ Ագաթանգեղոսի ու Փաւստոսի մասին: Նույն արժեքն ունեն նաև խորենացու Պատմութեան տարբեր մասերում աղբյուրների հիշատակութունները: Խորենացուց ու Փարպեցուց հետո մինչև XI դարը հայ պատմիչների երկերում առանձին կարևորութիւն չի տրվում նախորդ պատմիչների հիշատակութեանը:

X դարի նշանավոր պատմիչ Հովհաննէս Դրասխանակերտցին իր «Պատմութիւն Հայոց»-ի մեջ հիշատակում է իրեն նախորդող մի քանի պատմիչների, սակայն բավական ցրված, առանձին առիթներով: Դրասխանակերտցու մոտ չկա մատենագիտական հատուկ բաժին: Առհասարակ մատենագիտական տեղեկութիւններն այստեղ շատ չեն և տրվում են զիջի տարբեր հասկացումներով: Օրինակ, առաջաբանում հիշվում է Շաւակուհի Բագրատունին որպէս Աշոտ թագավորի մասին Դրասխանակերտցուց առաջ գրող հեղինակ¹: Կամ Մար Աբաս Կատինան հիշվում է, որպէս Վաղարշակ Արշակունի թագավորի հրամանով պաբախց դիվաններում փաստաթղթեր որոնող² և այլն:

XI դարի պատմիչ Ստեփանոս Ասողիկն արդեն իր «Պատմութիւն տիեզերական»-ում տվել է մատենագիտական հատուկ բաժին: Նա իր պատմութեան սկզբում ունի «Յաղագս, թէ ոյք եղեն պատմագիրք յայլոց ազգաց և նախասացութիւն բանի» նախաբանը³: Այստեղ հին պատմագիրքների ընդհանուր սկզբում է հնգամատյանի հեղինակ համարվող Մովսէսից, ապա խոսվում է Հին կտակարանի մի քանի ուրիշ գրքերի ենթագրյալ հեղինակների մասին, որոնց հաջորդում են Եվսեբիոս, Սոկրատես: «Իսկ ըստ հայոսմա» բառերով

¹ Հովնանէս Դրասխանակերտցի Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 7:

² Նույն տեղում, էջ 14:

³ Ստեփանոս Ասողիկ Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885: Մանագիտական մասը՝ էջ 5—7:

սկսվում է հայ պատմագրության մատենագիտական տեսությունը: Թվարկվում են հայ պատմիչները և համառոտակի տրվում է նրանց դործերի ժամանակագրական ընդգրկումը: Իրար ին հաջորդում Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Փավստոս Բուզանդ (աֆոստոս և Բիւզանդ), Սեբեոս, Ղևոնդ, Շապուհ Բաղրատունի, Հովհաննես (Դրասխանակերտցի) և ինքը: Միայն հայ պատմիչներն այստեղ ինն են: Այստեղ նույնպես հիշվում է Շապուհ Բագրատունին, որի պատմությունը մեզ չի հասել:

XII—XIII դարերի պատմիչ Մխիթար Անեցին իր Պատմության սկզբում «Թէ զինչ է Պատմութիւն եւ կամ քանիք են որ յայտնի են առ մեզ» գլխի մեջ թվարկում է իրենից առաջ եղած, իրեն հայտնի պատմիչներին: Դարձյալ սկսում է «Աստվածաշնչի» գրքերի ավանդական դարձած հեղինակներից, ապա Եվսեբիոս Կեսարացի, Ափրիկանոս, Անդրեաս, Եպիփան, Սոկրատ, Տատիանոս: «Իսկ ի նորոց աստի մերոց» ենթավերնագրով տրված է հայ պատմիչների ցանկը, որն այստեղ սկսում է Ղերութնայով: Ապա գալիս են Ագաթանգեղոս, Բուզանդ, Ներսես, Կորյուն, Մովսես (Խորենացի), Ղազարիկ (Փարպեցի) և այլն, վերջում՝ «եւ Սամուէլ Երիցու», որ, Սամվել Անեցին է, ապա՝ «Հուսկ ամենայնի վերջինն այս որ ի մեջս գրեալ», ակնարկում է իրեն: Սա մեծ մասամբ պատմիչների սոսկ անունների թվարկում է, թեև երբեմն դործերն էլ են հիշվում, իսկ Մովսես Կաղանկատվացու անունը չկա, թեև կա նրա գրքի անունը՝ «Պատմութիւն Աղուանից»¹:

Հաջորդ պատմիչը (XIII դար), որը հայ պատմագրության ընդարձակ մատենագիտություն է տալիս, նշանավոր Կիրակոս Գանձակեցին է: Նա նույնպես իր Պատմության սկզբում բերում է նախքան իր հանդես գալը եղած պատմական գրականության մատենագիտական մի տեսություն², որ բավական

¹ Մխիթար Անեցի, Պատմութիւն, ՍՊԲ, 1879, Մատենագիտական հատվածը՝ էջ 14—15:

² Կիրակոս Գանձակեցի Պատմութիւն Հայոց: Եր., 1961: Մատենագիտական հատվածը՝ էջ 5—8:

ընդարձակ է: Սկսում է Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությունից, հակիրճ ծանոթություն է տալիս նրա ընդգրկած նյութի մասին: Ապա խոսում է «մեծիմաստն» Սոկրատես պատմիչի գրքի նյութի շուրջը և անցնում հայ պատմիչներին: «Իսկ հայոց ազգի պատմագիրք յուրվք ցուցին աշխատութիւն» ենթավերնագրի տակ տրվում է նախքան Գանձակեցին եղած հայ պատմագրության տեսությունը՝ սկսած Ագաթանգեղոսից մինչև Վանական պատմագիրը, որն այստեղ առաջին անգամ է հիշվում:

Կիրակոս Գանձակեցու այս ողջ տեսության մեջ հիշվում են քսանմեկ տարբեր հեղինակների աշխատություններ: Մի շարք հեղինակների գործի մասին ավելի մանրամասն է խոսվում, ինչպես՝ Եվսեբիոս Կեսարացու, Ագաթանգեղոսի, Մովսես խորենացու, Նղիշեի:

Ավելի համառոտ են Ղազար Փարպեցու, Փավստոսի, Ղևդոնդի, Ուխտանեսի գործերին տրված ծանոթությունները, մի շարք պատմիչների գործերն ուղղակի հիշատակվում են, իսկ որոշ պատմիչների սոսկ անուն է տրված (Խոսրով, Թովմա Արծրունի, Շապուհ Բագրատունի և այլն): Մի նույն բերենք Նղիշեին նվիրված հասկացից. «...Նղիշէ, պատմէ զքաջութիւն Վարդանայ, Թոռին սրբոյն Սահակայ, և զընկերայ նորա...»¹ և այլն: Ահա Փավստոս Բուզանդի Պատմությալն մասին. «Փաւստոս Բիւզանդ, որ զեղեալ իրս պատմէ Հայոյ աշխարհիս ընդ պարսիկս և ի նոցանէ ընդ մերոս»²: Ղևոնդի գրքի մասին. «Եւ Ղևոնդ երիցու Պատմութիւն, սր զոր ինչ գործեցին Մահմետ և աթուղկալի նորա ընդ աշխարհս ամենայն և առաւել ևս ընդ ազգս Հայոց»³:

Հետաքրքիր են նաև Գանձակեցու ծանոթություններում (անոտացիաներում) պատմիչներին տրված մակղրները. «ամենահարուստն զիտութեամբ և մեծն իմաստութեամբ, քան զյուրվս», ասվում է խորենացու մասին, «Աքանչիլի, կորովա-

1 Կիրակոս Գանձակեցի Նույն տեղում, էջ 71

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

միտ Ագաթանգեղոս», «Ղազար Փարպեցին ճարտասան», «մեծ և հանճարեղ վարդապետ անուանեալն Վանական» և այլն:

Ժամանակագրական կարգով հաջորդ պատմիչը, որ պատմական գրականության մատենագիտություն է թողել, Մխիթար Այրիվանեցին է: Նրա թողած ցուցակի մասին արդեն խոսվեց, ավելացնենք միայն, որ այդ բնույթի նախորդ բոլոր ցանկերից Այրիվանեցունը ամենածավալունն է, այնտեղ ընդգրկված է 49 հեղինակի անուն, որոնցից 17-ը օտարազգի են (այդ թվում՝ Ափրիկանոս, Ղեբուբնա, Մար Աբաս և այլն): Այս ցանկի շնորհիվ ավելի շատ հայ պատմիչների անուններ ենք իմանում, որոնց պատմական գործերը չեն պահպանվել կամ պահպանվել են մասամբ (Հովհաննես Կոզեռն, Հովհաննես Սարկավագ, Մխիթար Գոշ և այլն):

Պետք է ասել նաև, որ Մխիթար Այրիվանեցու այս շատ արժեքավոր ցուցակից հետո երկար ժամանակ ընդհատվում է հայ պատմագրական մատենագիտության կազմման լռիսատաքը: Ավելի քան հրեք հարյուրամյակ մենք չենք հանդիսվում պատմական գրականության շատ թե քիչ նշանակալից ցանկերի կամ տեսությունների: Միայն XVII դարում դարձյալ սկսում են կազմվել պատմական գրականության մատենագիտական ուշագրավ ցանկեր, թեև երբեմն փոքր-ինչ այլ բնույթի:

XVII դարի հեղինակ Ավետիք Ամդեցին (Տիգրանակերտցին) հիշատակում է մոտ 20 հույն և ասորի եկեղեցական պատմիչների, հայ պատմիչներից հիշում է ութին, վերջինը՝ նույն XVII դարի հեղինակ Առաքել Դավրիժեցուն: Այստեղ հայտնվում են նախորդ ցանկերում չեղած մի քանի ուրիշ անծանոթ պատմիչներ (Եսայի, Դանիել, Հակոբ և այլն)¹:

1709 թվականին ընդօրինակված մի ձեռագիր ժողովածուի մեջ, որ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (թ. 126) կա հայ պատմիչների մի ցանկ: Վերնագիրն է «Այս են պատմագիրք ամենայն», բայց ներկայացված են միայն հայ պատմիչներ, թվով 24: Առաջինը Ագաթանգեղոսն է, նա-

1 Ղ. Ալիշան Հայապատում: էջ 13:

խավերջինը՝ Կիրակոս Գանձակեցին, վերջինը՝ Զաքարիա Կաթողիկոսը։ Ժամանակագրական կարգը, ինչպես ուրիշ ցանկերում, այստեղ ևս խախտված է և ոչ միայն սկզբում, այլև վերջում։ Օրինակ, XV դարի հեղինակ Թովմա Մեծոփեցին ժամանակով վերջինն է ցուցակում նշված հեղինակներից, բայց դրված է վերջից երրորդ տեղում։ Ի դեպ, քանի որ ցանկում ժամանակով ամենավերջին պատմիչը Մեծոփեցին է, եզրակացություն է արվում, թե այդ ցանկը XV դարում է կազմվել, թեև դա այնքան էլ հիմնավոր եզրակացություն չէ։ Նախ Մեծոփեցու ժամանակակիցը չէր կարող նրան Կիրակոս Գանձակեցուց առաջ դնել, ինչպես այս ցանկում է արված։ Որքան մատենագիտություն կազմողից նշվող հեղինակները ժամանակով հեռու լինեն, այնքան մեծ կլինի այդ հեղինակների ժամանակագրության խախտումը։

Պատահական չէ, որ միջնադարյան ցանկերում ժամանակագրական ավելի մեծ խախտումներ լինում են ավելի վաղ շրջանի հեղինակների դասավորության մեջ։ Մատենագիտական ցանկում ժամանակագրական կարգով վերջին պատմիչի ապրած ժամանակաշրջանը միշտ չէ, որ այդ ցանկի կազմման ժամանակաշրջանն է նշում։ Այլ բան է, երբ ցանկի վերջում կազմողը իր անունն է դնում (ինչպես Այրիվանեցու, Գանձակեցու և ուրիշ ցանկերում), այստեղ հարցը պարզ է, իսկ եթե որևէ ցանկ որևէ ժամանակի հեղինակով է ընդհատվում, դա դեռևս բավարար հիմք չի տալիս մատենագիտության կազմման ժամանակը որոշելու, քանի որ ցանկը կարող է կրճատ ընդօրինակված լինել, կարող է ուշ շրջանում կազմված լինել առանց հետագա հեղինակների ընդգրկման և կամ կարող է վաղ շրջանում կազմված լինել և հետագայում՝ լրացված։ Այս կարգի բոլոր դեպքերի օրինակներ հայ ձեռագրերը տալիս են։ Մատենադարանի Թ. 126 ձեռագրի մեջ եղած վերոհիշյալ այս ցանկը, օրինակ, թվում է ուշ ժամանակ կազմված, գուցե և ընդօրինակման ժամանակից (XVIII դարի սկիզբ) ոչ շատ վաղ։

Դժվար է որոշել նաև Ղ. Ալիշանի «Հայապատումի» մեջ

բերված «ուրիշ մի» ցուցակի¹ կազմման ժամանակը (կոչվում է՝ «Ցանկ պատմագրաց հայոց»)։ Այստեղ թվարկված են 26 հեղինակներ՝ սկսած Մար Աբաս Կատինայից դարձյալ մինչև Թովմա Մեծոփեցի, իսկ վերջում էլ ասված է. «Եւ այլ 36 պատմադիրք հայոց, զորոց զանունս չգիտեմ. և ընդ ամենայն պատմագիրք 62, որ գտանին ի Սաղմոսավանքն և ի Սիս»։

Հասկանալի է, որ Մեծոփեցուց հետո նույնիսկ մինչև XVIIII դարը ապրած 36 հայ պատմիչներ ենթադրելը դժվար է։ Ուրեմն այդ 36-ը պարտադիր չէ, որ Մեծոփեցուց հետո ապրած պատմիչնիր լինեն, թեև մի մասը կարող են այդպիսիք լինել։ Ամեն դեպքում ցանկի կազմման ժամանակի մասին ենթադրություն անելու համար բավարար հիմք չկա։

Հայ պատմիչների այս հետաքրքրական ցանկի վերջում ևս աչքի է ընկնում ժամանակագրական կարգի խախտում (օրինակ, Սամվել Անեցին Հովհաննես Սարկավագից առաջ է դրված), որ ցույց է տալիս, թե մատենագիտությունը ավելի ուշ շրջանի գործ է։

Շատ ավելի հետաքրքրական է մի ուրիշ ծավալուն մատենագիտություն, ուր ընդգրկված են 50-ից ավելի հայ և օտար հեղինակներ, գլխավորապես՝ պատմիչներ։ Այդ մատենագիտությունը պահպանվել է երեք ձեռագրերի մեջ, ամենահինն է Ն. Զուղայում 1724-ին ընդօրինակված մի ժողովածու, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում²։ Մյուսը նույնպես Մատենադարանում պահվող մի ժողովածու է 1790 թ. ընդօրինակություն³, երրորդը Անթիլիասի մատենադարանում պահվող XVIII դարի վերջին կամ XIX-ի սկզբին ընդօրինակված մի ձեռագիր է⁴։

Այս ցուցակը մի քանի անգամ տպագրվել է տարբեր աղբյուրների հիման վրա։ Ամենահին տպագրությունը «Ազ-

1 Ղ. Ալիշան Հայապատում, էջ 13—14։

2 Ձեռ. № 2271, էջ 213ա—215բ։

3 Ձեռ. № 2220, էջ 291բ—294բ։

4 Ն. Ալիևյան. Բազմշի գպրոցը, Վիեննա, 1952, էջ 292։

դարարի» 1795 թ. տետրում է (էջ 188—192)։ Հրատարակել է Հակոբ Այուբյան Դավրիժեցին, ըստ որում, ցուցակի մեջ ավելացնելով XVIII դարի ավելի ուշ շրջանի հեղինակների գործեր և այդ դարի թարգմանություններ (ինչպես և որոշ բաներ կրճատելով)։ Անթիլիասի ձեռագրից մատենագիտությունը հրատարակել է Ն. Ակինյանը¹, «Ազդարարի» օրինակից՝ Գ. Գալեմբյարյանը², իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի գրչագիր ժողովածուներից՝ Հ. Անասյանը³։

Այս մատենագիտությունը հայ և օտար պատմիչներին նվիրված նախորդ բոլոր ցանկերից ամենահանգամանակիցն է և ամենածավալունը։ Զգացվում է, որ այդ ցանկի կազմողը գրքին, զրադարաններին շատ մոտ կանգնած ունի է հղել՝ մատենագիտական մեծ պաշարով ու հմտությամբ։

Նախ ուշադրություն է գրավում այն, որ ի տարբերություն պատմագիրների նախքան այդ եղած բոլոր ցանկերի, այստեղ հայ և օտար պատմագիրները որոշակիորեն բաժանված են, ըստ որում նախորդների հակառակ այստեղ սկզբում տրված է հայ հեղինակների, ապա օտարների ցանկը։

Մատենագիտության մեջ ընդգրկված են միայն հայերեն եղած (ինքնուրույն և թարգմանական) նյութեր, ըստ որում, հավանական է թվում, որ մատենագիտությունը կազմելիս հեղինակը նշված գրքերի զգալի մասը ձեռքի տակ է ունեցել, այսինքն՝ կազմել է սկզբնաղբյուրից, ինչպես մատենագետներն են ասում՝ *de visu*։

Ցանկում բոլոր նշված հեղինակների պառնակալան երկերը այս կամ այն կերպ բնորոշվում են. կա՛մ երկի նյութն է նշվում, կա՛մ գլուխների (գրքերի) քանակը, կա՛մ ընդգրկած ժամանակաշրջանը և կա՛մ բոլորը միասին։ Ահա մի օրինակ.

1 Ն. Ակինյան Բաղեշի դպրոցը, էջ 294—308 (այստեղ բերված է նաև Այուբյանցի հավելումը «Ազդարարից»), Վյեննա՝ «Հանդես ամսօրյա» 1952, էջ 55—63։

2 Գ. Գալեմբյարյան Պատմություն հայ լրագրության։ Հտ. Ա, Վիեննա, 1893, էջ 205—210։

3 Հ. Անասյան Հայկ. մատենագիտ. հ. Ա, էջ LIII—LVII, (այստեղ ևս բերված է Այուբյանի հավելումը)։

«Ստեփանոս Տարօնեցի, որ կոչի Ասողիկ, Գ. հատոր, սկսեալ յԱրարհամէ մինչև ի մահն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, ի ԴՃԾԲ (1003) թուին» կամ՝ «Մատթէոս Ուռհայեցի, Պատմութիւն աւերման աշխարհիս Հայոց, սկսեալ ԴՃԶ (957) թուէն մինչև ԶՃ (1151) թուականն»:


Երբեմն ծանոթություն է տրվում այն մասին, թե այս կամ այն երկը սկզբնապես ինչ է ընդգրկել և այդ երկի որ պահպանված մասն է կղել ցանկի հեղինակի ժամանակ, այսինքն, ի՞նչ վիճակում է երկը ծանոթ եղել նրան: Ահա խորենացու և Եղիշեի երկերի մասին ասվածը. «Մովսէս խորենացի, հաւաստապատում պառմագիրք, շորս հատոր, սկսեալ յԱղամայ մինչև ի Զենոն կայսրն, որպէս վկայէ Թումաս Արծրունեաց պատմագիրք. բայց այժմս գերիս հատուցն միայն երևի, իսկ շորորորդն ոչ ուրեք գտանի ի սաղրելոյ հերձուածողաց»:
Այսինքն՝ հենվելով Թովմա Արծրունու վկայության վրա՝ ծանոթություն է տալիս այն մասին, որ խորենացու Պատմաւրջունը բացի պահպանված երեք զրգերից ունեցել է նաև շորորորդը, որը սակայն իր օրերում այլևս ոչ մի տեղ չկար (ոչ ուրեք գտանի): Պետք է հասկանալ, որ կազմողը փնտրել է այն շատ գրադարաններում և ոչ մի տեղ չի գտել:

Նույն բնույթի է Եղիշեին նվիրված հատվածը. «Եղիշէ վարդապետ, որ է Պատմութիւն նահատակութեան սրբոց Ղեւդոնդեանցն և Վարդանեանցն: Թէպէտ և զպատերազմունսն սրբոյն Վարդանայ, որ նախ քան զնահատակիլն ըստ պատմագրաց, այժմ ոչ գտանի ուրեք, զոր արարեալ է ևս սրբոյն Եղիշէի»:
Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, նշվում է, որ Եղիշեի գիրքը ունեցել է նաև Վարդանանց պատերազմները պատկերող սկզբի մաս, որը իր՝ ցանկի հեղինակի ժամանակ դարձյալ ոչ մի տեղ չի եղել¹: Հասկանալի է, որ մատենագիտության հեղինակը այս դեպքում ևս մի գրադարանով չի քավարարվել իր եզրակացութիւնն անելիս: Մատենագիտության փոքր-ինչ ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ նրա հեղինակը եղել է շատ գրադարաններում, որոնց գրքային

¹ Որն այժմ էլ:

«Անեցվածքի մանրադնին ուսումնասիրությունից հետո է կազմել իր ցանկը, տվել նրա ժանոթությունները:

Մատենագիտության մեջ հայ հեղինակների բաժնում վերջինը Զաքեոս (Զաքարիա) պատմիչն է, որը այստեղ վերջինն է նաև ժամանակագրական առումով. «Զաքեոս պատմագիրը, Բ հատոր, սկսեալ ղկնի բանից Առաքելին (Դավրիժեցու) մինչև ՌՃԾ (1701) թին»:



Նկ. 3. «Պատմագիրը հայոց» մատենագիտության սկիզբը (Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. № 2271, էջ 213ա)

Մատենագիտության երկրորդ մասը՝ հայերեն թարգմանական հեղինակների ցանկը սկսվում է Հովսեփոս, Սեանոս,

Եվսերբիոս Կեսարացի, Աթանաս Հեղինակներով: Այս ցանկում նկատուի է, որ բացի սովորական պատմագիրներից տեղ են գտել նաև վարքագիրներ, եկեղեցական մատենագիրներ (Հովհան Ոսկերեբան, Աթանասիոս) վարքագրական անհեղինակ երկեր (Հարանց վարք, Յայսմաւորք և այլն), նույնիսկ պարականոն անվավեր համարված գրքեր (Գրոսակ, Կիրակոսակ, Մեկնութիւն Մանեայ և այլն):

Ամեն մի երկի հիշատակութեան հետ ծանոթութիւնն է տրվում, թե ինչ լեզվից է թարգմանված, մեծ մասամբ նշվում են թարգմանիչները, երբեմն՝ թարգմանութեան թվականը, հթե երկը մեկից ավելի թարգմանութիւնն է ունեցել, այդ էլ է նշվում: Օրինակ. «Յովսեփոս. ի Յունաց լեզուէ թարգմանեալ եղև, որոյ պատմութիւնն սկսանի զկնի բանիցն Մակարայեցւոցն մինչև ի՞ն (42) ամն Քրիստոսի, վասն կործանման հրէից և քակման տաճարին: Գիրքս այս նախ թարգմանեալ եղև ի սրբոց թարգմանչացն, և ի անյայտ լինիլն վերստին թարգմանեալ եղև ի լատինացւոց լեզուէ ի ձեռն Ստեփաննոսի Լեհացւոյն, բայց ոչ զամենայն բանս Յովսեփոսի, այլ միայն զութ հատորս ի վիպից նորին»: Այսինքն, թեև V դարում գիրքը հունարենից թարգմանվել է, բայց քանի որ անհայտ է եղել (կորել է՞), ուստի նորից այն թարգմանել է Ստեփանոս Լեհացին: Կամ՝ «Սոկրատ. ի Կոստանդինոսէ սկսեալ մինչև ի մահն Թէոդոսի փոքու, հատորս է (7). զայս ևս ի Յունաց լեզուէ թարգմանեալ եղև, բայց հետոյ ի ժամանակս կաթողիկոսութեանն Անաստասայ, ի խնդրոյ Ներսէի իշխանին, պատմագիրքս այս համառոտեցուցին, զոր այժմ զերկուսն ևս երեւի ի միջի մերում և ունուանի Մեծ Սոկրատ և Փոքրս:

Այսպիսի մանրակրկիտ մատենագիտական ծանոթութիւններ կարող էր տալ հայ գրքի, հայկական գրադարանների շտապագանց հմուտ գիտակը, իսկական մատենագետը: Մանութիւնները ոչ միայն բնագրերի բովանդակութեանն են վերաբերում, այլև հայոց գրադարաններում նրանց լինելու, չլինելու («Երեւի ի միջի մերում»), այս կամ այն վիճակում ու ձևով լինելու խնդրին: Մատենագիտութեան մեջ ծանոթու-

թյուններ կան ոչ միայն հունարենից, այլև ասորերենից, սլաւոնականից, ղպտիերենից, վրացերենից կատարված թարգմանությունների մասին:

Առաջին յոթ անունից հետո ասվում է, որ այդ գրքերը V դարի թարգմանիչների կողմից են (սարգոց թարգմանչացն) թարգմանված:

Մատենագիտության մեջ ժամանակագրական կարգով վերջին թարգմանությունը ունի 1711 թվականը, որ Գևորգ Կոստանդնուպոլսահյուս ձեռքով՝ լատիներենից թարգմանված կաթողիկական մի երկ է՝ նվիրված Հելիսոսոսի և Քաղկեդոնի ժողովներին:

Վերջում կալմոդի վերջաբանն է այն մասին, որ կան նաև ուրիշ թարգմանական երկեր, որոնք կամ իրենց թեմայի, կամ կեղծ («սուտք և առասպելք») լինելու պատճառով «ոչ են ի կարգի պատմագրաց», ուստի և դուրս են թողնվել ցանկից: Ասվում է նաև, որ ժամանակագրական կարգով («կարգաւ իջաք») տրված են թե՛ հայերեն յոնքնուրույն և թե՛ այլ լեզվից հայերենի թարգմանված երկերը: Պետք է ասել, որ ցանկում, ավելի ճիշտ նրա երկուորդ մասում, ժամանակագրությունը շատ է խախտված: Բովսական է նկատել, որ 1711 թվականը կրող հիշյալ թարգմանությունը յոթ ուրիշ, ավելի վաղ շրջաններում կատարված թարգմանություններից առաջ է ընկել:

Այս հանգամանքը մատնացույց է անում մի օտար ձեռքի միջամտություն, որը և նկատել է Ն. Ակինյանը: Նրա կարծիքով ցանկում փոփոխություններ մտցնողը Մովսես Զուլալեցին է եղել, որը 1724 թվին կազմել է այն ժողովածուն, որի մեջ է «Պատմագիրք հայոց» մատենագիտական ցանկը¹:

Բայց նախ տեսնենք, թե ո՞վ կարող էր լինել ընդհանուր առմամբ շատ բարձր գիտական մակարդակով կազմված այս հրաշալի մատենագիտության հեղինակը: Ն. Ակինյանը իրավացիորեն ենթադրում է, որ այդպիսի ցանկը այդ ժամանակ-

ներում կարող էր կազմել միայն մի մարդ՝ Վարդան Բաղի-
շեցին (որի մասին խոսք կլինի ստորև): Քանի որ XVII դարի
երկրորդ կեսում և XVIII-ի սկզբում ոչ ոք այնքան մոտ չի
եղել կանգնած հայկական գրադարաններին, ոչ ոք այնքան
լավ չի իմացել հայ մատենագրությունը, հայ գիրքը և ոչ ոք
պատմական գրքերի այսպիսի մեծ հավաքածու չի ստեղծել
իր ձեռքով և մատենագիտական մեծ աշխատանքով չի զբաղ-
վել այնպես, ինչպես Վարդան Բաղիշեցին:

Ենթադրությունը շատ հավանական է, մանավանդ որ
պահպանվել է Վարդանի կազմած մի ուրիշ հոյակապ մա-
տենագիտություն՝ Ամրդուլու վանքի գրացուցակը, որ որոշ
կողմերով հիշեցնում է մատենագիտական այս աշխատու-
թյունը: Եվ իրոք, «Պատմագիրք հայոց»-ի հեղինակը, Ն. Ա-
կինյանին հետևելով՝ վստահորեն կարելի էր Վարդան Բաղի-
շեցուն համարել, եթե չլիներ Գ. Աբգարյանի բավական լուրջ
առարկությունը¹:

Աբգարյանը մատենագիտությունը Վարդան Բաղիշեցունը
չի համարում այն պատճառով, որ ա) Վարդանը մահացել է
1704-ին, իսկ ցանկում կա 1711-ի թարգմանություն, բ) որ
Վարդանի կողմից կազմված գրացուցակում (Ամրդուլու վան-
քի) Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերը լրիվ են ներկայաց-
ված: Այնտեղ նկարագրված է վանքի գրադարանում պահվող
մի մեծ հատոր, որի մեջ եղել են Փարպեցու, Եղիշեի, Սեբեո-
սի, Ագաթանգեղոսի, Խորենացու երկերի ընտիր օրինակները:
Այդ հատորը, որ ընդօրինակվել և կազմվել է իր՝ Վարդան
Բաղիշեցու հանձնարարությամբ, այժմ գտնվում է Մաշտոցի
անվան Մատենադարանում (ձեռ. № 2639): Գ. Աբգարյանը
նկատում է, որ այդ ժողովածուն ձեռքի տակ ունեցողը չէր
կարող «Պատմագիրք հայոց» մատենագիտության մեջ ասել,
որ Եղիշեի պատմության պատերազմական մասը չկա, «այժմ
ոչ գտանի ուրեք»: Այնուհետև «Պատմագիրք հայոց»-ի մեջ
ճիշտ չի բնութագրվում Ղազար Փարպեցու Պատմության ընդ-

¹ «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4, էջ 72—75:

գրկած ժամանակաշրջանը, որը նույնպես չէր կարող թույլ տալ հիշյալ ժողովածուն ձեռքի տակ ունեցողը:

Այս փաստարկներից առաջինը բնավ ուժեղ չէ, քանի որ Բաղիշեցու մահից հետո 1711 թ. կատարված թարգմանություններ մի ուրիշը կարող էր ավելացնել ճիշտ այնպես, ինչպես դարավերջում ցուցակին Հ. Այուբյանը ավելացրել է «Պատմութիւնք Սինէացոց»-ը, որ թարգմանվել է 1793-ին կամ Մ. Զամչյանի «Պատմութիւն Հայոցը», որի առաջին հատորը լույս է տեսել 1784-ին:

Մինչդեռ հիմնավոր է Գ. Աբգարյանի երկրորդ փաստարկը, որի պատճառով էլ մենք այս մատենագիտությունը իբրև Վարդան Բաղիշեցու հեղինակություն չներկայացրինք, մանավանդ, որ ի նպաստ այդ հեղինակության հայտնված կարծիքը բանասիրական հիմքով չի արված, այլ ուղղակի շատ հավանական կարծիք է, այնինչ հակառուկ պնդումը լրջորեն փաստված է: Այնուամենայնիվ հարցը լիովին սպառված համարել դժվար է, դեռ կան մի շարք երեւոյթներ, ինչպես, օրինակ, այն, թե չէ՞ր կարող արդյոք Վարդան Բաղիշեցին մատենագիտությունը կազմած լինել նախքան Եղիշեի և Փարպեցու երկերի լրիվ օրինակների ձեռքբերումը:

Քանի որ այս ծավալուն մատենագիտությունը 1795-ին «Ազդարարում» տպագրել է Հ. Այուբյանը, ուստի երբեմն էլ սրա անունով է հիշվում այդ ցանկը: Անշուշտ, Այուբյանն այստեղ ինչ-որ չափով հեղինակ է, քանի որ նա մատենագիտության մեջ ավելացրել է յոթ անուն, երեքը հայ պատմիչների բաժնում, չորսը՝ օտար: Ուշագրություն է գրավում այն, որ Այուբյանը շատ լավ պահպանել է մատենագիտության մեջ նյութերի նկարագրության ընդհանուր կարգը, ծանոթությունների բնույթը:

Բանասիրության մեջ Վարդան Բաղիշեցու անվան հետ է կապվում մի այլ ցանկ, որ կոչվում է «Վասն պատմագրաց հայոց» և ընդգրկում է ավելի քան 30 հայ ու օտար հեղինակների անունները՝ սկսած Եվսեբիոս Կեսարացուց մինչև Երե-

միա Չելեպի (XVII դար) ¹։ Այստեղ պատմիչների անունների ուղղակի թվարկում է, և միայն վերջին հեղինակի՝ Երեմիա Չելեպիի երկերն են, որ մանրամասն տրված են, ստացվել է այս հեղինակի անհատական մատենագիտության պես բան։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

Ինչպես տեսանք, Վարդան Բաղիշեցուն վերագրվող «Պատմագիրք Հայոց» մատենագիտությունը բացի հայ պատմիչներից ընդգրկում է նաև օտարազգի տարրեր բնույթի հեղինակների երկեր՝ պատմական, եկեղեցական, վարժագրական և այլն, ուստի և դադարում է զուտ պատմական դրականության ճյուղային մատենագիտություն լինելուց՝ մոտենալով ընդհանուրին։

XVII—XVIII դարերի մի շարք ձեռագրերում կան պահպանված մատենագիտական ցանկեր, որոնք նույնպես ընդգրկում են հայ և օտար տարբեր բնույթի հեղինակների գործեր։ Հատկապես աչքի են ընկնում եկեղեցական նշանավոր մատենագիրների և նրանց երկերի, ինչպես և Հին ու Նոր կտակարանների գրքերը մեկնող հայ և օտարազգի հեղինակների ցանկերը։ Այդպիսիք սովորաբար կոչվում են «Վասն մեկնողաց աստուածաշունչ գրոց», «Վասն համաօտոողաց սուրբ գրոց», և այլն։ Այս կարգի ցանկեր կան, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերում, ինչպես՝ XVII դարում ընդօրինակված թիվ 162, 701, 717, 2264, 2220, 2291, 1425, 1784 և այլն զբաղված ժողովուրդների մեջ։

Համեմատությունները ցույց են տալիս, որ ույդ ցանկերը հաճախ որևէ մատենագիտության տարբերակներ են, այս կամ այն փոփոխությունը կրած. երբեմն ծանոթություններն

¹ Հրապարակված է. Ն. Ակիբյան Բաղեշի դպրոցը, էջ 309—311, «Հանդես ամսօրյա», 1952, էջ 63—65, 2. Անասյան Հայկական մատենագիտ. հտ. Ա, էջ LII—LIII (այստեղ՝ «Որք են պատմագիրք հայոց» վերնագրով),

են փոփոխված, երբեմն տարբեր են վերնագրերը, հեղինակների հաջորդականությունը կամ մի ցանկի մեջ են մտել մի ուրիշ մատենագիտության նյութեր և այլն:

Այս կարգի մի քանի ցանկեր տպագրված են Բ. Կյուլենսերյանի¹, Ֆ. Կոնիբերի² և մանավանդ Հ. Անասյանի կողմից³,

Այս ցանկերից ամենից ավելի հաճախ, թերևս, հանդիպում են այն մատենագիտության տարբերակները, որն սկսվում է Օգոստինոսի Հալկաոնուրյան հրշատակմամբ և այն բանի պատմությամբ, թե ինչպես Հովհան Որոտնեցու ժամանակ Հակոբ վարդապետը կաթողիկ է դառնում և դավանափոխ անում ուրիշ 10 հայ վարդապետների ու թարգմանում Օգոստինոսի դիրքը և այլն: Այնուհետև գալիս է հայերեն եղած եկեղեցական գրականության մի տեսություն: Ֆ. Կոնիբերի ձեռագրադրուցակում այդ տեսությունը տեղ է գտել XVII դարի վերջին կամ XVIII-ի սկզբին ընդօրինակված մի ժողովածուի մեջ և սկսվում է հենց վերն ասված ձևով (ինչպես և մատենագրարանի մի քանի ձեռագրերում): Այս մատենագիտության Բ. Կյուլենսերյանի ներկայացրած տարբերակը նույնպես շուրջ 1700 թվականին ընդօրինակված մի ժողովածուի մեջ է, սակայն այստեղ մատենագիտությունը սկսվում է «Թիւք նուրք գրեանցս, ովք եւ ասացեալ» ցանկով և որպես սրա շարունակություն դալիս է Օգոստինոսի գրքի հետ կապված ծանոթությունը: Այնուհետև այս ցանկն ընդհատվում է («Այսքան բաւ է») Սաղմոսի մեկնիչներով (Վարդան Հաղբատեցի): Այստեղից սկսվում է «Թիւք նուրք գրեանցս» ցուցակը, որ Հովհաննես Սարկավագի մատենագիտության մի տարբերակն է, և դրանից հետո (սյունակ 703) շարունակվում է Օգոստինոսի գրքով սկսված ցուցակը («Անանիա վարդապետ ի Սանահինն»):

1 Բ. Կյուլենսերյան Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից: էջ 699—702:

2 F. Conybeare A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum. London, 1913, էջ 339—340:

3 Հ. Անասյան Հայկական մատենագիտ., հտ. Ա. էջ LVII—LXIV:

Կոնիբերի օրինակում Օգոստինոսով սկսվող ցուցակն ընդհատվում է Առաքել Սյունեցու Աղամզբոմ: Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 8509 ձեռագրերը, որ 1688 թվին ընդօրինակված մի ժողովածու է, այս մատենագիտության ավելի ծավալուն տարբերակ է ներկայացնում: Այստեղ առանձին հատված է նվիրված Գրիգոր Տաթևացու երկերին. ըստ որում, նշվում են նրանց գրության տարեթվերը: Սակայն կան ուրիշ ձեռագրեր, որոնցում այս հատվածը մատենագիտական մի այլ ցանկի կազմում է հանդես գալիս: Օրինակ, Կյուլեսերյանի նկարագրած վերոհիշյալ ձեռագրում Տաթևացու երկերի երկու մանրամասն ցանկ կա, մեկը «Թիւք նուրք գրեանցս» հատվածում, մյուսն Օգոստինոսով սկսվող ցուցակի երկրորդ մասում: Մատենադարանի թիվ 2220 ձեռագրում (էջ 288թ) Գրիգոր Տաթևացու երկերի ցանկը տրվում է Արիստոտելի և Պորփյուրի (այսինքն՝ նուրք գրքերի) մեկնության կապակցությամբ և այլն:

Առհասարակ շատ դժվար է որոշել, թե տարբեր ձևերով պահպանված ցանկերը նախապես ինչ տեսք են ունեցել և թե ինչպիսիք են հղել նրանց նախնական օրինակները:

Օգոստինոսով սկսվող հիշյալ ծավալուն ցանկում, որ շատ տարածված է հղել, մանրամասն տեղեկությունն ունի կան հեղեցական հայտնի հեղինակների (Հովհան Ոսկեբերան, Եփրեմ Ասորի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Որիգենես, Դիլգոր Նյուսացի, Բարսեղ Կեսարացի և այլն) երկերի ու նրանց հայ և օտար մեկնիչների մասին: Այս ցանկը այսօր ի կարող է օգտակար լինել բանասիրության համար իր մի քանի ուշագրավ ժանրերի հետազոտման համար: Միայն այս ցուցակը բավական ցրված է, չկա որոշակի կարգ ու կուռությոն: Նույն անկանոնությունը նկատում ենք եկեղեցական հեղինակներին (մեկնիչներ, համառոտողներ և այլն) նվիրված նաև մյուս մատենագիտական ցանկերում:

Այս բնույթի տարբեր ցուցակների մեջ հատկապես ուշագրավ են հայ հեղինակներին նվիրված մի քանի հատվածներ: Այդպիսին է, օրինակ, Գրիգոր Տաթևացու երկերի մատենագիտությունը, որ գտնում ենք նման ցուցակների մեծ

մասում: Ահա մի կտոր այդ մատենագիտությունից (ըստ Բ. Կյուլեսերյանի օրինակի). Ռի թվին ՊԽԶ (=1397) Գրիգոր Տաթևացին արար զՀարցմանցն՝ մեծ Ժ (10) հատորաւ. Ի ՊՄԴ (=1405) արար զՍողոմոնի Քաղուածուն. ՊՄԶ (=1407) արար զԱմռան հատորն՝ Քարոզգիրքն. ՊՄԷ (=1408) թվին արար զՅորայ Լուծմունքն: Ի սոյն թվին արար և զԼուծումն Արիստագիսի և Գէօրքայ գրչութեան»¹ և այլն: Ինչպես դժվար չէ տեսնել, այստեղ մենք ունենք Գրիգոր Տաթևացու անհատական մատենագիտությունը (պերսոնալիա), ժամանակագրական կարգով տրված և թվականների նշումով: Տաթևացու երկերի մատենագիտության ավելի հանգամանալից տարբերակ ենք գտնում Մաշտոցի անվ. Մատենադարանի մի քանի ձեռագրերում, ինչպես օրինակ, ձեռ. 1784-ի մեջ (էջ 216բ), ուր ցանկն սկսում է Արիստոտելի և Պորփյուրի երկերի Տաթևացու մեկնությունների հիշատակմամբ:



Այն փաստը, որ միջնադարյան ձեռագրերի մեջ հաճախ են հանդիպում հայ և օտար պատմիչների, վարքագիրների, մեկնիչների երկերին նվիրված մատենագիտական ցանկեր, մի անգամ ևս ապացուցում է, որ միջնադարում հայոց մեջ ուսուցման ծրագրում պարտադիր են եղել մատենագիտական որոշակի գիտելիքները:

Ուշագրություն է գրավում, որ սույնի հաճախ հայ պատմիչների հետ տրվում են առհասարակ հայ մատենագրեր, իսկ սրանց հետ՝ օտար հեղինակներից կառավարված թարգմանություններ: Ստեղծվել է հայերեն ևղած գրականության մի ընդհանուր մատենագիտություն, որի իմաստով անհրաժեշտ է դիտվել միջնադարյան հայոց տարբեր կարգի դպրոցներում, համենայն դեպս, կրթվող կամ կիրթ անձանց համար:

1 Բ. Կյուլեսերյան Նույն տեղում, էջ 203:

Այս բանն ավելի պարզ է երևում Ղազար Ջահկեցու (Զմյուռնիայի առաջնորդ, ապա կաթողիկոս 1737—1751 թթ) «Դրախտ ցանկալի» գրքի (1735 թվ. սպագրություն)¹ մի հատվածից, ուր գտնում ենք հայ և ալլազգի հեղինակների նվիրված մի տպագիր մատենագիտություն: Ղազար Ջահկեցին «Դրախտ ցանկալի» գրքում է թիվս փիլիսոփայական, դավանաբանական և բազմաթիվ ալլաբնույթի գիտելիքների հայ աշակերտին տալիս է նաև անհրաժեշտ մատենագիտական գիտելիքներ՝ հայ պատմական, գեղարվեստական, եկեղեցական գրականության մասին:

Ողջ գիրքը մի ուսումնական ձեռնարկ է, ուղղված կաթողիկական քարոզի դեմ, այն գրված է միջնադարյան դասագրքերի մեջ ընդունված հարց ու պատասխանի ձևով. աշակերտը հարցնում է, ուսուցիչը (վարդապետը) պատասխանում («Ասէ աշակերտ» և «Ասէ վարդապետ»):

Քսաներորդ գլխում («Յաւագս յատկութեանց աշխարհին և սրպիսութեանց ուղղափառ ողգիս Հայոց մեծաց») մի քանի բաժիններ մատենագիտական գիտելիքներին են նվիրված: Այսպես մի տեղ² աշակերտը հարցնում է «Ո՞չք են թարգմանիչք և աստուածաբանք բանին կենաց»: Ի պատասխան սրան բերվում է հայ հին մատենագրության մի ամբողջ մատենագիտական տեսություն: Սկսվում է այդ տեսությունը Մեսրոպ Մաշտոցից և հասնում մինչև Հովհաննես Զուղայեցին (XVII դար): Երբեմն բերվում են ճիշտ կամ սխալ կենսագրական փաստեր, վերցված տարբեր հեղինակներից, թրվարկվում են այս կամ այն մատենագրի արած կարևոր գործերը և գլխավորապես՝ երկասիրությունները:

Օրինակ, վերցնենք Դավիթ Անհաղթին նվիրված հատվածը. «Դաւիթն ամենիմաստ անյաղթ փիլիսոփայն, էր և սա յաշակերտաց սրբոյն Մեսրոպայ: Արար զգիրս Սահմանաց,

¹ Դիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի Շարադրեալի Ղազարու Աստուածաբան վարդապետէ Ճահկեցույ, Կ. Պոլիս, 1735:

² Ղազար Ջեմկեցի նշվ. աշխատութ., էջ 621:

և զէակաց, և զՄեկնութիւն Արիստոտելի, և Ներածութեանցն Պորփիրի, և այլ հարցմունս և զպատասխանիս: Եւ զՆերբողեան սրբոյ խաչին զԲարձրացուցէքն»¹ և այլն: Ահա նաև Անանիա Շիրակացուն նվիրված հատվածը. «Անանիա ի Շիրակ գաւառէն, այր բանիբուն և հանճարեղ, գիտօղ յոյժ ամենայն տօմարական արհեստից և աստեղագիտութեանց: Սա գրեաց վասն երկնի և երկրի, վասն ընթացից երկոտասան կենդանակերպից և մոլորակաց և անմոլարից: Սա արար զգիրս վեցհազարեայս ծածուկ խորհրդով: Զսա կոչեաց առ ինքն տէր Անաստաս կաթողիկոսն, զի արասցէ անշարժ տօմարս հայոց որպէս այլոց ազգաց, զոր արար մեծաւ ջանիւ»²:

Այսպես տրվում են թե հայ պատմիչների, թե փիլիսոփաների, թե բանաստեղծների, թե եկեղեցական մատենագիրնե-րի և թե այլ բնույթի հեղինակների անուններն ու նրանց նրկերի մասին տեղեկություններ:

Այնուհետև աշակերտը հարցնում է. «...ուսո՞ ինձ, թե որքա՞ն են պատմագիրք ի մեջ հայոց: Եվ այս անգամ էլ ուսուցիչը քվաքկում է հատկապես հայ պատմիչներին³, սկսում է Ագաթանգեղոսից և ավարտում Ղուկաս Նուրիջանյան Վանանդեցիով (XVII—XVIII դար): Ըստ որում, այստեղ հեղինակները համարակալված են, Ղուկասը 35-րդն է: Այս մատենագիտության մեջ թվարկվում են հեղինակների միայն անունները: Բացառություն է Ղուկաս Վանանդեցին, որի անունից հետո նշված են նաև նրա հրատարակությունները, այդ թվում՝ «Համատարած աշխարհացոյց»-ը (տպ. 1695 թ.):

Իրրև պատմագիր բերված հեղինակների մի մասը տրված է նաև նախորդ մատենագիտության մեջ և այստեղ կրկնվում է (ինչպես՝ Խորենացի, Փարպեցի, Եղիշե և այլն):

Հայ և օտար հեղինակների և առհասարակ հայերեն ինքնուրույն ու թարգմանական մատենագրության ցանկերն ու տեսությունները, յո բավական կատարիչալործվում էին հը-

¹ Նույն տեղում, էջ 623—624:

² Նույն տեղում, էջ 627:

³ Նույն տեղում, էջ 646—647:

նում, շարունակեցին կազմվել նաև հետագայում: Հին և միջնադարյան հայ մատենագիտության հատկապես այս տեսակը լուրջ զարգացում ապրեց XIX դարում, ինչպես նաև մեր օրերում: Այս բնույթի մատենագիտություններ են, օրինակ: 1861 թվին «Բազմավիպում» տպված «Պատկեր հայկական դպրութեան»-ը, Բ. Պատկանյանի «Библиографический очерк древней армянской исторической литературы» (1879), Գ. Զարբհանալյանի «Պատկեր հայ դպրության ըստ յուրաքանչյուր դարուց» («Հայկ. հին. դպր. պատմ.» 1897), «Մատենադարան հայկական թարգմանութեանց»-ը և այլն: Խորհրդային շրջանում նման բնույթի մատենագիտական գործեր են Հ. Պետրոսյանի «Հայ հին և միջնադարյան գրականության բիբլիոգրաֆիա»-ն (1941 թ.) և Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը», որ այս շաբաթի մատենագիտական աշխատություններից լավագույնն է:

ՏԱՂԵՐԻ ԳԱՆՁԵՐԻ ԵՎ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ղազար Զահկեցու վերոհիշյալ գրքում կա նաև մատենագիտական մի երրորդ հատված: Այստեղ¹ էլ աշակերտը ասում է. «Որքանութիւն պատմագրաց մերոց իմացայ. կամիմ զի ասասցես ինձ թէ ո՞րք են գանձասացք և տաղասացքն մեր»: Այս հարցի պատասխանի մեջ թվարկվում են միջնադարյան մի շարք հայ բանաստեղծներ՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև Հովհաննես Թլկուրանցի: Այլ խոսքով, սա էլ հայ բանաստեղծների կամ հայ ճին գեղարվեստական գրականության մատենագիտություն է, ինչպես Զահկեցին է ասում «Որք զծորանս հոգւոյն արբին և երգեցին» «Քաղցր եղանակաւ»: Ահա հայ երգիչների այդ ցանկը.

Գրիգոր Նարեկացին:

Յովհաննէս Պլուպն:

¹ Նույն տեղում, էջ 647:

Ներսէս Կլայեցիին:

Յակոբ Սսեցիին, որ արար Վլուծմունս նուրբ գրոց:

Գրիգոր Ծերենց, որ արար ՎԱյսմաւուրքն:

Առաքել Սիւնեցիին:

Մկրտիչ Նաղաշն:

Խաչատուր Կեչառացիին:

Գրիգոր Կաթողիկոս Աղթամարցիին:

Առաքել Բաղիշեցիին:

Յովհաննէս թովկուրանցիին:

Հասկանալի է, որ մատենագիտական այս կարգի գիտելիքն էլ անհրաժեշտ է համարվել միջնադարյան հայ ուսումնարաններում:

Նույն բնույթի ցանկեր տարբեր ձևավորմամբ ու ընդգրկմամբ կարելի է գտնել նաև ձեռագրերում:

Հայ գեղարվեստական հին գրականության ավելի տարածված մատենագիտության նմուշներ են եղել շարականների՝ հայ հոգևոր երգերի հեղինակների ցանկերը: Գրեթե բոլոր ձեռագիր և հնատիպ շարականոցների (շարականների ժողովածուների) մեջ սկզբում կամ վերջում գտնում ենք այդպիսի ցանկեր: Նրանցում թվարկվում են այն հեղինակները, որոնք ավանդության համաձայն շարականներ են գրել, ըստ որում հաճախ նշվում է, թե ով ինչ շարականներ է գրել: Այդ ցանկերի սովորական վերնագրերն են. «Վասն շարականաց թէ ով ոք է ասացեալ», «Յաղագս շարականաց, թէ յումմէ են երգեալ», «Վասն անուանց յօրինողաց զշարականս» և այլն:

Այս ցուցակները սովորաբար սկսում են Սահակ Պարթևից և Մեսրոպ Մաշտոցից, ըստ որում, առաջինին վերագրվում է ավագ շաբաթի, երկրորդին՝ ապաշխարության շարականները: Ապա շարականների հաջորդ և շատ կարևոր հեղինակ է համարվում Մովսէս Քերթովը, այնուհետև գալիս են Անանիա Շիրակացու, Հովհան Մանդակունու, Կոմիտաս Կաթողիկոսի, Հովհան Օձնեցու, Պետրոս Գետադարձի, Գրիգոր Մագիստրոսի, Ստեփանոս Սյունեցու, Հովհաննէս Սարկավագի, Ներսէս Շնորհալու և այլոց անունները:

Այս ցուցակները, որ շատ հնուց են գալիս, սովորաբար շարականների կաճեցն էին խօսատառում (թե որ շարականներն են եկեղեցու կողմից ընդունելի), որպեսզի ծիսակատարությունների ժամանակ չևրգվեն անընդունելի, կամ, Գրիգոր Տաթևեցու խոսքով, «խոտելի» դիտված շարականները¹։

Առաջին անգամ Շարակեոց տպագրվել է 1664-ին Ամրստերդամի Ոսկանյան տպարանում (տպագրությունն սկսել է Կարապետ Ադրիանացին)։ Եվ այստեղ արդեն, գրքի վերջում դրված է շարականների հեղինակների ցանկ, ըստ որում, յուրաքանչյուր հեղինակի դիմաց նշված է թվական²։ Հեղինակները համարակալված են, ընդամենը այստեղ 17 հեղինակ է։ Հետագայում Շարակեոցի այս հոյակապ հրատարակությունը բազմիցս վերատպվել է, իբրև օրինակելի՝ վերջում եղած մատենագիտական ցանկի հետ միասին։ Ստորև բերվում է շատ տարածված, թեև ոչ շատ հաջող, այդ ցանկը։

Վասն անուանց յօրինողաց զշարականս. որք սկսեալ եղեն ի թուայն Քրիստոսի և այլք ի մերում թուոյ

	Քրիստոսի	հայոց
ա Իսահակ հայրապետ	նժթ	
բ Մեսրոպ վարդապետ	նկը	
գ Յօհան Մանդակունին	նձե	
դ Մօսես Խորենացի և Քերթոզ	նղգ	
ե Անանիա Շիրակացի	շծդ	—ա
վ Կոմիտաս յԱրագածոտնէ	ոիթ	—հլ
է Գրիգոր Սագիստրոս	ոլգ	—ձ
ը Սահակ հայրապետ Չորափորեցի	ոձա	—ճիը
թ Յօհան Օձնեցին	չծը	—ճկե

¹ Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանցում» (տպագր. Կ. Պոլիս, 1729, էջ 637—638) «Ջշարականս ով է ասացեալ» հարցին ի պատասխան տալիս է շարականների և նրանց հեղինակների մի մատենագիտություն, որի վերջում ասում է. «Այսքան շարականս ընդունելի է յեկեղեցի. և անելին քան զայս՝ խոտելի է և անպիտան»։

² Երաժշտական երգեցմունք հոգևորականք..., Ամստերդամ, Ս. էջմիածնի, տպ. 1664, էջ 774։

Ժ Ստեփաննոս Սիւնեցին

Ժա Պետրոս Գետադարձն	ռժը	—նկե
Ժբ Ներսէս Կլայեցին	ռճկթ	—ռժս
Ժգ Ներսէս Լամբրոսացին		
Ժդ Վարդան վարդապետն		
Ժե Գրիգոր Վկայասէր փոքրն	ռճղը	—ոխե
Ժզ Յակօբ Կլայեցին	ռմհ	—չժէ
Ժէ Յօհաննէս Պլուզն	ռյ	—չխէ

Եւ զայս յայլուստ գտաք, զի զաւետեաց պատկերն ևս Մօսէս Խորենացին է ասացեալ: Եւ զաւագ տնօրէնն՝ ևս Ներսէս Կլայեցին: Եւ զհամբարձմանն Ներսէս Լամբրոնացին: Միայն զվեղաք յամենայնին Օձնեցին:

Կան նաև շատ ավելի հոնգամանալից ցանկեր, ինչպես օրինակ, Գրիգոր Տաթևացունը:

Սակայն ձեռագիր, ինչպես և մի քանի տպագիր շարակնոցների մեջ եղած այս կարգի ցանկերը, իրարից հաճախ տարբերվում են և երբեմն՝ շատ զգալի չափով: Մի տեղ եղած անունները մյուսում չկան և հակառակը, մի տեղ շարականների մի տեսակը մի հեղինակի, մյուսում մի ուրիշի է վերագրվում, տարբեր է հեղինակների հաջորդական կարգը և այլն: 2. Անասյանը համեմատելով այս կարգի մի շարք ցուցակներ՝ եկել է այն եզրակացության, որ հիմնականում նրանց երեք խմբագրություն կա ա) Սարգիս երեցի (XIII դար), 18 հեղինակով, բ) Գրիգոր Տաթևացու (XIV դար), 20 հեղինակով և գ) XVII—XIX դարի մի խմբագրություն, 24 հեղինակով¹:

Հետաքրքիր են նաև շարականների հեղինակներին նվիրված ոտանավորները² (Առաքել Սյունեցու և այլոց), որոնք հայ միջնադարյան չափածո մատենագիտության նմուշներ են (մատենագիտության մի տեսակ, որ ունեն նաև այլ ժողովուրդներ):

1 2. Անտոյան Հայկ. մատենագիտ. հո. Ա., էջ XIII.

2 Նույն տեղում, էջ LXIX—LXXIV.

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրական մատենագիտության տարրեր գտնում ենք VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ում: Այստեղ նախաբանում հիշվում են մի քանի աշխարհագրագետ հեղինակներ, որոնցից օգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ինչպես՝ Պապուոս Ալեքսանդրիացին, Պողոմեոսը և Կոստանդին Անտիոքացին¹:

Համեմատաբար ավելի կշիռ է ունեցել տոմարագիտական մատենագիտությունը միջնադարյան Հայաստանում:

Առհասարակ տոմարագիտությունը Հայաստանում զարգացած է հեղել հնագույն ժամանակներից: Նախաքրիստոնեական շրջանում էլ հայերն ունեցել են ամիսների, տոների ինքնուրույն օրացույց: Տոմարագիտությունը զարգացավ նաև քրիստոնեական շրջանում, հատկապես մեսրոպյան դպրության սկզբնավորումից: Հին ու միջնադարյան ամենանշանավոր հայ տոմարագետներն էին՝ Անանիա Շիրակացին, Հովհաննես Սարկավազը, Հակոբ Ղլիմեցին, Ազարիա Ջուղայեցին, որոնք հայկական ինքնուրույն օրացույցների հիմնադիրներ են:

Հայոց մեջ օդտագործվել են նաև այլ ժողովուրդների տոմարներ: Միջնադարյան տոմարագիտական բազմաթիվ ձեռագիր ու հնատիպ ժողովածուներում հաճախ համեմատական կարգով բերվում են հայ և օտար տոմարագիտական աղյուսակներ:

Այդ ժողովածուների մեջ հանդիպում են նաև մատենագիտական ցանկեր, այսինքն՝ տոմարագիտական երկերի ճեղքնակների ցուցակներ: Հայկական տոմարագետներից առաջինը սովորաբար համարվում է Սահակ Պարթևը, հիշվում է Անանիա Շիրակացին, որը Աթանաս կաթողիկոսի հանձնարարությամբ հայոց անշարժ տոմար է կազմել, սակայն կաթողիկո-

¹ Ա. Արամեմյան Անանիա Շիրակացու մատենագրությունը էջ 337--338,

սի մահվան պատճառով պաշտոնական հաստատում այն չի գտել:

Տոմարագիրական ժողովածուներում հանդիպում են նաև օտարազգի տոմարագետների ցանկեր: Օրինակ, Հակոբ Ղրիմեցու կազմած այդպիսի մի ժողովածուի մեջ (XV դար) տեղ է գտել մի ցանկ, որ կոչվում է «Յաղագս թէ յումմէ՝ եղան տումարք ազգաց»: Այստեղ թվարկվում են մի շարք օտարազգի տոմարագետներ՝ Արիսիդես, Ղևոնդես, Որիգինես, Անատոլիս, Նվսեբիոս, Անդրեաս¹ և ուրիշ:

Յուրաքանչյուր հեղինակի անվան դիմաց տրվում է նրա տոմարագիտական աշխատությունը, բացատրվում է աշխատության լեզուն, խոսվում է կազմելու շարժառիթի մասին:

ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԻԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բժշկությունը հին ու միջնադարին Հայաստանում նույնպիսի լավակալի դարգացած է եղել, գրվել են ու թարգմանվել մեծ թվով տարբեր արժեքի բժշկարաններ:

Միջնադարյան Հայաստանում ականավոր բժիշկներ են եղել Մխիթար Հերացին (XII դար), որ գրել է նշանավոր «Ջերմաց մխիթարութիւն» բժշկական աշխատությունը, Գրիգոր Բժիշկը, Ահարոնը, Ամիրդովլաթ Ամասիացին (XV դար), որ գրել է տասը բժշկական աշխատություններ (միջին հայերենով) և ունեցել է բազմաթիվ հետևորդներ և այլն:

Ամիրդովլաթ Ամասիացին ժամանակին ողջ Արևելքում հռչակված բժշկապետ էր, Կ. Պոլսում նա եղել է Սուլթան Մեհմեդ Ֆաթինի պալատական բժշկապետը:

Մեզ համար ներկա առիթով Ամիրդովլաթ Ամասիացին ուշագրավ անձնավորություն է, որպես արևելյան բժշկական ճոխ գրականության մեծ գիտակ և բժշկական գրքերի մեզ

¹ Մաշտոցի անվ. մատ., ձեռ. № 1973, էջ 143ա—145բ:

հասած ամենահին մատենագիտական ցուցակների հեղինակ։ Այն ժամանակներում բարձր մակարդակի էր հասել նաև արաբական բժշկությունը, արաբերեն լեզվով ստեղծվել էր ինքնուրույն և թարգմանական (հունարենից և լատիներենից) մեծ գրականություն։ Հայերեն հարուստ բժշկական գրականության հետ միասին արաբերեն լեզվով եղած գրականության հիմնական մասն էլ քաջ ծանոթ էր Ամիրդովլաթ Ամասիացուն, որ բանասերները դիտել են նրա աշխատությունների մեջ։

Ամասիացուց մեզ ծանոթ երկու աշխատությունները՝ «Օգուտ բժշկութեան»-ը և «Անգիտաց անպէտ»-ը ուշագրավ են նաև իրենց մատենագիտական հատվածներով։

Մատենագիտական ցանկեր, ըստ երևույթին, կլինեն Ամասիացու նաև այլ աշխատություններում, սակայն այդ մասին որոշակի խոսել դժվար է։

«Օգուտ բժշկութեան» նշանավոր աշխատության առաջաբանում Ամիրդովլաթ Ամասիացին խոսում է այն բժիշկ հեղինակների մասին, որոնց գրվածքները ինքը օգտագործել է իր աշխատանքում։ Ամասիացին ասում է, թե իբր ինքը իր թվարկած աշխատություններից քաղվածքներ է արել, կազմել իր բժշկարանը, սակայն իրակսւնում նա սոսկ օգտվել է իր նշած գրականությունից և հանդես եկել իբրև ինքնուրույն հեղինակ՝ օգտագործելով նաև սեփական բժշկական փորձը։

Ահա Ամիրդովլաթ Ամասիացու նշած գրականության ցանկը. «Եւ այլ իմացի՛ր, եղբայր, որ գիրքս մեր խոսքն չէ. առաջի իմաստասիրուցն և բժշկական իմաստասիրուցն և վերջին փիլիսոփայիցն և այս ամէն բժշկացն խօսքն է, որ է Բազարատն, և Գեղիանոսն, և Արճիճանիսն, և Յիւլան, և Արպիասօսն, և Ռուֆոսն, և Դէվճանիսն, և Մասրճուէն, և Յեսուն, և Մասովլային որդին, և Ապուճարեհն, և Մուսեհն, և Մահմատ Զաքարիային որդին, և Սապիթ Կուռանն, և Հունան, և Իսաղն, և Սինային որդին, և Դիասուղն, և Եհաննան և այլ բազում ժողովուրդ, որ ի յայս արուեստս շատ աշխտ-

տել են: Մենք սոցա զգիրքն ընտրել ենք և գրել շատ աշխատանք...»¹,

Ամասիուցու մատենագիտական այս ցանկում հիմնականում նշվում են արաբ բժիշկ-հեղինակներ²: Մինչդեռ «Անգիտաց անսյէտ»-ի առաջաբանում տրվում է հայ բժիշկ-հեղինակների մատենագիտական ցանկ, ահա այն. «Եւ ի յայս բանիցս ասին առաջին բժշկապետքն մեր՝ մեծն Մխիթար բժիշկն, և Ահարոն բժիշկն, և ուրդին նորա՝ Ստեփանոս բժիշկն, և տուհմն նոցա Ճուշին բժիշկն, և Սարգիս բժիշկն, և Յակոբ բժիշկն, և Դեղին բժիշկն, և Սիման բժիշկն, և Վահրամ բժիշկն, որ շատ գրեանք շինեթ էին վասն դեղերուն զաւրութիանն և աւզտութեանն»³:

Այս գրքում, ի դեպ, հիշվում են նաև օտարազգի մի քանի բժիշկներ, ինչպես նախորդ յայնկում նշված, այնպես էլ չնշված, սլլսպես օրինակ՝ Բադրատ, Գեղիոնոս, Դիոսկրիտոս, իրն Պայսուր, Պատի: և այլն⁴:

ԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

Գրացուցակը (կատալոգը) մատենագիտության մի տեսակն է: Նրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ ընդգրկում է որոշակի սահմանափակությամբ գրականություն, կապված հրատարակման կամ պահպանման հանգամանքի հետ: Սովորական մատենագիտության մեջ ընդգրկվում է այնքան գրականություն, որքան որ անհրաժեշտ է լինում կամ հնարավոր է լինում ըստ տվյալ մատենագիտության ծրագրի: Այս դեպքում գրականության ցուցակը չի սահմանափակվում որևէ գրադարանի գրական ունեցվածքով կամ գրչության կենտրոնի և կամ հրատարակչության արտադրան-

1 Ամիրդովլաթ Ամասիացի Օգուտ բժշկութեան: Խմբ. Ստ. Մալխասյանց, Եր., 1940, էջ 7: -

2 Նույն տեղում, Ստ. Մալխասյանցի նախաբանը, էջ Ժզ:

3 Ամիրդովլաթ Ամասիացի Անգիտաց անսյէտ: Հրատ. Կ. Հ. Բասմաշյանի: Վիեննա, 1926, էջ 2:

4 Նույն տեղում, էջ 3:

քով: Ընդգրկվում են ցուցակում այնքան գրքեր կամ այլ նյութեր, որքան որ պետք է ըստ թեմայի կամ որևէ այլ հատկանիշի: Մինչդեռ գրացուցակ ըմբռնումը ենթադրում է գրականության որևէ սահմանափակ քանակ՝ այս կամ այն գրադարանի գրականություն, այս կամ այն հրատարակչության արտադրանք: Գրացուցակները կարող են ընդգրկել և՛ ձեռագիր, և՛ տպագիր գրքեր: Այդպիսով, գրացուցակ է այս կամ այն գրադարանի (մատենադարանի) ձեռագրացուցակը, տպագիր գրքերի ցուցակը կամ գրադարանի և՛ ձեռագիր, և՛ տպագիր մատյանների ընդգրկող ցուցակը, ինչպես նաև տպարանների, հրատարակչությունների գրացուցակները (գրադարանների գրացուցակները այժմ ընդունված է կազմել քարտերով):

Անկասկած է, որ միջնադարյան հայ հարուստ գրադարանները ունեցել են իրենց գրացուցակները: Սակայն ով կարող է իմանալ, թե նրանցից որը ինչ ձևով է կորել: Բոլորովին պատահաբար իսաչիկ վարդապետը մի քարայրի միջից գտել է մի քանի մագաղաթներ, որոնցից երկուսի վրա եղել է Սաղմոսավանքի գրացուցակը՝ կազմված XV դարում¹, Այդ ցուցակը միայն որոշ պատկերացում կարող է տալ այն մասին, թե ինչպիսիք են եղել միջնադարյան հայ գրադարանների գրացուցակները, քանի որ XV դարում Սաղմոսավանքի գրատունը իր մեծությամբ այն ամենախոշոր գրադարաններից չէր, որոնք կային դրանից առաջ և այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի մեջ: Բացի այդ, հիմք կա մտածելու, որ ցուցակում ընդգրկված է Սաղմոսավանքի գրականության մի մասը:

Գրացուցակի վերնագիրն է «Այս գիրք Սաղմոսավանից»։ Այստեղ տրվում են գրադարանի գրքերի անունները, յուրաքանչյուր անվան դիմաց նշվում է օրինակների քանակը, ապա տրվում է նաև գրքի նյութը (թուղթ, մագաղաթ), նըշվում է գրի տեսակը (երկաթագիր, նոսրգիր և այլն)։ Մի շարք դեպքերում տեղեկություն է տրվում նաև գրքի վիճակի մա-

¹ Հրապարակված է՝ «Շողակաթ», գիրք առաջին, 1913, էջ 167—169.

սին՝ մատյանը հի՞ն է, թե նոր, կազմ ունի՞, թե չունի, մի քանի գրքեր մի կազմի մե՞ջ են, թե՞ ոչ և այլն:

Ցուցակն սկսվում է այսպես՝ «Ինն անտառան երկաթագիր օրն մագաղաթ, օրն թուղր: Դ (այսինքն՝ չորս) Ճաշոց: Գ (երեք) Տոնապատնառ: Բ Սարգիս գիրք՝ մեկ՝ ճին, մեկ՝ նոր: Դ Ճառընտիր, Բ-սն (այսինքն՝ երկուսն) երկաթագիր, Ա բռ-լուր և նաւուր» և այլն:

Սա, անշուշտ, գույքագրում է, այսինքն՝ գույքացուցակի դեր ունի (ներկայիս՝ գույքամատյան), բայց անկասկած սրա օղնությամբ նաև սպասարկում է կատարվել, այսինքն ունեցել է նաև արդի գրադարանային գրացուցակի (կատալոգի) դեր: Միջնադարյան թե՛ հայ, թե՛ ավրուպական, ռուսական կամ որևէ այլ երկրի գրադարաններում գրացուցակը հիմնական երկու դեր էր ունենում՝ ա) գրքի պահպանման դեր, այսինքն՝ ծառայում էր իբրև գույքացուցակ, նրանով գրադարանի ունեցվածքը ժամանակ առ ժամանակ ստուգվում էր, կատարում էր ընկալահանձնողական փաստաթղթի դեր և այլն և բ) կատարում էր գրականության մասին այս կամ այն ընթերցողին (մեծ մասամբ մատենապետի միջոցով) տեղեկանք տալու դեր: Ներկայումս գրադարաններում այս երկու պաշտոնները կատարում են երկու տարբեր բնույթի ցուցակներ, առաջինը՝ գույքամատյանը, երկրորդը՝ քարտային գրացուցակները:

Գրադարանային մյուս գրացուցակը, որ հասել է մեզ, շատ ավելի ծավալուն է, բովանդակալից, այն ներկայացնում է Բաղեշի Ամրդոլու վանքի գրադարանի ունեցվածքը և կազմված է հայ խոշոր մատենագետ Վարդան Բաղիշեցու կողմից:

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վարդան Բաղիշեցին ծնվել է խոշո գյուղաքաղաքում, Մանկուց բերվել է Բաղեշի Ամրդոլու վանքը ուսման, Պա-

տանեկությունից աչքի է ընկել մի շարք հին ձեռագրեր վերականգնելով և ընդօրինակելով:

1663 թվականին կարգվում է վանքի առաջնորդ: 1669-ին շրջում է Հայաստանի մոտակա գավառները, լինում է Լիմ անապատում, որն ուներ մեծ գրադարան (ավելի քան 3000 անուն), ապա անցնում է Մշո Ս. Առաքելոց վանքը, ուր տեղի առաջնորդարանից նյութական օգնություն է խնդրում Ամրդուլու վանքի պարտքերը մարելու և վերանորոգումների անելու համար: 1670—71 թվականներին հաջողեցնում է բոլոր պարտքերը մարել, վերակառուցում է վանքի Ս. Ստեփանոսի տաճարը, որ քանդվել էր դեռևս Լենկթեմուրի օրով և, որ ամենակարևորն է, կառգավորում է վանքի գրադարանը: Վարդանը հրավիրում է ժամանակի նշանավոր կաղմարար ու ծաղկող Սահակ Վանեցուն, նորոգել և կազմել է տալիս գրադարանի քայքայված մատյանները:

Այնուհետև Վարդանը կարգավորում է նաև Մշո Ս. Առաքելոց վանքի գրադարանը, կազմել է տալիս այստեղի մի շարք գրքեր:

Վարդան Բաղիշեցին դրամ չի խնայում նաև Ամրդուլու գրադարանը նոր ձեռագրերով հարստացնելու համար: Սակայն նրա բեղմնավոր գործունեությունը միառժամանակ ընդհատվում է պարտքատերերի հալածանքի պատճառով: Վարդանը փախչում է Միջագետք, այնուհետև լինում է Սիրիայում և, որոշ ենթադրությունների համաձայն՝ նաև Կոստանդնուպոլսում, ուր ծանոթանում ու մտերմանում է ժամանակի նշանավոր գիտուն Երեմիա Ջելեպի Քյոմուրճյանի հետ: Վերջինս Վարդանի խորհրդով գրում է իր Օսմանյան և Ստամբուլի պատմությունները, որոնց ձեռագրերը հետո նվիրում է Վարդանին: Տարագրության մեջ Վարդանը սովորեցրել է հայկական գրադարաններում, ուսումնասիրել նրանց ունեցվածքը:

Վերադառնալով Ամրդուլու վանքը՝ Վարդան Բաղիշեցին շարունակում է մշակութային եռանդուն աշխատանք ծավալել: Հատկապես շարունակում է հոգ տանել գրադարանը հարստացնելու մասին: Իր ընդօրինակող գրիչների միջոցով

կիմ անապատի, Ս. Առաքելոց վանքերի գրանոցներում եղած և Ամրդոլում բացակայող գրքերն է ընդօրինակել տալիս և բերում այստեղ: Այնուհետև այդ գործունեությունը ժամկետով՝ ընդօրինակել է տալիս Հայաստանի մի շարք ուրիշ վայրերի գրադարաններում եղած հազվագյուտ գրքեր և ավելի հարստացնում իր տնօրինությունը հանձնված գրադարանը:

Վարդան Բաղիշեցին առհասարակ շատ է ճանապարհորդել, Բացի տարագրության տարիների շրջագայություններից նա տարբեր վայրերում լինելու ուրիշ առիթներ է ունեցել: Եղել է էջմիածնի նվիրակը Տարոնում, ասլա Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցու նվիրակը Ն. Զուղայում: Եղել է Վանում, իսկ 1734-ին՝ Երուսաղեմում:

Իր բոլոր շրջագայությունների ժամանակ Վարդան Բաղիշեցին ամենից ավելի հետաքրքրվել է հայերեն գրքով ու գրադարաններով, նրանց մարտություններով: Նա կարգավորել է շատ գրադարաններ, ասլա նրանցում գտնված ամեն մի նոր ձեռագիր Վարդանի ջանքերով ընդօրինակվել է և իր տեղը գրավել Ամրդոլու գրադարանի մեջ: Վարդանը հատկապես հակում է ունեցել պատմական գրականության նկատմամբ, ավելի շատ ընտրել և ընդօրինակել է տվել պատմական գրքերը:

Վարդան Բաղիշեցու շնորհիվ Ամրդոլու գրադարանում ստեղծանաբար ստեղծվում է պատմական գրականության մի մեծարժեք հավաքածու:

Այդ շրջանում ասպարեզից դուրս էին եկել կամ երկրորդական էին դարձել XI—XIV դարերում հռչակված հայկական բազմահարուստ գրադարաններից շատերը, չէին գործում նախկինում հայտնի համալսարանները, Բաղեշի Ամրդոլու վանքը վերակենդանացնում էր անցյալի փայլուն ավանդները, և ամենից ավելի՝ Վարդան Բաղիշեցու ջանքերով:

«Բանիբուն», «Ճարտասան» և այլ անուններով են հարգանք մատուցում Բաղիշեցուն նրա ժամանակակիցները: Ամրդոլու դպրոցը և գրադարանը սկսում են հռչակվել ողջ Հայքում: Վարդանը նշանավոր ուսուցչապետ էր, դաստիա-

րակ: Նա զբաղվել է նաև գրական աշխատանքով, մեզ է հասել նրա պատմական մի ժամանակագրությունը:

Սակայն Վարդան Բաղիշեցին ամենից առաջ մատենագետ էր և գրադարանային գործիչ ամենախիսկական իմաստով: Նա, կարելի է ասել, հայ իրականության մեջ առաջին անձն էր, որ նախ մատենագետ էր, հետո այլ բան: Պիտք է հիշել, որ այսպիսիք շատ հազվագյուտ են նշել անցյալի հայ կյանքում: Բաղիշեցին եղածներից ամենախոշորն է ու նրա կատարած դերը հսկայական է հայ մշակույթի համար: Բավական է ասել, որ նրա շնորհիվ կորուստից փրկվել են հայ հին հեղինակներից շատերի գործերը, նրան ենք պարտական, օրինակ Ղազար Փարպեցու և Սեբեոսի պատմության մայր ձեռագրերի գոյության համար: Ամրդուլու գրադարանում Բաղիշեցու հավաքած մի շարք ձեռագրեր այսօր Մաշտոցի անվան Մատենադարանի զարդն են կազմում: Վերջապես, Վարդանի կազմած մատենագիտական ցանկերի շնորհիվ այսօր հնարավոր է ճշտել մի շարք մատենագիտական-աղբյուրագիտական բնույթի հարցեր:

Ահա թե ինչպես է գնահատում Վարդան Բաղիշեցուն Ն. Ակիևյանը. «Քչեր գտնված են նախորդ շրջաններու մեջ մատենասերներ, որոնք նույն եռանդով նույնքան գուրգուրանքով վերաբերած ըլլան դեպի գիրք, ինչպես Վարդան Բաղիշեցի: Սիրած է հավաքել գրքեր, աշխատած է օրինակել տալ մատյաններ, պահպանել նախնյաց օրինակությունները, վնասվածները նորոգել, քայքայվածները կազմել»¹:

«Զարմանալի նախասիրությամբ հետամուտ եղած է Վարդան հավաքել իր մատենադարանին համար պատմական գրականությունը և հաջողած է գրեթե լրիվ կազմելու շարքը հին պատմագիրներու, շնորհիվ իր բաղմաշրջության և հետապնդումներու: Ուր հասած է ան, ունչափ գրասիրությամբ մղված է քրքրել եկեղեցիներու պահպանները, վանքերու գրադարանները: Ինչ որ հազվագյուտ հետաքրքրական և պատմական նյութ գտած է, փութացած է օրինակել տալ

1 Ն. Ակիևյան Բաղեշի դպրոցը, 1500—1704. Վիեննա, 1952, էջ 274:

առանց ծախքէ վախենալու: Կհամարիմ, թե որ այս հետապընդումներու արդյունքն է Պատմագիրներու այն ցանկը, որ հասած է մեզի ԺԸ դարին»¹:

«Հեղինակը իր ծանկերը չէ կազմած ի լրո կամ նախնայաց հաղորդած գրական հիշատակարաններե քաղելով, այլ գանոնք,— գոնե մեծագույն մասը,— անձամբ կարդացած ցույց կու տա ինքզինքը: Ան գիտե պատմագիրներու անունները, ժամանակը, պատմագիրքերու բովանդակութիւնը և նկատի առնված ժամանակամիջոցը: Այդ պատմագիրքերը հազվագյուտ էին մինչև Ժէ դար. անոնց ոչ անունները ծանոթ և ոչ պահված տեղերը հայտնի: Առաջին անգամ Ամիրտուղի վանքին առաջնորդի ջանքերով անոնք հավաքվեցան վանքին մատենադարանին մեջ և դարձան հետաքրքրվողներու մատչելի»²:

Վարդան Բաղիշեցին մահացել է 1704 թվականին, թողնելով մի շարք աշակերտներ:

Այժմ երկու խոսք Ամրդուլու գրադարանի գրացուցակի մասին: Այն հետեւյալ վերնագիրն է կրում. «Այսք են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրդուլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետին»:

Վարդան Բաղիշեցունը համարվող երեք մատենագիտական աշխատութիւններէց սա միակն է, որ կրում է հեղինակի անունը: Այս ցանկը գտնվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի № 737 ձեռագրում, որ 1711 թվին ընդօրինակված ժողովածու է³: Ցուցակը 1903-ին հրապարակվել է էջմիածնի «Արարատում»⁴:

Գրացուցակից նախ երևում է, որ Ամրդուլու գրադարանը պատմական գրականութեան թեքում է ունեցել, իսկ սա նշանակում է, որ միջնադարյան Հայաստանում եղել են նաև որևէ թեքում ունեցող (բնագավառային) գրադարաններ: Անշուշտ Ամրդուլու գրադարանը իր գրքային ունեցվածքի քանակով չի


¹ Նույն տեղում, էջ 275:

² Նույն տեղում, էջ 290—291:

³ էջ 223բ—232ա:

⁴ «Արարատ», 1903, էջ 1՝6--189:

կարող համեմատվել անցյալում Հայաստանի մեջ հռչակված Տաթևի կամ Հաղբատի հսկա գրանոցների հետ: Այստեղ գրքերի քանակը մեծ չէ¹, բայց սրա յուրահատկությունն էլ եղած գրքերի կարևորությունն է, հատկապես հայ պատմիչների երկերի ընտիր օրինակների առկայությունը:



Նկ. 4. Վարդան Բաղիշեցու գրացուցակը (Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. № 731, էջ 223բ)

Հստ երևույթին, ցուցակը Ամրդոլում եղած բոլոր գրքերը չէ, որ ընդգրկում է, այլ միայն այսպես կոչված վարդապետական, այսինքն՝ հանձնարարելի, ուսանելի նաև՝ ուսումնական գրականությունը: Հավանական է, դրադարանում եղած լինի այլ կարգի գրականություն, ինչպես, ասենք, աշխարհիկ բանաստեղծությունների ժողովածուներ, բժշկարաններ, աղբարական, ճեփլութայան և կախարդանքների նվիրված գրքեր և այլն, որոնք որպես ոչ վարդապետական, չեն մտել ցուցակի:

Դրացուցակում կա շուրջ երկուհարյուր հոգված, բայց պետք է նկատի ունենալ, որ նրանցից յուրաքանչյուրում հաճախ նշված են տասնյակից ավելի անուն գրքեր:

մեջ: Թեև հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ «վարդապետական» անվան տակ այս ցուցակում գտնում ենք դավանական տեսակետից լուսավորչական եկեղեցու համար մերժելի գրքեր (կաթոլիկական, պարականոն) կամ ասենք՝ «արապի սաղմոսարան», «սուտ քէմիի գիրք»¹ և այլն:

Գրացուցակը որոշ չափով հիշեցնում է Սաղմոսավանքի ցուցակին, թեև շատ ավելի հանգամանալից է: Այստեղ և՛ թվարկվող գրքերից առաջ (կամ հետո) նշվում է, թե յուրաքանչյուր անունից քանի օրինակ կա: Նկարագրվում է նաև գրքերի արտաքինը, ասվում է, թե որ գրքերն են մի կազմի մեջ (սայս ամենայն ի մի տուփ): Կան նաև ժանոթություններ գրքերի բովանդակության վերաբերյալ, հատկապես նշվում է որոշ գրքերի թարգմանական լինելը:

Տպագիր գրքերի դիմաց կա «պասմայ» նշումը, երբեմն նաև՝ «տպագրեալ»: Ահա գրացուցակի սկիզբը.

Ա Նախ Ե (=5) Աստուածաշունչ. որոց հատկութիւն այս Է. Ա. ընտիր և պատուական ոսկով վարդարած. և Բ. խամ գրչագիր կատարեալ, որ մինն է Աբրահամ վարդապետին. և մի այլ մագաղաթեայ կիսատ և մի այլ պասմայ:

Ե Դարձեալ. Բ Սարգիս² գիրք:

Ը Մէկ մեծ Լուծմունք նբրից և արտաքնոց³:

Թ Մէկ մեծ Հարանց վարք ոսկով վարդարած:

Ժ Մէկ Սաղմոսի մեկնիչ Լամբրոնացի:

ԺԱ Մէկ մեծ Մոլութեանց և Առաքինութեանց⁴ ի մի տուփ:

ԺԲ Մէկ Մովսէս⁵ պատմագիրք, որ կայ ի մէջ Է (=7) պատմագիրք. Ագաթսնգեղոս, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազար և Փարպեցոյ և Խոսրովու⁶ և այլն:

1 «Արարատ», նույն տեղում, էջ 186:

2 Սարգիս Շնորհալի:

3 Դրժգոր Տաթևացու:

4 Պետրոս Արագոնացու:

5 Մովսէս Խորենացու:

6 Մաշտոցի անվ. Մատենագարան ձեռ. Պ 737, էջ 323ր:

Գրացուցակում գրքերը խմբավորված են ըստ բովանդակության (այսօրվա խոսքով՝ սիստեմատիկ): Դասակարգման համար ինչ-որ չափով նկատի է առնված գրականության սարկավազյան բաժանումը (ս. գրքեր և նրբեր), շնորհիվ ընդհանրապես գրքերի խմբավորումը յուրօրինակ է: Գրացուցակը 3 մասից է բաղկացած: Առաջին մասում «Աստվածաշնչի» գրքերն են, մեկնությունները, ինչպես նաև հայ պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Թովմա Մեծոփեցու, Մխիթար Այրիվանեցու և այլոց երկերը:

Երկրորդ մասում նուրբ գրքերն են, այն վերնագրված է. «Այժմ գրեմք զկարգ նուրբ գրեանցն, թէ ո՞չք են նուրբ գրեանք»: Ինչպես սովորաբար լինում է նուրբ գրքերի ցուցակներում, այստեղ ևս սկզբում Փիլոն Եբրայեցու երկերն են, այնուհետև գալիս են մյուսներին՝ Դիոնիսիոս, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի, Բարսեղ, Եվագր, իսկ վերջում՝ «Եւ աստ աւարտեցաւ նրբին գրեանց բնաբանն»:

Երրորդ մասը փոքր-ինչ խառն է: Այստեղ կարելի է գտնել Գրիգոր Մագիստրոսի և Ներսես Լամբրոնացու, Կյուրեղ Երուսաղեմցու և Եվագր Պոնտացու գրքերը, Հաճախապատումը, Գրիգոր Տաթևացու Ոսկեփորիկը և այլն:

Այստեղ կան նաև բավական թվով նուրբ գրքեր, որոնք, չգիտես ինչու, իրենց տեղում չեն: Կան պարականոն գրքեր («Սուտ տղայութեան աւետարան»¹): Պատմիչների գրքերը հիմնականում ցուցակի առաջին մասում են, բայց հանդիպում են նաև երրորդում (օրինակ, Բուզանդ²):

Ցուցակն առհասարակ այն տպավորություն է թողնում, որ առանձնացվել են սկզբում պատմիչները, ապա նրբերը, իսկ ցուցակի երրորդ մասը, որ վերջում է կազմվել, որոշակի թեքում կարծես թե չունի:

Այս գրացուցակը հետաքրքրական է նաև նրանով, որ այն մեզ հասած առաջին ծավալուն մատենագիտությունն է, ուր

1 «Արարատ», նույն տեղում, էջ 186:

2 Նույն տեղում, էջ 188:

տեղ եւն զտեղ նաև տպագիր գրքեր: Տպագիր գրքերի քանակն այստեղ մեծ չէ ձեռագիր մատյանների համեմատ, բայց արգեն զգալի է:

Ուշագրավ է, որ գրացուցակում ներկայացված են Հռոմի կաթոլիկական հավատի տարածման տպարանից դուրս եկած այնպիսի գրքեր, ինչպես Թարգմանական «Առաւել պարզաբանութիւն»-ը (1634 թ.), Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն»-ը (1661), Փիրոմալիի «Յաղագս ճշմարտութեան»-ը (1674), Հովհաննես Հոլովի «Զտութիւն հայկաբանութեան»-ը (1674): Առաջին երեք գրքերը խիստ կաթոլիկական բնույթ ունեն. ինչպես ասվեց, ուշագրություն է գրավում այն, որ նրանք եղել են լուսավորչական վանքերում և մոծվել վարդապետական գրքերի գրացուցակի մեջ:

Ցուցակի սկզբում նշված է մի տպագիր «Աստվածաշունչ», բայց չկա թվականը, ըստ երևութիւն, Ոսկան Երևանցուն է (1666 թ.), կա Առաքել Դավրիժեցու Պատմութիւնը (Ոսկանյան տպ., 1669 թ.), Աղուեսագիրքը (Ոսկանյան տպ., 1668):

Հնարավոր է, որ գրացուցակը կազմվելուց հետո աստիճանաբար լրացվել է Վարդանի կամ նրա աշակերտ Հովհաննեսի ձեռքով: Այդպես կարող էր ցուցակը լրացվել մինչև դարավերջ:

Նվ դարձյալ մտորում է առաջանում այն բանի կապակցութեամբ, թե արդյոք Վարդանը չէ՞ր կարող «Պատմագիրք Հայոց» մատենագիտական ցանկը կազմել իր առաջնորդութեան սկզբի տարիներին կամ ամենաուշը՝ 1670 թվականին¹, երբ Ամրդուլ գրադարանը գուցե և դեռ չէր հարստացել Փարպեցու, Նզիրի և ուրիշ պատմիչների երկերի լրիվ օրինակներով: Գուցե և «Պատմագիրք Հայոց»-ը կազմվելու նպատակներից մեկն էլ ցուցակի համաձայն վանքում չեղած (կամ

¹ Մատենագիտութեան մեջ Առաքել Դավրիժեցու Պատմութեան (տպ. 1669-ին) առկայութիւնը մտածել է տալիս, որ ցանկը 1669-ից հետո պետք է կազմված լինի, բայց չի բացառվում նաև, որ ցանկի հեղինակին այդ գիրքը ծանոթ է եղել ձեռագիր վիճակում:

պակասավոր օրինակներով ներկայացված) պատմական գրքերի ձեռքբերումն է եղել:

Ինչ վերաբերում է Ն. Ալիևյանի հրապարակած «Վասն պատմագրաց հայոց» ցանկին¹, ապա այն Վարդան Բաղիշեցունը պետք է լինի թեկուզ այն պատճառով, որ նրանում, ինչպես ասվեց, միայն Երեմիա Չելեպիի երկօրն են մասրամասն թվարկված: Այս կարող է բացատրվել Վարդանի և Երեմիայի անձնական ծանոթության մեջ և նրանով, որ Վարդանը նվեր է ստացել վերջինիս գրքերը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամրդուլու գրացուցակից տեսնում ենք, որ տպագրության առկայությունը հայոց մեջ արդեն իր կնիքն է դնում նաև մատենագիտության վրա, տպագիր գրքերը ձեռագրերի հետ մտնում են ցուցակների մեջ: Սակայն տպագրությունը մատենագիտության բնագավառում ավելի մեծ դեր ունեւր կատարելու, այն, որ ինքը մատենագիտութլււնը ձեռագիր վիճակից վաղ թե ուշ պետք է անցնեւ տպագրի:

Եվ ահա 1710 թվին, հայկական վաղ տպագրության օրրանում՝ Վենետիկում լույս ընծայված մի գրքի մեջ գտնում ենք հայերեն գրքերի առաջին տպագիր մատենագիտությունը:

Ողջ 18-րդ դարում հայկական տպագրության զլխավոր կենտրոնը Կ. Պոլսից հետո մնաց Վենետիկը, ուր 16-րդ դարից մինչև 1800 թ. տպագրվել է ավելի քան 250 անուն հայերեն գիրք: Վենետիկում ամենից ավելի շատ հայերեն գրքեր դուրս են եկել Անտոնի Բարտոլիի տպարանից (մեր հաշվով 123 անուն): Իհարկե, այստեղ հայերեն գրքերը հիմնականում տպագրվել են հայերի, հատկապես Մխիթարյանների պատվերով, բացի այդ, մեսրոպատառ ամեն մի գրքի տպագրությանը միշտ էլ մասնակցել են հայ վարպետներ կամ գրքագրիչներ:

¹ Ն. Ալիևյան Բաղիշի դպրոցը: էջ 309—311:

Բարտուլիի տպարանը հայերեն գրքեր սկսել է տպագրել 1695 թվականից և 18-րդ դարի սկզբին այստեղ բավական թվով հայերեն հրատարակություններ էին. հավաքվել, որոնք պետք էր սպառել: Եվ ահա 1710 թվականին այս տպարանը լույս է ընծայում հաշատուր Առաքելյան էրզրումեցու «Բանք և քարոզք» գրքի առաջին հատորը, որի 1196-րդ էջում տպագրված է մի գրացուցակ հետևյալ վերնագրով. «Շարաքանութիւն և ցուցակ գրոց, որք գտանին մեծագունիւ թուով առ Անտոնիոս Պօռթօլի տպագրիչն ի Վէնէտիկ ի սուրբ Մարիամ Ֆօմօզա ի Քալլէ լօնգա ի ներկայի ամի 1710»:

Այնուհետև թվարկված են Բարտուլիի տպարանից դուրս եկած 11 անուն գրքեր, յուրաքանչյուր գրքի անվանը կից է հանգամանալից ծանոթագրություն (անոտացիա), ուր բացահայտվում է գրքի բովանդակությունը: Վերջում ազդարարվում է հաշատուր էրզրումեցու հրատարակվելիք «Համառօտական իմաստասիրութիւն» գրքի մասին, տրվում է նրա համառոտ բովանդակությունը (այս գրքի երկու հատորը լույս տեսան հաջորդ 1711 թվին):

Հրատարակչական գրացուցակները XIX—XX դարերում հայկական մատենագիտության մի կարևոր մասը կազմեցին, Բարտուլիի այս գրացուցակը, որ, անշուշտ, մի հայի կողմից է կազմված, դրանցից առաջինն է:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ՑԱՆԿԵՐ

Մինչև XVII—XVIII դարերը հայ ձեռագրերի մեջ ավանդաբար շարունակում են ընդօրինակվել նաև միջնադարում տարածված այլ գրացանկեր, այդ թվում Հին և Նոր կտակարանների կանոնական գրքերի ցուցակները, որոնք հատկապես հանդիպում են ձեռագիր «Աստվածաշնչերի» մեջ: Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք գրչագիր «Աստվածաշնչերում» կան կանոն հաստատող այդպիսի ցանկեր:

Երբեմն կանոնական գրքերի ցուցակները կազմված են լինում բավական նշանավոր անձանց կողմից, օրինակ, այդ-

պիսի մի ցուցակ կազմել է Գրիգոր Տաթևացին: Այդ ցուցակը գտնվում է մի գրչագիր Աստվածաշնչի մեջ, որ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում¹: Կա կանոնական գրքերի վարդան Արևելցու թվարկումը²: Գոյություն ունի նաև կանոնական գրքերի չափածո գրված մատենագիտություն, որ պատկանում է Առաքել Սյունեցու գրչին³: Այնուհետև շարունակում են ընդօրինակվել և կազմվել նուրբ գրքերի ցանկեր: Մի շարք տարբերակներով հանդիպում է Հովհաննես Սարկավագի ցուցակը: Տպագրված այդպիսի ցանկերից է Կարմիր վանքի ձեռագրացուցակում Բ. Կյուլեսերյանի կողմից հրապարակված «Թիւք նուրբ գրեանցս» ցանկը, որ տեղ է գտել 1700 թ. ընդօրինակված մի ժողովածուի մեջ⁴: Նրբերի այս ցանկը Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ հղածի համեմատ որոշ տարբերություններ ունի: Հիմնականում հեղինակները, նրանց գրքերը նույնն են, թեև փոքր-ինչ տարբեր են նկարագրությունները: Երբեմն նաև այս կամ այն գիրքը, անունը բաց է թողնված, մի բան, որ սովորական է միջնադարյան ընդօրինակությունների համար: Ամենալուրջ տարբերությունն այն է, որ այս ցանկը ընդհատվում է Արիստոտելի չորրորդ գրքի՝ Աշխարհսց-ի գրառմամբ, թեև այստեղ ևս, ինչպես Այրիվանեցու տարբերակում, Արիստոտելի անվան դիմաց 5 գիրք է նշված: Հինգերորդ գրքի վերլուծութեանց-ի փոխարեն գրված է՝ «Իսկ զվերլուծութեանցն չգտայ»: Ի՞նչ հասկանալ: Արդյոք սա նշանակում է, որ ընդօրինակողի ձեռքին հղած ցուցակի նախնական օրի-

1 Մաշտոցի անվ. Մատ. ձեռ. № 351: Տպված է Մ. Տեր-Մովսիսյանի նշվ. աշխատութ. մեջ, էջ 260—263:

2 Գ. Հովսեփյան Խաղրակյանք կամ Պոռշյանք: Մաս. 2. Երուսաղեմ, 1942, էջ 112:

3 Մ. Տեր-Մովսիսյան նշվ. աշխատութ., էջ 264—266:

4 Բ. Կյուլեսերյան Ցուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանուց և շրջակայից: Սյունակ 702—703: Ցանկի մի տարբերակն էլ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 8509 ձեռագրից հրատարակել է Հ. Անասյանը («Հայկ. մատենագիտ.», էջ XLI—XLII):

նակի մեջ չի՝ եղել նշված այս գիրքը, թե՛ եղել է, բայց ընդօրինակողը նշված մյուս անունների համապատասխան գրքերը գտել է, իսկ այս մեկը՝ ոչ: Գուցե և խոսքը վերաբերում է Մխիթար Այրիվանեցու ճառընտիրում այդ գրքի բացակայությանը: Բանն այն է, որ Արիստոտելի «Աշխարհաց»-ով է ընդհատվում նաև Սարկավազի ցուցակի հիման վրա Այրիվանեցու կողմից 170 օրվա ընթացքում ընդօրինակված այդ ճառընտիրը: Մի խոսքով, ցանկի այս տարբերակը ևս ցույց է տալիս, որ սարկավազյան մատենագիտությունը նախապես ավարտվել է Արիստոտելի այդ գրքով, իսկ շարունակությունը ավելացվել է հետագայում:

Սարկավազյան ցուցակից զատ նուրբ գրքերի ուրիշ ցուցակներ էլ են կազմվել, որոնք սակայն մեծ մասամբ բավական անկարգ են գրականության ընտրության ու դասավորության տեսակետից: Ըստ որում, այս ցուցակների մեջ երևում են այնպիսի հեղինակներ, ինչպես Հովհան Որոտնեցի, Արիստակես Գրիչ¹ և այլն:

Միջնադարյան հայ մատենագիտական աշխատանքի մի տեսակ պետք է համարել նաև ճաշոցների, ատենի ժամագրքերի և այլ ծավալուն գրքերի հաճախ բավական բարդ բովանդակության կազմումը: Հատկապես տարածված է եղել «Յայսմաւորք»-ի (քրիստոնեական հայրերի, գործիչների, գիտունների կենսագրական ակնարկների ժողովածուներ) բովանդակության կազմումը: Այդ բովանդակությունը կենսագրվող անձանց (մարտիրոսների) այբբենական ցանկ է, յուրաքանչյուր անվան դիմաց նշված նրա տեղը «Յայսմաւորք»-ում և ամիսը, երբ պետք է կարդացվի տվյալ կենսագրականը (վարքը): Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերում կան այդպիսի ցանկեր: Մի ժողովածուի մեջ այդ կարգի ցանկն ունի հետևյալ վերնագիրը. «Յանկ է Յայսմաւորքին ըստ այբուբենից վասն դիրեաւ գտանելոյ զպատմութիւն սրբոց մարտիրոսաց զոր և կամեսցիս»²: Սրանից հետո սկըս-

1 Տե՛ս, օրինակ, Բ. Կյուլեսբյան նույն տեղում, սյունակ 697,

2 Մատ., ձեռ. Մ 2271, էջ 220բ—236բ:

վում է բավական ծավալուն ցանկը: Կարևորն այն է, որ այսպիսի ցանկեր ընդօրինակվում էին նաև «Յայսմաուրք»-ների գրքերից առանձին, իբրև ինքնուրույն մատենագիտություն, ավելի ճիշտ, բանալի «Յայսմաուրք»-ից հեշտ օգտվելու համար:

Միջնադարյան ձեռագրերում կարելի է հանդիպել նաև այլ կարգի մատենագիտական աշխատանքներ, որոնք բոլորը ցույց են տալիս հին և միջնադարյան հայ մատենագիտության բազմազան բնույթը:

ՀԻՆ ՑԱՆԿԵՐԻ ԱՐԴԻ ԱՐԺԵՔԸ

Ի՞նչ նշանակություն ունեն այսօր, մեր օրերում մատենագիտական հին ցանկերը: Արդյոք նրանք զուտ պատմական արժեք ունեն, հնում հայոց մեջ կատարված մատենագիտական աշխատանքի հուշարձաններ են լոկ, թե՞ ունեն նաև այսօրվա գիտության համար որոշակի նշանակություն: Պետք է ասել, որ այսպիսի նշանակություն, այն էլ բավական մեծ, այդ ցանկերը իրոք որ ունեն ¹:

Կարելի է շատ օրինակներ բերել, թե ինչպես հին ցանկերի օգնությամբ բանասիրական ճշտումներ են կատարվել, հեղինակներ են ճշտվել, անհետացած բնագրեր հայտնաբերվել:

Բանասիրական նպատակներով մատենագիտական հին ցանկերը հայոց մեջ օգտագործվել են դեռևս անցյալ դարի վերջերից: Օրինակ, Գ. Գալեմքյարյանը Հովհաննես Սարկա-

1 «Մատենագիտություն հայկական մատենագիտության» (Եր., 1963) ձեռնարկի առաջաբանում մենք մի անհաշու արտահայտություն ենք թույլ տվել՝ գրելով, որ մատենագիտական հին ցանկերը այսօր «մեր ընթերցողին օգտակար լինել չեն կարող և չուտ պատմական արժեք ունեն» (էջ 7): Սա ճիշտ չէ այն իմաստով, որ պատմաբան, բանասեր, աղբյուրագետ ընթերցողի աշխատանքի համար այդ ցանկերը այսօր շատ օգտակար կարող են լինել:

վագի ցուցակի շնորհիվ Վիեննայում նստած կարողանում է հայտնաբերել Մխիթար Այրիվանեցու ձառընտիրը, որ գտնւ-վում էր էջմիածնի մատենադարանում: Նա սարկավագյան ցուցակը համեմատում է էջմիածնի մատենադարանի գրա-ցուցակի (Դ. Շահնազարյանի, 1863 թ.) հետ, ինչպես և հիշ-յալ ձառընտիրի մի ուրիշ նկարագրության հետ, որ կատա-րել էր Պողոս Պետրոսյանը 1848-ին: Համեմատությունից բանասերը պարզում է, որ նկարագրված ձառընտիրը պարու-նակում է սարկավագյան ցուցակում նշված նյութերը: Եվ քանի որ այս ցուցակի վերնագրում ասվում է, թե այնտեղ նշված գրքերը Մխիթար Այրիվանեցին 170 օրում ընդօրի-նակել է, պարզ է դառնում, որ այդ ձառընտիր սխալ վերնա-գիրը ստացած ժողովածուն հենց Այրիվանեցու կազմած ձեռ-նարկն է¹:

Հին ցանկերը մի շարք բանասիրական ճշտումների համար օգտագործել է նաև Դ. Ալիշանը², այդ ցանկերի նյութերին իր աշխատություններում հաճախ է դիմել Ն. Ակինյանը, «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության պատմությունը գրելիս հին ցանկերից մեծապես օգտվել է Մ. Տեր-Մովսիս-յանը³ և այլն:

Մեր օրերում խորհրդային գիտնականները նույնպես դի-մում են հին ցանկերին: Ուշագրավ են, օրինակ, Գ. Աբգար-յանի բանասիրական պեղումները հին ցանկերի օգնությամբ: Հենց վերջերս նա վարդան Բաղիշեցուն վերագրվող «Պատ-մագիրք հայոց» մատենագիտության օգնությամբ որոշեց, որ «Պատմութիւն քաղաքին յԱնույ» վերնագիրը կրող և անհայտ հեղինակի գործ համարվող բնագիրը Մխիթար Անեցու կո-րած գիրքն է: Այդ հայտնագործությանը օգնեց այն, որ «Պատ-մագիրք հայոց» ցանկում Մխիթար Անեցու դիմաց գրված էր նույն «Պատմութիւն քաղաքին յԱնույ» վերնագիրը⁴:

1 Տե՛ս «Հանդես ամսօրյա» 1891, էջ 161—167:

2 Օրինակ, «Հայապատում», էջ 64 և այլուր:

3 Տե՛ս նրա հիշատակված աշխատությունը:

4 «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ (հաս. գիտ.), 1964, № 1, էջ 75—77:

Հայ պատմիչներին նվիրված հին ցանկերի օգնությամբ Գ. Արզարյանը նաև ուրիշ ճշտումներ է կատարել Զաքեոս պատմիչի, Գրիգոր Ակներցիի «Պատմութիւն վասն ազգին նե-տողաց» երկի և այլ հարցերի կապակցությամբ¹։

Անշուշտ դեռ ուրիշ շատ ճշտումներ և բանասիրական հայտնագործություններ կարելի է անել մատենագիտական հին ցանկերի օգտագործմամբ։

ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական հին մատենագիտության մեջ նյութերի նկարագրության մի որոշակի կանոն դիտել անհնար է։ ինչպես մեր բերած մի քանի օրինակներից էլ կարելի է տեսնել, այդ ցանկերում գրքերը, բնագրերը սովորաբար ոչ թե նկարագրվել են ըստ հեղինակների ճիշտ անունների և երկերի լրիվ վերնագրերի (նման վերնագրեր շատ երկեր չեն էլ ունեցել), այլ հաճախ նշվել է երկի ընդունված համառոտ անունը (ինչպես, ասենք, Կիրակոսակ, Գործք, Սահմանք, Քերական, Սարգիս գիրք և այլն)։ Ավելի հաճախ, իհարկե, հեղինակները նշվել են, սակայն մեծ մասամբ ոչ լրիվ անուններով, այլ համառոտած, խոսակցական լեզվով օգտագործվող ձևով, ինչպես Փիլոն, Փիլոն իմաստուն (Փիլոն Եբրայեցի), Նիսացի, Նիսացիք (Գրիգոր Նյուսացի), Աստուածաբան, Աստուածաբանք (Գրիգոր Նազիանզացի), Սուրբ Բարսեղ (Բարսեղ Կեսարացի) և այլն։ Հեղինակների առկայության դեպքում էլ նրանց երկերը նշվել են համառոտ անուններով և ոչ միշտ՝ նույն կերպ։

Հաճախ միևնույն հեղինակի անունը տարբեր ցանկերում տարբեր ձև է ստանում, ինչպես՝ Ղերուբնա և Ղերուբնա, Մար Աբաս Կատինա և Մարիբաս, Փառտոս և Փօստոս, Սերեոս, Սերիոս և Սւսերի և այլն։ Հաճախ շփոթված են հեղինակները, ինչպես Մովսես Խորենացին Մովսես Քերթովի հետ, երկու տարբեր Դավիթներ իրար հետ և այլն։

¹ Տե՛ս նաև «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4, էջ 61—76։

Նկարագրության անմիօրինակությունները բնորոշ է նաև ուրիշ ազգերի հին ու միջնադարյան մատենագիտությանը: Ավելորդ չէ հիշել, որ հայկական նոր մատենագիտությունն էլ, որը սկիզբ առավ XIX դարում, նույնպես չափազանց անմիօրինակ է նյութերի նկարագրության տեսակետից, որ, ինչպես դեռ ցույց կտրվի, XIX—XX դարերում արդեն բացասական հետևանքներ էր ունենում: Այդ անմիօրինակությունը և անկանոնությունը մասամբ հաղթահարվեց հայկական մատենագիտական զարգացման խորհրդային շրջանում, թեև դեռ հիմա էլ շատ բան կա անելու նյութերի մատենագիտական նկարագրության լավագույն կանոններ մշակելու ուղղությամբ:

ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՍԵՄԻՆ

Հայ հին և միջնադարյան դպրությունը արդեն XVIII դարի վերջին և XIX-ի սկզբին իր տեղը լիովին զիջում է հայ նոր գրականությանն ու գիտությանը, որոնք, իհարկե, նախորդի շարունակությունն են, նոր դեմքով ու որակով:

Հին դպրության հետ ավարտվում է նաև հին մատենագիտության զարգացումը: XIX դարի կեսերին արդեն երևան են գալիս մի շարք տպագիր մատենագիտական աշխատություններ և ցանկեր, ինչպես, ասենք, էնֆիաճյանների գրատան (Թիֆլիս) ցուցակները (առաջինը 1850 թ.), Վենետիկի Մխիթարյանների տպագրատան առաջին գրացուցակները (1865, 1869), Դանիել Շահնազարյանի ձեռագրացուցակը (1863 թ.), Մ. Մխանասարյանի ցուցակները (1862) և այլն: որոնց վրա նոր ժամանակների կնիքն է դրված:

Հին և միջնադարյան գրավոր մշակույթի և նրա մասը կազմող հին մատենագիտության հետ ասպարեզից դուրս են գալիս նաև միջնադարյան գրադարանները: Այս հանգամանքն արդեն մտածելու տեղիք է տալիս: Եթե ժամանակի փոփոխության հետ գրավոր մշակույթի մի տեսակը փոխարինվում է մյուսով, ապա չէ՞ որ գրադարանը գրքերի հավաքածու է, և այն կարող է միայն լրացնել, հարստացնել նոր սկզբունքներով կազմվող գրադարանները և ոչ թե անհետանալ:

Որոշ դեպքերում այդպես էլ եղել է, ձեռագիր ու հնատիպ մատյանների հավաքածուները լրացվել են նոր գրականությամբ, վերանորոգվել է հին գրատունը, դարձել նոր գրա-

դարան: Կամ հին մատյանները այս ու այնտեղից հավաքվել են ու դարձել մի նորաստեղծ գրադարանի մասը:

Սակայն փաստ է, որ այսօր հայկական ձեռագիր մատյանների թիվը շուրջ 25 հազար է, համեմայն դեպս 30 հազարից չի անցնում: Բայց չէ՝ որ դա մեր միջնադարյան գրատեսերի մեջ եղած գրչագրերի մի փոքր մասն է, երեք չորս խոշոր գրատեսեր միայն այդքան ձեռագիր են ունեցել: Իսկ ի՞նչ, եղան Հաղբատի, Սանահինի, Տաթևի, Նոր Գետիկի և հայոց մյուս համալսարանների ճոխ գրադարանները, ձեռագրերի հսկա հավաքածուներով: Անշուշտ, նրանց մի զգալի մասը բարբարոս արշավանքների ճարակ են դարձել: Արդեն խոսել ենք անցյալում հայ գրքերի խմբային ոչնչացման մասին, կարելի է ավելացնել 1915-ի մեծ եղեռնի օրերին հազարավոր հայ ձեռագրերի ոչնչացումը: Եվ, այնուամենայնիվ, ճիշտ չի լինի, եթե միայն օտարների բարբարոսությունը բացատրենք միջնադարյան Հայաստանի հարուստ մի շարք գրադարանների սահեռացումը, հայ ձեռագիր բազմաթիվ մատյանների կորուստը:

Հետաքրքիր մի հանգամանք. Ստեփանոս Օրբելյանի այն վկայությունը, որ Բաղաբերդում 1170 թվականին սելջուկ թուրքերը Տաթևի վանքի 10.000 ձեռագրերի ոչնչացման պատճառ են դարձել, հիշատակում են միայն վերջին ժամանակներս հայ ձեռագրերի, առհասարակ հայ գրքի պատմությանն անդրադարձած գրեթե բոլոր բանասերներն ու պատմաբանները իրենց ուսումնասիրություններում, հոգևածներում, դասագրքերում: Դա, անշուշտ, մեծ կորուստ է եղել հայ գրքի պատմության մեջ, բայց փաստ է նաև, որ դրանից հետո նույն Տաթևի վանքում ստեղծվեց նախորդից ոչ պակաս ճոխ գրադարան:

Հայ միջնադարյան հոյակապ համալսարանները XV դարից լուրջ անկում ապրեցին, և այնուհետև աստիճանաբար վերացան ապարեզից, միայն այս ու այնտեղ մնացին մի

1 Մենք հաշվեցինք շուրջ քսան գիրք և հոգված, ուր հայ ձեռագրերի պարզ ճակատագրի առիթով բերվում է հենց միայն այս վկայությունը:

քանի գրչության կենտրոններ ու դպրոցներ, տեղ-տեղ, ժամանակ առ ժամանակ շողացին անցյալի ոգով ներշնչված մշակութային կենտրոններ: Ապա հայոց մտավոր կյանքը տեղափոխվեց մայր հայրենիքից դուրս: Իսկ ի՞նչ եղան օտարի բռնությունից փրկված գրադարանները, չէ որ այդպիսիք. այնուամենայնիվ, քիչ չեն եղել:

Օտարների երկարամյա տիրապետությունը, մանավանդ պարսկա-օսմանյան բռնապետությունը Հայաստանի հողի վրա XVI դարից՝ ընկճեց հայ մշակույթի զարգացումը: Հայ գրական և գիտական կյանքը կենտրոնանալով Ասիայի և Եվրոպայի հայկական գաղութներում՝ որոշ չափով նպաստում էր նաև հայրենիքի մարող մշակույթի պահպանմանը: Այդ տեսակետից կարևոր էր հայ տպագրության սկզբնավորումը Եվրոպայում:

Ժամանակին Մերձավոր Արևելքի ամենաթաղկած համալսարաններն ու գրադարաններն ունեցող երկիրը ամլանում է, կարծես կուլ գնում տգիտությանը:

Ահա այդ շրջանում համալսարանների և դպրոցների հիմնական մասի վերացման հետ անօգտագործելի դարձան գրադարաններում կուտակված գրքերի մեծ հավաքածուները, որոնք հաճախ նույնիսկ ավելորդ բեռ էին թվում կիսագրագետ աբեղաներին:

Գրատները սովորաբար մառանների էին վերածվում, գրքերի շարքերին փոխարինում էին գինու կարասները: XVIII դարում արդեն մի շարք վանքեր, ուր ժամանակին շրջել են Հովհաննես Սարկավազի, Գրիգոր Մազիստրոսի, Ծսայի Նչեցու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու նման լուսատուներ, ողորմելի տեսք ունեին, երբեմն մանր դավերի ու տգիտության վայրի էին վերածվում: Այդ վայրերի վիճակը ավելի ողորմելի էր դարձել XIX դարում: Այնտեղ ժամանակին եղած ճոխ գրականության հետքն անգամ գտնել չէր լինում:

Ահա թե ինչպես է նկարագրում Ա. Շիրվանզադեն 1888 թվականին Սանահինի գրատան տեսքը. «...ով գռնհկություն, վանքի ներկա կառավարիչը ի՞նչ բուրբարոսությամբ է վարվում այդ հրաշալի շինության հետ: Այնտեղ, ուր նախնի

միաբանները իրենց հոգևոր պաշտոնությունից ազատ ժամերը նվիրում էին մտավոր կրթության, այժմ մագաղաթյա ձեռագրերի փոխարեն դարսված են ոչխարաց հոտած մորթիներ, յուղով լիբը, սևացած ահագին պղնձե կաթսաներ, խոսավությունից ծաղկած, բորբոսնած տկեր և տկճորներ, կոտրած կուժ ու կուլաներ: Ավելացրեք սրան և մոտ քսան ահագին գետնափոր կարասներ, որոնք մեր այնտեղ եղած ժամանակը դատարկ էին, բայց շուտով պիտի լցվեին վանահոր համար:

Ամոթ եմ համարում ավելի նկարագրել այն աղտոտությունը և զարշահոտությունը, որ տիրում էին այդտեղ: Մեր ամեն մի նկատողության վանքի հոգևոր սպասավորությունից մինը... պատասխանում էր արհամարհական ժպիտով: Նա շատ տարօրինակ էր համարում մեր ասածը, թե մի այդպիսի շինություն, բացի պատմական լինելուց, իր անդուգական գեղեցկությամբ արժանի է, որ ավելի մաքուր պահվի:

— Ի՞նչ հնություն, ի՞նչ գեղեցկություն,— ասաց նա վերջը,— այ թող էս կարասները լցվին, ուրիշ բան հարկավոր չէ մեզ:

Եվ այս ասելիս՝ հոգևոր հոր կարմիր դեմքն և յուղալի աչքերն այնպես փայլեցին, որ վիճաբանել նրա հետ... անկարելի էր»¹:

Միանգամայն պարզ է այն անդունդը, որ գոյություն է ունեցել նույն Սանահինում հոգևոր, մտավոր մեծ կյանքով ապրող գիտունների և մտավոր կյանքի կողմնացույցն ու հոգևոր ամեն մի շահ կորցրած այս հարեցող ու որկրամուլ վանահոր միջև: Այսպիսի թշվառ վիճակի կարող է հասնել հոգեկան ճշմարիտ հենարանը և ազգային ինքնավստահությունը կորցրած մարդը: Այստեղ այլևս ի՞նչ խոսք կարող էր լինել հին գրատների ավանդները պահպանելու մասին:

Շիրվանզադեն նկարագրում է նաև այն, ինչ մնացել էր միջնադարյան Հայաստանի հռչակված Հաղբատի համալսարանից ու ամենաազնված համարված նրա գրադարանից:

«Գրատունը դարձել է մառան և նախկին ձեռագրերի

¹ Ա. Շիրվանզադե նրկերի ժողովածու, հ. 9, եր., 1961, էջ 50:

փոխարեն նա այժմ լցված է գինու կարասներով, ոչխարի մորթիներով, տավարի կաշիներով. հին մագաղաթների խոնավության հոտի փոխարեն՝ այստեղ տիրում է անախորժ գարշահոտություն: Զանգակատունը դարձել է աղավնիների բուն, որոնց աղբը դիզվել է երկու թզաչափ: Իսկ վարժարանը այժմ ծառայում է իբր ախոռատուն և շտեմարան դարմանի, ցորենի, գարիի և այլն: Եվ դա կրթության այն տաճարն է, որ տասներորդ դարից մինչև տասնուչորսերորդ դարը ամենածաղկչալ դրությամբ մեջ է եղել, ուր կրթվել են Գուգարքի ուսումնաստենչ հայ մանուկները: Մեր մատենագրության արծաթյա դարի փայլուն աստղերից մեկը, Հովհաննես վարդապետ «Սարկավագ» կոչվածը այստեղ է մի ժամանակ շարադրել իր երկասիրությունները և այստեղ է նա հայ մանուկների սրտում զարգացրել հայրենասիրական զգացմունքները»¹:

Ներկա առիթով այստեղ ամենից ավելի մի հարց է հուղում. ի՞նչ եղավ գրադարանը, այսինքն՝ գրքերը, ի՞նչ ձևով անհետացավ գրական այն հսկա հարստությունը: Այս հարցի պատասխանը, անշուշտ, բավականին կլուսաբանի առհասարակ հայ միջնադարյան գրադարաններից շատերի անհետացման խնդիրը:

Պատմական աղբյուրներում մի շարք վկայություններ կան տարբեր ժամանակ Հաղբատի վանքի գլխին եկած փորձությունների մասին: Օրինակ, Սամվել Անեցին հիշում է, որ 1105 թվականին թուրքերը գրավում են Հաղբատն ու Սսնահինը և այրում²: Ապա հիշում է 1139-ի ուժեղ երկրաշարժը, երբ վանքը փլվում է³: Բայց հայտնի է, որ այդ ամենից հետո դեռ շատ երկար Հաղբատի գրադարանը անվնաս գոյատևել է: Կան նաև ուրիշ հիշատակություններ այն աստիճանականության մասին, որոնց ենթարկվել է Հաղբատի վան-

¹ Ա. Շիրվանզադե Նույն տեղում, էջ 22—23:

² Սամվել Անեցի Հաւաքմունք ի դրոց պատմադրաց: Վաղպատ, 1893. էջ 121:

³ Նույն տեղում, էջ 132:

քր: Սակայն գրադարանը միշտ փրկվել է: Վանքում եղած գրականությունը ամեն մի վտանգի պահին լիովին տեղափոխվում էր հայտնի քարայրը և ուրիշ թաքստոցներ ու մընում անվնաս:

Բարեբախտաբար պահպանվել է Հովհաննես Սուրենյանի «Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, հիմենայ յարձանագիրս նախնեաց» աշխատությունը: Հովհաննես Ղրեմեցի Սուրենյանը ժամանակին եղել է նփրեմ կաթողիկոսի ատենադպիրը և 1821—1829 թվականներին, երբ կաթողիկոսը գտնվելիս է եղել Հաղբատում, նա նույնպես ապրել է այնտեղ¹:

Սուրենյանը գրում է, որ իր ժամանակ արդեն Հաղբատի ամենահարուստ գրադարանից մի գրչագիր տեսր անգամ չկար:

Նա գրում է, որ Հաղբատի առաջնորդ Զաքարիայի օրոք (1771-ից սկսած) վանքի գրադարանը դեռևս ամբողջությամբ մնում էր: Այնուհետև լոռի են արշավում լեզգիները: Այդ արշավանքների տարիներին վանքի միաբանությունը ապաստանել էր Թիֆլիսում, և Հաղբատը մնացել էր թափուր: Արշավանքներից հետո 1777-ին Հաղբատի առաջնորդ է նշանակվում Աբրահամ Թրակիացին: Որքան էլ այդ զարմանալի թվա, լեզգիների արշավանքների ժամանակաշրջանում Հաղբատի գրքային ողջ հարստությունը անվնաս պահպանվում է ջրաղացի ձորի քարայրի մեջ փակված, իսկ մի մասն էլ նույնիսկ՝ Ս. Նշան եկեղեցու վերնախորանում և Ս. Գրիգորի զանգակատանը²:

Եվ հաճա, երբ արդեն հաստատված էր խաղաղություն, Աբրահամի օրոք տեղի է ունենում սղեւեր: Նոր առաջնորդը կարգադրում է թաքստոցներում ոսկի փնտրել: Պետրոս անունով մի սարկավագ արտակարգ գործունեություն է ցույց տալիս այդ ուղղությամբ. նախ նա գանձ գտնելու մոլուցքով տարված քանդում է վանքի մի շարք ճարտարապետական

1 Տե՛ս «Բաղմավեպ» 1956, էջ 107—110:

2 «Բաղմավեպ», 1956, էջ 109:

հատվածներ: Ոչ մի տեղ գանձ չգտնելով՝ ի վերջո մտնում է ձորի քարայրը և, պատմում է Սուրենյանը, գտնում է այնտեղ. «անհամար գրչագիր և երկաթագիր հնագույն և ընտիր մատենանք մեծամեծք և փոքունք ի յուրվ դարուց ժողովեալք», «Այս այն քարայրն է,— շարունակում է պատմիչը,— առ որ յաճախէր միշտ Յովհաննէս Սարկաւագ վարդապետ լընթերցումն գրոց»:

Անհասկանալի պատճառով առաջնորդ Աբրահամը կարգադրում է ողջ գրականությունը քարայրից տեղափոխել վանք: Սակայն այնքան շատ են լինում գրչագիր մատյանները, որ ամեն տեղ լցնելուց հետո՝ նրանց մի դգալի մասը մնում է շտեղավորված, դրսում: Եվ Սուրենյանը գրում է, որ այդպես ձեռագրերը անուշադրության մատնված մնալով՝ «Օր ըստ օրէ պակասեալ, ցրուեալ և հափշտակեալ ի գողոց և ամենեցունց, որոնց մի անգամ հասին ձեռք»¹: Այդպես աստիճանաբար անտեր թողնված գրականությունը ցրվում է դեռ ու դեռ², փշանում: Բայց դա չէ միայն ողջ այդ գրականության անհետացման ուղին: Սուրենյանը պատմում է նաև, թե ինչպես վերոհիշյալ Պետրոս սարկավազը զանգակատան առջև, բոլորի աչքի առաջ իր հայեցողությամբ այրում էր հնագույն մատյանները «իբրև տասն կամ երկոտասն ոտնաչափ թանձրութեամբ»³:

Ահա, թե ինչպիսի բարբարոսություն է կատարվել խաղաղ մի ժամանակ, օրը ցերեկով և ոչ օտարի ձեռքով: Վայրենի անձինք այդպես ոչնչացնում են, Սուրենյանի խոսքով, «շատ դարերի ընթացքում հավաքված» «գրչագիր ու երկաթագիր, հնագույն, ընտիր անհամար մատյանները, մեծ ու փոքր չափսերի»: Եվ այն էլ այնտեղ, ուր մի ժամանակ ծաղկել է աշխարհի մեծագույն մտավոր կենտրոններից մեկը:

1 Նույն տեղում, էջ 110:

2 Հետաքրքիր է հիշել, որ Ստեփանոս Օրբելյանի պատմելով 1170 թվականին Բաղաբերդի գրավումից հետո ձեռագրերը ոչ թե այրվում են, կամ ոչնչանում, այլ դարձյալ անտեր մնալով՝ ցրվում, կորչում, փշանում:

3 Նույն տեղում:

Այո՛, երբեմն այսպիսի ամոթալի, անփառունակ վախճան է ունեցել Հայաստանում դարեր առաջ այնքան փայլուն սկըսված մշակութային մեծ վերելքը:

Ցավոք, նկարագրվածը եղակի երևույթ չի եղել: Օրինակ, նույն կարգի մի դեպք էլ պատմում է Մեսրոպ Թաղիադյանը իր «Ճանապարհորդութիւն... ի Հայս» գրքում: 1821 թվականին (երբ կաթողիկոսարանը Հաղբատում էր գտնվում), այս անգամ էլ Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ էջմիածնից Հաղբատ է բերվում ողջ դիվանը (երեք բեռ), այսինքն՝ պատմական գրչագիր փաստաթղթերի մի ճոխ գանձարան: Այդտեղից ընտրում են դրամական մի քանի մուրհակներ, և մնացած ողջ դիվանը այրում¹: Եվ այդ բանը կատարվում է այնպիսի մեկի կարգադրությամբ, որը 1814 թվին կոմս Նիկոլայ Ռումյանցեկին գանգատվում է, թե ինչպես են օտար նվաճողները վնասել հայ մշակույթին, կողոպտել հայոց գրադարանները²: Որոշ ոչ օտար նվաճողների պատճառով, ինչպես տեսնում ենք, Հաղբատը բացի հայ մշակույթի փառավոր կենտրոն լինելուց այդ մշակույթի ողջակիզման կենտրոն էլ է եղել:

Կարելի է նման բարբարոսությունների օրինակներ էլի բերել և այն էլ ոչ շատ հեռու անցյալից, սակայն այսքանն էլ բավական է նկատելու, որ հայ մշակույթին հասած ամեն վրնասի պատճառ չէ, որ պետք է փնտրել օտարի բռնությունների մեջ:

Ընդհանրապես, հնուց պահպանված մեր ձեռագրերի մեծ մասի կյանքը փրկվել է կամ հայ բարեպաշտ գեղչուկների կամ վանքերում դեռևս մնացած գիտուն ու ազնիվ մարդկանց շնորհիվ:

1 Մ. Թաղիադյան Ճանապարհորդութիւն... ի հայս: Հտ. 1, Կալկաթա, 1847, էջ 333:

2 Տե՛ս Ներսես Աշտարակեցու նամակը Ն. Ռումյանցեկին:—Մեծի՛ն վաղանայ Բաղդաբեդեցւոյ պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ Ը-Ժ:

Նույնիսկ էջմիածնի մատենադարանը XVIII դարում և XIX-ի սկզբներին շատ թշվառ վիճակում է եղել: XVII դարում էջմիածնի մատենադարանի վիճակը դեռևս բարվոք էր: Փիլիպոս կաթողիկոսի (1633—1655) շնորհիվ այն հարստանում է բազմաթիվ գրքերով: Հակոբ Զուղայեցին (1655—1680) իր հերթին ինչ-որ չափով համալրում է գրքերի այդ հավաքածուն, նշանակվում է հատուկ «գրքապահ», այսինքն՝ գրադարանի տնօրեն (ինչպես, օրինակ, Ներսես Սարկավազը), փոքր ի շատե կարգավորված վիճակում են լինում գրքերը: Սակայն XVIII դարում արդեն շատ վատ վիճակի մեջ ենք տեսնում դեռևս Մաշտոցի օրոք հիմնված այդ հնագույն գրադարանը:

Այդ շրջանում մատենադարանը բավական տուժում է պարսիկների ու շրջակա խաների ասպատակությունների պատճառով: Քանի որ էջմիածնի գրքային հարստությունը այդպիսի ժամանակ անտեբ էր մնում, գրքերը դես ու դեն էին կորչում:

Ծավոք, այդ ժամանակներում խաղաղ տարիներին էլ հագատարություն չի եղել մատենադարանի գանձերի նկատմամբ: Ողջ գրականությունը խառը լցված է եղել մի մութ ու խոնավ նկուղի մեջ, որը միշտ փակ է պահվել: Լուրեր են շրջել, թե այնտեղ գրչագիր ու հնատիպ մատյանների մեջ օձերի ու կարիճների բներ են ամբողջապես: Միայն մեծն Սիմոն Երևանցու օրոք (1763—1780) մատենադարանը նորից կարգի է բերվել, մատյանները կնքվել են, հաշվառման ենթարկվել: Այնուհետև XIX դարի սկզբներին նորից անուշադրության է մատնվել, լիովին բարձիթողի է մնացել ձեռագրերի ու հնատիպերի այդ հավաքածուն: Նույն Մ. Թաղիադյանը պատմում է¹, որ մատենադարանը միշտ փակ է եղել, ոչ ոք չի օգտվել նրա հարստություններից, և միայն տարին մի անգամ բաց են արել, այն էլ այս կամ այն երեկելի ճանապարհորդին ձեռագրերի ցույց տալու համար: Մատենադարանի վիճակը ըստ էության սկսում է լրջորեն բարվոքվել

¹ Մ. Թաղիադյան նույն տեղում, էջ 110:

1837 թվականից երբ մատենապետ է նշանակվում Հովհան-
նես Շահխաթունյանը, որը և կարգավորում է գրականությու-
նը, կազմում հանգամանալից գրացուցակ, հարստացնում
գրականությունը նոր գրքերով:

Այսպիսով, հոյակապ սկսված հայ մատենագիտության և
գրադարանային գործի վերելքը, իր բուռն ծաղկումից հետո
ունեցավ անկման ժամանակներ, իսկ XVIII դարում և XIX-ի
սկզբին մի շարք վայրերում վիճակը շատ վատթարացավ:
Սակայն դա ժամանակավոր երևույթ էր: XIX դարը և մանա-
վանդ XX-ի սկիզբը հայ մատենագիտությանը նոր վերելք
բերեց, դա հայկական նոր մատենագիտության շրջանն էր:
Թեև XIX դարի և XX-ի սկզբի հայ մատենագիտության լավա-
գույն նմուշները, ինչպես ընդհանուր մատենագիտական ցան-
կերը, այնպես էլ ձեռագրացուցակներն ու գրացուցակները
կազմվեցին հայրենիքից դուրս, բայց նրանցում պահպանվե-
ցին Հայաստանի մեջ ստեղծված մատենագիտության լավա-
գույն ավանդները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1

Մաշտոցի անվ. Մատ. ձեռագրեր ՊՊ 126, 177, 351, 462, 582, 701, 717, 737, 1425, 1500, 1784, 1869, 1879, 1973, 2220, 2264, 2271, 2291, 2639, 2961, 3408, 8509:

Արգարյան Գ. Բանասիրական հետազոտումներ:— «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4, էջ 61—76:

Աբգարյան Գ. Մատենադարական նորույթներ:— «Տեղեկագիր» ՀՍԽՀ ԳԱ (Հաս. գիտ.), 1964, № 1, էջ 75—77:

Աբգարյան Գ. Մատենադարան, Եր., 1962:

Արեղյան Մ. Հայոց հին գրականության պատմություն, Գիրք երկրորդ, Եր., 1946 ՝

Աբրահամյան Ա. Հայկական պալեոգրաֆիա, Եր., 1948:

Աբրահամյան Ա. Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, Եր., 1956:

Աբրահամյան Ա. Մատենադարանի ձեռագիր գանձերը, Եր., 1959:

Աբրահամյան Ա. Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և դանիելյան գրերը:— «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145—158:

Աբրահամյան Ա. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944:

«Ազգաբար», Մարդաս, 1795, էջ 188—192:

Ալիշան Ղ. Այրարատ վանետիկ, 1890:

Ալիշան Ղ. Հայապատում: Վանետիկ, 1901:

Ալիշան Ղ. Հուշիկի հայրենյաց հայոց, Հտ. 2, Վանետիկ, 1921:

Ալիշան Ղ. Շիրակ: Վանետիկ, 1881:

Ալիշան Ղ. Սիսուան, Վանետիկ, 1865:

Ակինյան Ն. Բաղենի գպրոցը, 1500—1704, Վիեննա, 1952, նաև՝ «Հանդես ամսօրյա», 1951, էջ 172—238, 289—323, 497—516, 1952, էջ 17—66, 187—212, 404—414:

¹ Ռուսերեն և անգլերեն հրատարակված աշխատությունների վերնագրերը տրված են բնագրի լեզվով:

² Գրքերի էջերը տե՛ս տողատակի ծանոթություններում:

- Ալիբյան Ն. Մատենագիտական հետազոտություններ. քննություն և բնագիր. Հտ. Ա. Վիեննա, 1922.
- Ամիրզովար Ամասիացի Անգիտաց անպէտ. Հրատ. Կ. Հ. Բասմաչյանի. Վիեննա, 1926.
- Ամիրզովար Ամասիացի Օգուտ բժշկութեան. հմբ. Ստ. Մալխասյանց. Եր., 1940.
- Անալյան Հ. Հայոց անձնանունների բառարան. Հտ. Ա—Ե. Եր., 1946—1962.
- Անասյան Հ. Հայկական մատենագիտություն. Հտ. Ա. Եր., 1959.
- «Արտատ», Վաղպատ, 1895, էջ 408, 1903, էջ 178—129.
- Բակունց Ա. հոնարհ աղջիկը.— Երկեր, 1955, էջ 117—129.
- Բերկով Պ. [Рецензия на книгу Н. Эдобнова «История русской библиография»].— «Известия» АН СССР, отд. лит. и языка, 1948, т. 7, вып. 4, стр. 351—358.
- Դալեմբյարյան Գ. Մխիթար Այրիվանեցի և նորագույն գրությունը.— «Հանդես մասորյա», 1891, էջ 161—167.
- Դալեմբյարյան Գ. Պատմութիւն հայ լրագրութեան. Վիեննա, 1893.
- Դիրք Բորոց. Թիֆլիս, 1901.
- Դրիգոր Մագիստրոս Թղթեր. Կ. Կոստանյանի հրատ. Ալեքսանդրապոլ, 1910.
- Դրիգոր Տաթևացի Դիրք հարցմանց. Կ. Պոլիս, 1729.
- Զորբով Ն. История русской библиографии до начала XX века. Изд. 3-е. М., 1955.
- Երաժշտական երգեցմունք հոգևորականք... (Շարականոց). Ամստերդամ, 1664.
- Զարեհանալյան Գ. Հայկական հին դպրության պատմություն. Վենետիկ, 1886.
- Զարեհանալյան Գ. Մատենադարան հայկական թարգմանությունց նախնայաց. Վենետիկ, 1889.
- Թադիաղյան Մ. Ժանապարհորդութիւն Մեսրոպայ Դ. Թադիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ էջմիածնի ի Հայս. Հտ. առաջին. Կալկաթա, 1847.
- Լալայան Ե. Բորչալուի գավառ.— «Ազգագրական հանդես», 1901, էջ 271—436.
- «Լուսմա». Թիֆլիս 1900, 1901, հավելվածներ.
- Խաչիկյան Լ. Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները.— Երևանի պետ. համալս. «Գիտ. աշխատութ.» Հտ. 23, Եր., 1946, էջ 423—450.
- Խաչիկյան Լ. Ժ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Եր., 1950.
- Խաչիկյան Լ. Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Մասն առաջին, Եր., 1955, մասն երկրորդ, Եր., 1958.
- Խաչիկյան Լ. Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը.— «Պատմաբանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145—158.
- Կիրալես Գաճաղեցի Պատմություն Հայոց. Եր., 1961.

- Կյոպեմեյան Բ. Ցուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանուց ու շրջակայից: Անթիլիաս, 1957:
- Կոզմին Բ. [Рецензия на книгу Н. Здобнова «История русской библиографии»].— «Советская книга», Москва, 1948, № 7, стр 102—106.
- Կոնիքեր Յ. A. Catalogue of the Armenien Manuscripts in the British Museum. London, 1913.
- Կրտափկյան Լ. Մատենագիտության հիմունքները: Եր., 1963:
- Կարյուն Պատմութիւն վարուց Ս. Մաշտոցի: Վիեննա, 1952:
- Հաճեցան Ս. Հայոց աշխարհի գրչագրերի ամենահարուստ մատենադարանի՝ «Հաղրատի Ս. Նշան վանքի» ողբերգական վախճանը...:— «Բազմավեպ», 1956, էջ 107—110:
- Հովհաննես Դաւթլեանեկեազցի Պատմութիւն Հայոց: Թիֆլիս, 1912:
- Հովսեփյան Գ. Խաղբակյանք կամ Պոռչյանք: Մասն Բ, Երուսաղեմ, 1943. Մասն Գ. Նյու-Յորք, 1942/3:
- Հովսեփյան Գ. Հիշատակարանք ձեռագրաց, Հտ. Ա. Անթիլիաս, 1951:
- Հովսեփյան Գ. Մատենադարանները հին Հայոց մեջ:— «Պայքար», 1946 (Նոր տարվա բացահիւ), էջ 7—11:
- Հովսեփյան Գ. Մի էջ հայ արվեստի և մշակութի պատմությունից: Հալեպ, 1930:
- Հովսեփյան Գ. Մխիթար Այրիվանեցի. նորագոյտ արձանագրություն և հրկեր: Երուսաղեմ, 1931:
- Ղազար Զաւկեցի Գիրք աստուածարանական, որ կոչի Դրախտ ցանկալի. Կ. Պոլիս, 1735:
- Ղազար Փարպեցի Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան. Թիֆլիս, 1907:
- Ղաֆաղարյան Կ. Հաղրատ: Ճարտարապետական կառուցվածքները և վիճակն արձանագրությունները: Եր., 1963:
- Ղաֆաղարյան Կ. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները: Եր. 1957:
- Մատենագիտություն հայկական մատենագիտության: Եր., ՀՍԽՀ Ա. Մյասնիկյանի անվ. գ-րան, 1963:
- Մխիթար Այրիվանեցի Պատմութիւն ժամանակագրական: ՍՊԲ, 1867:
- Մովսէս Խոփեանցի Պատմութիւն Հայոց: Տիֆլիս, 1913:
- Մովսէս Կազեմկաթովցի Պատմութիւն Աղուանից աշխարհի: Մոսկվա 1860:
- Մովսիսյան Ա. Հայագիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը:— Երևանի պետ. համալս., «Գիտ. աշխատութ.», 1940, Հտ. 13, էջ 363—464:
- Մովսիսյան Ա. Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության: (10—15 դարեր): Եր., 1958:

Նոր բառագիրք հայկազեան լեզուի: Հտ. Առաջին, Վենետիկ, 1836: Հտ. երկ-
րորդ, 1837:

Երվանդադե Ալ. Լոռվա ձորերում:— Երկերի ժող., Հտ. 9, Եր., 1961, էջ
7—25:

Շողակաթ, գիրք առաջին, Վաղպատ, 1913, էջ 167—169:

Ջալոյան Վ. Армянский ренессанс. Ереван, 1963.

Պալեյան Ա. Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայո: Վիեննա,
1878:

Պիվազյան Է. Նախամաշտոցյան հայ գրի, գրականութեան հարցի շուրջը:—
«Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 153—170:

Սամվել Անեցի Հաւաքմունք ի գրոց պատմագրաց: Վաղպատ, 1893:

Սեբեոս Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակւն: Թիֆլիս, 1913:

Ստեփանոս Աստղիկ Պատմութիւն տիեզերական: ՍՊՐ, 1885:

Ստեփանոս Օրբելյան Պատմութիւն նահանգին Սիսական: Թիֆլիս, 1910:

Վարդան Արեւելցի Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ պատմութիւն տիե-
զերական: Մոսկվա, 1861:

Տեր-Մկրտչյան Կ. Մի հատված Որոգենեսի գրվածքներից և Պառնոս լայն
և նուրբ գրոց ձեռագիրը:— «Արարատ», 1895, էջ 146—148:

Տեր-Մովսիսյան Մ. История перевода Библии на армянский язык.
СПб, 1902.

Քոլանջյան Ս. Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը:—
«Էջմիածին», 1962, թիվ 2, էջ 26—36, է, էջ 16—31, Ը, էջ 33—39:

Օրմանյան Մ. Ազգապատում: Մասն առաջին, Կ. Պոլիս, 1912, մասն երկ-
րորդ Կ. Պոլիս, 1914, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Մուտք	3
Հայկական մատենագիտությունը V—VIII դարերում	11
Հնագույն շրջան	11
Հինգերորդ դար	14
Մերժելի և ընդունելի գրքերի մատենագիտություն	22
Մածուկ և սուտ գրքերի ցուցակներ	23
Ընդունելի (կանոնական) գրքերի ցուցակներ	30
Մշակույթի մեծ վերելքը Հայաստանում. գրադարաններ, մատենագիտություն	36
Գրադարաններ	41
Ձեռագրացուցակներ	65
Հովհաննես Սարկավազի մատենագիտական աշխատանքը	66
Գրիգոր Արասի որդի	80
Մխիթար Այրիվանցի	86
Պիղնադարյան եայ մատենագիտությունը զարգացման այլ ուղիներ	96
Պատմիչների մատենագիտություն	96
Ընդհանուր բնույթի մատենագիտական ցանկեր	110
Տաղերի, գանձերի և շարականների մատենագիտություն	116
Տոմարագիտական և աշխարհագրական մատենագիտություն	120
Բժշկական գրականություն մատենագիտություն	121
Գրացուցակներ	123
Վարդան Բաղդիշեցի և նրա մատենագիտական աշխատանքը	125
Առաջին հայերեն տպագիր մատենագիտությունը	134
Մատենագիտական այլ ցանկեր	135
Հին ցանկերի արդի արժեքը	138
Նյութերի նկարագրություն	140
Խոր շրջանի տեմին	143
Օգտագործված գրականություն	152

Տեխ. խմբագիր՝ Հ. Մառտիրոսյան
Վերահսկող սրբագրիչ՝ Ա. Գևորգյան

ՎՖ 06210

Գատվեր 2087

Տիրած 1800

Հանձնված է արտագրության 5/V 1944 թ.

Մատրագրված է տպագրության 15/VII 1944 թ.

Թուղթ՝ 64X108¹/₃₂ Տպագր. 10 մամ. հրատ. 6,5 մամ.

Գինը՝ 40 է.

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
Պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան,
Երևան, Բումանյանի պ. № 51, 1964 թ.



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035410

ԳԻՆԸ 40 ԿՈՔ

